

PARLIAMENT
MONITORING

ՍԵՊՏԵՄԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ | 2012

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՄՈՆԻՏՈՐԻՆԳ**
5-րդ ԳՈՒՄԱՐՈՒՄ



Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան



«ՄԱՆԴԱՏ» լրեղեկատվական հասարակական կազմակերպություն

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

5-ՐԴ ԳՈՒՄԱՐՈՒՄ | ՍԵՊՏԵՄԵՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ | 2012

Սույն զեկույցում տեղ գրած տեսակետների և վերլուծությունների հեղինակը «Մանդար» տեղեկատվական հասարակական կազմակերպությունն է, որն էլ միայն պատասխանատու է նյութի բովանդակության համար: Դրանք արտահայտում են հեղինակների կարծիքը և հաստատված չեն Բայ հասարակության հիմնադրամներ - Հայաստանի կամ նրա խորհրդի կողմից, հեղինակներ չեն ներկայացնում Բայ հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումներն ու տեսակետները: Սույն ուսումնասիրության բովանդակությունը կարող է չհամընկնել Բայ հասարակության հիմնադրամներ - Հայաստանի տեսակետներին: Զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Բայ հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ ԶԼՄ-ների աջակցման ծրագրի շրջանակներում, դրամաշնորհ N18094:

«Մանդատ» ՀԿ-ն ներկայացնում է 5-րդ գումարման Ազգային ժողովի առաջին երկու նստաշրջանների գործունեության դիտարկման արդյունքները: Ամփոփումը կազմվել է լրագրողական դիտարկումների, փորձագիտական վերլուծությունների և parliamentmonitoring.am կայքի վիճակագրական ծրագրի տվյալների համադրմամբ: Զեկույցը կազմված է 5 բաժնից: Առաջին բաժնում ներառված են 2012 թ. մայիսի 6-ի ընտրությունների արդյունքներով ձևավորված խորհրդարանի կազմի, գործունեության ընդհանուր միտումների, խմբակցությունների օրենսդրական նախաձեռնությունների, ակտիվության մասին տվյալներ:

«Օրենսդրություն» բաժնում ներկայացված են աշնանային նստաշրջանի ընթացքում ընդունված և առավել մեծ հանրային հնչեղություն ստացած օրինագծերի ու օրենսդրական փաթեթների դիտարկման արդյունքները՝ կատարված լրագրողական և փորձագիտական աշխատանքների համադրմամբ: Յուրաքանչյուր օրենքի վերաբերյալ ներկայացվել է խորհրդարանական քննարկման ընթացքը, խմբակցությունների արտահայտած դիրքորոշումները համեմատվել են ծրագրային մոտեցումների հետ, տրվել փորձագիտական գնահատականներ:

«Աժ վերահսկողությունը» բաժնում անդրադարձ է կատարվել Աժ վերահսկողական գործառույթներին: Դիտարկվել են նստաշրջանի ընթացքում ներկայացված հաղորդում-հաշվետվությունները՝ օրենքով սահմանված ընթացակարգերի և խորհրդարանական քննարկումների արդյունավետության տեսանկյունից:

Չորրորդ բաժնում ամփոփվել է 5-րդ գումարման Ազգային ժողովում իր գործունեությունը սկսած էթիկայի հանձնաժողովի աշխատանքի արդյունքները:

Զեկույցի վերջին՝ «Հավելված» բաժնում ներառված են օրենքների փորձագիտական վերլուծությունները:

Փորձագիտական խումբ

Գոռ Աբրահամյան
Վիլեն Խաչատրյան
Աննա Մակարյան



ՑԱՆԿ

5-րդ գումարման Ազգային ժողովը	4
Քաղաքական ներկայացվածությունը	4
ԱԺ խմբակցությունները	8
ԱԺ օրենսդրական գործունեությունը	20
Նվազագույն աշխատավարձ	20
Բյուջե 2013	25
Հարկային փաթեթներ	30
Կուրակային կենսաթոշակ	36
ԱԺ կանոնակարգ	40
ԱԺ վերահսկողությունը	43
ԱԺ էթիկայի հանձնաժողովը	46
Հավելված	50



5-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Յուրաքանչյուր խորհրդարանի աշխատանքի արդյունավետությունը չափվում է երեք հիմնական՝ օրենսդրական, վերահսկողական և ներկայացուցչական գործառույթների իրացման աստիճանով: Խորհրդարանի աշխատանքի արդյունավետությունը բարձր է այնքան, որքան համաչափ և նպատակային է այս երեք գործառույթների իրականացումը:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Հինգերորդ գումարման Ազգային ժողովը ձևավորվել է 2012 թ. մայիսի 6-ին կայացած ընտրությունների արդյունքում: Խորհրդարանն ունի վեց խմբակցություն, որոնցից 5-ը ներկայացված է եղել նաև չորրորդ գումարման խորհրդարանում:

Խմբակցություններից երկուսը՝ ՀՀԿ-ն և ՕԵԿ-ը, 2012 թ. մայիսի 31-ին սպորադիկ են կոալիցիոն նոր համաձայնագիր՝ վերահաստատելով 2008 թ. կոալիցիոն համաձայնագրով ամրագրված քաղաքական համագործակցության շարունակականությունը և նախագահական ընտրություններում միասնական թեկնածուով հանդես գալու որոշումը: Աժ խմբակցություններից երեքը՝ ՀԱԿ-ը, ՀՅԴ-ն և «Ժառանգությունը», հայտարարել են ընդդիմադիր լինելու մասին: ԲՀԿ խմբակցությունը չի ընդգրկվել կոալիցիայի մեջ և չի հայտարարել ընդդիմություն լինելու մասին:

Աժ 5-րդ գումարման 131 պարզամավորներից 71-ը եղել է նախորդ՝ 4-րդ գումարման պարզամավոր: Խմբակցություններում չընդգրկված պարզամավորները խորհրդարանում 2-ն են, կանայք 15-ն են՝ նախորդ 11-ի փոխարեն: 5-րդ գումարման Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը խորհրդարանը ղեկավարել է նաև 4-րդ գումարման ընթացքում:

5-րդ գումարման Ազգային ժողովը 2012թ. ընթացքում գումարել է 2 հերթական, 3 արտահերթ նստաշրջան, որոնցից 2-ը՝ կառավարության, 1-ը՝ պարզամավորների նախաձեռնությամբ: Ընդունել է 94 օրենք. 3-ը մայր օրենքներ են, մնացածը՝ փոփոխություններ և լրացումներ գործող օրենքներում: Ընդունված օրենքներից 89-ի հեղինակը կառավարությունն է, 5-ինը՝ Աժ պարզամավորները: 32 օրենք ընդունվել է արտահերթ նստաշրջանների ընթացքում (8-ը՝ հունիսի 21-22, 24-ը՝ դեկտեմբերի 17-19): 11 օրենք ընդունվել է հատուկ կարգով (երկրորդ ընթերցմամբ քննարկումը կազմակերպվել է առաջին ընթերցմամբ ընդունումից հետո՝ 24 ժամկա ընթացքում), բոլորն էլ՝ դեկտեմբերին հրավիրված արտահերթ նստաշրջանի ընթացքում:


Ընդունված օրենքների գերակշիռ մասը՝ 70-ը, վերաբերում են սոցիալ-տնտեսական ոլորտին: 1 օրենսդրական նախաձեռնություն (ՀՅԴ խմբակցության պարզամավորների հեղինակած օրինագիծը՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին) քննարկվել և քվեարկությամբ մերժվել է խորհրդարանի կողմից:

Աժ-ն ի գիտություն է ընդունել 5 ծրագիր և հաղորդում:



5-րդ գումարման ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ


Օրենսդրական նախաձեռնություններ




Օրինաստեղծ աշխատանքում, ինչպես նաև քաղաքական որոշումների վրա ներգործության տեսանկյունից խորհրդարանի նախաձեռնողականության մակարդակը նախորդի համեմատ նվազել է: Եթե չորրորդ գումարման խորհրդարանում օրենսդրական նախաձեռնությունների կառավարություն-Աժ տոկոսային հարաբերակցությունը 86/14 էր, ապա այս Ազգային ժողովում, երկու նստաշրջանների կտրվածքով, 94/6- է:

5-րդ գումարման Աժ առաջին երկու նստաշրջաններում խորհրդարանական մեծամասնությունը՝ ՀՀԿ-ՕԵԿ կոալիցիոն փանդեմը, դեմ է արտահայտվել քվեարկված օրինագծերի ընդամենը 1 տոկոսին: Սա նշանակում է, որ կոալիցիոն մեծամասնությունը գրեթե կափարյալ համաձայնություն ու ներդաշնակություն է հանդես բերել կառավարության իրականացրած քաղաքականության նկատմամբ:

ՀՀԿ-ի և ՕԵԿ-ի քվեարկությունների պատկերը



Ընդունված օրինագծերն ըստ ոլորտների





5-րդ գոխարման Ազգային ժողով

Ըստ հարցերի ու ելույթների* վիճակագրության դիտարկված ժամանակահատվածում ամենաբարձր ցուցանիշն արձանագրել է ՀՀԿ խմբակցությունը (151 հարց ու ելույթ), ամենացածրը «Ժառանգության» արդյունքն է (28 հարց ու ելույթ): Սակայն ակտիվությունը խմբակցությունների պարզամավորների քանակի հետ համադրելիս ստացվում է, որ ՀՀԿ պարզամավորների յուրաքանչյուրը միջին հաշվով հարց փակ կամ ելույթ ունեցել է 2 անգամ, իսկ «Ժառանգության» պարզամավորները՝ մոտ 5.6 անգամ: Այս համադրությամբ խորհրդարանում ամենապասիվը եղել է ԲՀԿ-ն, իսկ ամենաակտիվը՝ ՀՅԴ-ն:

Դիտարկված նստաշրջանների ընթացքում խորհրդարանը չի օգտվել առանձին խնդիրների ուսումնասիրման և իրողությունների բացահայտման նպատակով ժամանակավոր հանձնաժողովներ ձևավորելու իր իրավունքից:

5-րդ գոխարման Ազգային ժողովում 2012 թվականի ընթացքում

- ▲ ձևավորվեց առաջին Էթիկայի հանձնաժողովը,
- ▲ հրապարակվեց ԱԺ Էթիկայի ժամանակավոր հանձնաժողովի որոշումը ԱԺ պարզամավոր Սամվել Ալեքսանյանի վերաբերյալ,
- ▲ կառավարության նախաձեռնությամբ հրավիրված արտահերթ նստաշրջանի ընթացքում փոփոխություն կատարվեց ԱԺ Էթիկայի հանձնաժողովի կազմավորման կարգում,
- ▲ քաղաքական մեծամասնության բոյկոտի պարճառով չկայացավ փոքրամասնության նախաձեռնած արտահերթ նիստը,
- ▲ ԲՀԿ խմբակցության պարզամավոր, նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանին պարզամավորական անձեռնմխելիությունից զրկելու մասին գլխավոր դատախազի միջնորդությունը բավարարվեց,
- ▲ աշնանային նստաշրջանի մեկնարկին 3 պարզամավոր (Ռուբեն Հայրապետյան, Սամվել Բալասանյան, Րաֆֆի Հովհաննիսյան) հրաժարվեց մանդատից,
- ▲ «Ժառանգություն» խմբակցությունը կազմող կուսակցությունները («Ժառանգություն» և «Ազադ դեմոկրատներ») հայտարարեցին խորհրդարանում անջատ գործելու մասին,
- ▲ մեծությամբ երկրորդ խորհրդարանական ուժը՝ ԲՀԿ-ն, հայտարարեց ոչ իշխանություն, ոչ ընդդիմություն լինելու մասին՝ հռչակելով իրեն այլընտրանք:

5-րդ գոխարման ԱԺ խմբակցությունների ֆինանսական հնարավորությունները (ըստ ԿԸՀ ներկայացրած հայտարարագրերի)


Ընտրական օրենսգրքի համաձայն՝ պատգամավորության թեկնածուն Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացնում հայտարարագիր ընտրություններին նախորդող փարվա ընթացքում ձեռք բերած գույքի և եկամուտների մասին: Հայտարարագիրը ներառում է փվյալներ թեկնածուի անշարժ և շարժական գույքի, դրամական միջոցների, փարեկան եկամուտների, արժեթղթերի և ներդրումների, թանկարժեք իրերի մասին: Parliamentmonitoring.am կայքում ներկայացված են հայտարարագրերի համառոտ փարբերակները: Դրանց դիտարկման և ամփոփման հիման վրա ստորև ներկայացնում ենք ամենահետաքրքիր փվյալները ԱԺ պատգամավորների գույքի և ունեցվածքի վերաբերյալ:

- ▲ «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունը Ազգային ժողովի ամենահարուստ խմբակցությունն է. խմբակցության 36 պատգամավորները միասին հայտարարագրել են 98.1 միլիոն դոլարին համարժեք գումար:
- ▲ «Հանրապետական» խմբակցությունը հայտարարագրված դրամական միջոցների քանակով երկրորդն է. 70 պատգամավորը միասին՝ 35.7 միլիոն դոլարին համարժեք գումար:
- ▲ ՀՅԴ խմբակցությունը երրորդն է. 5 հոգանոց խմբակցությունը հայտարարագրել է 537.677 դոլարին համարժեք գումար:
- ▲ ՕԵԿ-ը 4-րդն է. խմբակցության 6 պատգամավորները հայտարարագրել են 234.565 դոլարին համարժեք գումար:
- ▲ ՀԱԿ խմբակցության 7 պատգամավորները միասին հայտարարագրել են 169.275 հազար դոլարին համարժեք գումար:
- ▲ «Ժառանգություն» խմբակցության 5 պատգամավորների հայտարարագրած դրամական միջոցներն ամենահամեստն են. ընդհանուր առմամբ՝ 118.800 դոլարին համարժեք գումար:
- ▲ 20 պատգամավոր, ըստ հայտարարագրած միջոցների, դոլարային միլիոնատեր է: Առաջին հնգյակում են 4 ԲՀԿ-ականներ (Գագիկ Ծառուկյան, Վահան Կարապետյան, Գուրգեն Արսենյան, Գրիգորի Մարգարյան): ՀՀԿ-ական Սամվել Ալեքսանյանն իր կարողությամբ զիջում է միայն Գ. Ծառուկյանին:
- ▲ Դրամական միջոց չի հայտարարագրել 21 պատգամավոր. նրանցից 12-ը ՀՀԿ խմբակցության անդամ է, 4-ը՝ ԲՀԿ, 3-ը՝ «Ժառանգություն», 2-ը՝ ՀԱԿ:

ԱԺ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5-րդ գումարման ԱԺ 6 խմբակցություններից 2-ը՝ ՀՀԿ-ն և ՕԵԿ-ը, կազմում են կոալիցիոն մեծամասնություն 76 պատգամավորով: 3 ընդդիմադիր խմբակցությունները՝ ՀԱԿ, ՀՅԴ, «Ժառանգություն», միասին ունեն 17 պատգամավոր: 36 պատգամավոր ունեցող ԲՀԿ խմբակցությունը ոչ իշխանություն է, ոչ ընդդիմություն:

ԱԺ խմբակցությունների հեղինակած նախաձեռնությունների ընթացքը



«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ» (ՀՀԿ) ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Տեղեկանք: 5-րդ գումարման Ազգային ժողովում ՀՀԿ-ն ունի բացարձակ մեծամասնություն: Խմբակցությունում ընդգրկված է 70 պատգամավոր: Հանրապետական են նաև ԱԺ նախագահն ու երկու տեղակալները: 40-ն ընտրվել է համամասնական ընտրակարգով, 30-ը՝ մեծամասնական: «Հանրապետական» խմբակցությունում կան 9 անկուսակցական, 7 այլ կուսակցությունների անդամ պատգամավորներ, 9 կին: Հանրապետականներն են ղեկավարում Ազգային ժողովի 12 մշտական հանձնաժողովներից 8-ը, հանձնաժողովների փոխնախագահներից 5-ը ևս հանրապետական են: Կառավարությունը ձևավորվել է ՀՀԿ-ՕԵԿ կոալիցիայի սկզբունքով, որի համաձայն ՕԵԿ-ին են տրվել 3 նախարարական պորտֆել և փոխնախարարի պաշտոններ: Կառավարությունում հանրապետական են 18 նախարարություններից 10-ի ղեկավարները և վարչապետ Տիգրան Սարգսյանը:

Խմբակցության ղեկավարը Գալուստի Սահակյանն է, քարտուղարը՝ Հովհաննես Սահակյանը: Թիվ 1 ընտրատարածքից մեծամասնական ընտրակարգով պատգամավոր ընտրված Ռուբեն Հայրապետյանը մանդատից հրաժարվելու մասին դիմում ներկայացրեց ԱԺ 2-րդ նստաշրջանի մեկնարկին («Հարսնաքարի» միջադեպի պարճառով), 2012թ. սեպտեմբերի 28-ին Ռ. Հայրապետյանի պատգամավորական լիազորությունները համարվեցին դադարեցված: Նրա փոխարեն նույն ընտրատարածքից պատգամավոր ընտրվեց հանրապետական Ռոբերտ Սարգսյանը:

▲ Նախընտրական ծրագրի փորձագիտական բնութագիրը

ՀՀԿ ծրագիրը գուրկ է կոնկրետությունից. դրույթներն ավելի շար դասագրքային ճշմարտություններ են հիշեցնում, քան գործունեության պլանֆորմ ապահովող ամրագրումներ: Ոչ մի մարտահրավեր, ոչ մի հիմնախնդիր չի առանձնացվում: Որպես լեյտմոտիվ նշվում է փոխվելու գաղափարը, սակայն ամեն ինչ դիտարկվում է ոչ թե փոփոխությունների, այլ վարվող քաղաքականության շարունակականության համարեքստում: Ծրագրում տնտեսական աճից դեպի տնտեսական զարգացում անցում կատարելու ռազմավարական խնդիր է դրվում, սակայն չի որոշակիացվում, թե ինչ մեխանիզմներով:


ԱԺ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կոռուպցիան մարուսվում է որպես հասարակական «քաղցկեղ», սակայն դրա դեմ պայքարի համապարփակ ու նպատակային լուծումներ չեն առաջարկվում: Ծրագրում մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների պաշտպանության համակարգը բացարձակապես արտաչլված չէ: Որևէ կոնկրետ ցուցանիշ սահմանված չէ և հնարավոր չէ պարկերացնել, թե 5 տարի հետո Հայաստանի տնտեսական, սոցիալական, դատաիրավական, կրթական և մյուս ոլորտներն ինչ հանգրվանի են հասնելու:

▲ ՀՀ օրենսդրական գործունեությունը

Խորհրդարանական ամենամեծ խմբակցության հեղինակած օրինագծերից 5-ը պարզամավորական նախաձեռնությամբ ընդունված բոլոր օրենքները, ԱԺ երկրորդ նստաշրջանի* ընթացքում ընդունվել է: Դրանցից երկուսը փոփոխություններ են ԱԺ կանոնակարգ օրենքում: ՀՀ պարզամավորների հեղինակած 8 նախագիծ ընդգրկվել է նստաշրջանի օրակարգ, դրանցից 3-ը՝ ՕԵԿ-ական և ԲՀԿ-ական պարզամավորների հետ: Ծրջանառության մեջ է 9 նախագիծ: ՀՀ-ի հեղինակած օրինագծերի ընդհանուր թիվը 22 է (խմբակցության պարզամավորներն օրինագծերի սակավությունը բացառությամբ են կառավարության հետ համագործակցությամբ՝ համարելով, որ գործադիրի հեղինակած նախագծերը ևս ՀՀ-ինն են):

ՀՀ խմբակցության քվեարկությունների պարկերը



Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 2-րդ նստաշրջանի ընթացքում

- ▲ ամենաշատը կողմ քվեարկածների փասնյակում բոլոր 10 պարզամավորները հանրապետականներ են,
- ▲ ամենաշատը դեմ և ամենաշատը ձեռնպահ քվեարկած պարզամավորների փասնյակներում հանրապետականներ չկան,
- ▲ ամենաշատը բացակայած պարզամավորների փասնյակում կա հանրապետական միայն 1 պարզամավոր (Դավիթ Հարությունյան),
- ▲ ամենաակտիվ պարզամավորների փասնյակում հանրապետականները 2-ն են,
- ▲ ամենաշատը այցելված (parliamentmonitoring.am կայքի «Պարզամավորներ» բաժնի) 10 էջերից 4-ը հանրապետական պարզամավորներինն են:

Ծանոթություն: Յուրաքանչյուր նոր խորհրդարանի բուն օրենսդրական գործունեությունը սկսվում է սեպտեմբերին՝ 2-րդ նստաշրջանով, քանի որ ընտրություններին հաջորդող 1-ին նստաշրջանը կոչված է լուծելու զուտ կազմակերպական հարցեր (ԱԺ մարմինների ընտրություններ):

«ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Տեղեկանք: 5-րդ գումարման Ազգային ժողովում ԲՀԿ խմբակցությունը մեծությամբ երկրորդն է՝ 36 պարզամավոր: 28-ն ընտրվել է համամասնական, 8-ը՝ մեծամասնական ընտրակարգով: Կանայք 2-ն են՝ Նաիրա Զոհրաբյանը, ով եվրախնդրագրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահն է, և Էլինար Վարդանյանը, ով ղեկավարում է մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովը: Խորհրդարանում ԲՀԿ-ականներն են ղեկավարում ևս երկու մշտական հանձնաժողովներ՝ փարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի և գյուղատնտեսության հարցերի հանձնաժողովները: ԲՀԿ-ն ունի մշտական հանձնաժողովների 3 փոխնախագահի պաշտոն:

Խմբակցության ղեկավարը Գագիկ Ծառուկյանն է, քարտուղարը՝ Նաիրա Զոհրաբյանը:

Սամվել Բալասանյանը, ով ԱԺ գյուղատնտեսության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահն էր, 2012 թ. սեպտեմբերին ընտրվեց Գյումրիի քաղաքապետ և վայր դրեց պարզամավորական մանդատը: Նրա փոխարեն 35-րդ ընտրատարածքից մեծամասնական ընտրակարգով պարզամավոր ընտրվեց հանրապետական Արման Սահակյանը:

2012 թ. հոկտեմբերի 1-ին ՀՀ գլխավոր դատախազը Ազգային ժողովին միջնորդություն ներկայացրեց ԲՀԿ անդամ Վարդան Օսկանյանին պարզամավորական անձեռնմխելիությունից զրկելու մասին: Հոկտեմբերի 2-ին ԱԺ մեծամասնությունը փակ քվեարկությամբ բավարարեց միջնորդությունը: Արտակառուցված 4 խմբակցությունները քվեարկությանը չմասնակցեցին:

▲ Նախընտրական ծրագրի փորձագիտական բնութագիրը

ԲՀԿ ծրագիրը նույնպես որոշակիության զգալի պակաս ունի և հիմնականում հռչակագրային է: Կուսակցությունը նվազագույնի է հասցրել ծրագրի կատարողականությունը չափելու հնարավորությունները: Ի տարբերություն 2007-ին հանրությանն առաջարկած նախընտրական պարկերացումների ու առաջ քաշած խնդիրների՝ կուսակցությունն այս անգամ նկատելիորեն հարթեցրել է անկյունները: Եթե իրավացիորեն նախորդ ծրագրի ուժեղ կողմ էին համարվում տնտեսական համակարգում առաջարկվող բարեփոխումների մեխանիզմները, ապա 2012 թ-ին կուսակցությունը զերծ է մնացել համակարգային խնդիրներին անդրադառնալուց:

Ծրագրում անդրադարձ չկա կոռուպցիային, դրամավարկային քաղաքականությանը, բնական մենաշնորհի ոլորտին, ներքին շուկայի ու արտադրության պաշտպանությանը: Հասկանալի չէ նաև, թե մարդու ազատությունների, իրավունքների պաշտպանության առկա մակարդակն ու իրավիճակը կուսակցությանը որքանով են բավարարում:




▲ **ԲՀԿ օրենսդրական գործունեությունը**

«Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամների հեղինակած որևէ օրինագիծ ԱԺ 5-րդ գումարման երկրորդ նստաշրջանում չի ընդունվել:

ԱԺ 5-րդ գումարման 2-րդ նստաշրջանի օրակարգում ընդգրկված է ԲՀԿ պարզամավորների հեղինակած 4 օրինագիծ: Դրանցից 3-ը ԲՀԿ-ն ներկայացրել է ՕԵԿ-ի և ՀՀԿ-ի հետ համահեղինակությամբ:

Շրջանառության մեջ դրված և նստաշրջանի օրակարգ դեռևս չընդգրկված օրինագծերը 7-ն են: ԲՀԿ պարզամավորների հեղինակած և փոստական ոլորտին վերաբերող ևս 3 օրինագծի ընդգրկումը օրակարգ խորհրդարանական մեծամասնությունը քվեարկությամբ մերժել է:

ԲՀԿ խմբակցության քվեարկությունների պատկերը



Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 2-րդ նստաշրջանի ընթացքում

- ▲ ամենաշատը կողմ և ամենաշատը դեմ քվեարկած, ինչպես նաև ամենաակտիվ պարզամավորների փասնյակներում ԲՀԿ-ն ներկայացնող պարզամավորներ չկան,
- ▲ ամենաշատը ձեռնպահ քվեարկած պարզամավորների փասնյակում ԲՀԿ-ն ներկայացնող պարզամավորները 5-ն են,
- ▲ ամենաշատը բացակայած պարզամավորների փասնյակում ԲՀԿ-ական պարզամավորները 7-ն են (փասնյակը գլխավորում է Գագիկ Ծառուկյանը),
- ▲ ամենաշատը այցելված (parliamentmonitoring.am կայքի «Պարզամավորներ» բաժնի) 10 էջերից 4-ը ԲՀԿ-ական պարզամավորներին են:

«ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Տեղեկանք: ՀԱԿ-ը Ազգային ժողովի նորեկն է՝ ի փարբերություն մյուս 5 խմբակցությունների, որոնք ձևավորում էին 4-րդ գումարման ՀՀ խորհրդարանը: 2012 թ. խորհրդարանական ընտրություններին ՀԱԿ-ը մասնակցում էր որպես կուսակցությունների դաշինք և հաղթահարեց սահմանված նվազագույն շեմը՝ ստանալով ընտրողների ձայների 7 փոկոսը:

5-րդ գումարման Ազգային ժողովում ՀԱԿ խմբակցության կազմում ընդգրկված է 7 պարզամավոր՝ բոլորն էլ ընտրված համամասնական ընտրակարգով: Միակ կին պարզամավորը Լյուդմիլա Սարգսյանն է: Խորհրդարանում ՀԱԿ-ը չունի որևէ մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոն, խմբակցությունը հրաժարվեց նաև «Դոնթի» բանաձևով իրեն տրվող մշտական հանձնաժողովի փոխնախագահի պաշտոնից: Էթիկայի հանձնաժողովում ՀԱԿ ներկայացուցիչը Նիկոլ Փաշինյանն է, ով 2-րդ նստաշրջանի ընթացքում ռոտացիայի սկզբունքով նախագահեց հանձնաժողովը:

ՀԱԿ խմբակցության ղեկավարը Լևոն Զուրաբյանն է, քարտուղարը՝ Արամ Մանուկյանը:

▲ Նախընտրական ծրագրի փորձագիտական բնութագիրը

ՀԱԿ-ը 2012 թ. խորհրդարանական ընտրություններին մասնակցեց առանց կոնկրետ, համապարփակ ծրագրի՝ բացը լրացնելով 2010 թ. փետրվարին հրապարակված «Սուցիալ-տնտեսական քաղաքականության համակարգային վերափոխման «100 քայլ» և հաջորդ փորիններին մշակված ոլորտային ծրագրերով:

Սուցիալ-տնտեսական ոլորտում ՀԱԿ-ի մոտեցումներն ու գաղափարներն առավելապես հեղափոխական են: Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման համար Կոնգրեսը կարևորում է պետության կարգավորիչ դերակատարությունը: Մինչդեռ, օրինակ, գյուղատնտեսության զարգացման տեսանկյունից ձգտում է նվազագույնի հասցնել պետության միջամտությունը: Ծրագրային առաջարկությունների հիմնական թիրախը օլիգոպոլիսների, արհեստական մենաշնորհների, սպվերային տնտեսության դեմ պայքարն է, նպատակը՝ հավասար մրցակցային պայմանների ստեղծումն ու հատկապես միջին խավի կայացումը:

Առանցքային նշանակություն է տրվում ընտրական և դատաիրավական համակարգերի բարեփոխումներին: Արդարադատության ոլորտում հիմնական թիրախ է համարվում իշխանությունների միջև հակակշռման և հավասարակշռման մեխանիզմների գործարկումն ու անկախ դատական համակարգի կայացումը:


▲ ՀԱԿ օրենսդրական գործունեությունը

Աժ երկրորդ նստաշրջանի ընթացքում ՀԱԿ խմբակցության հեղինակած ոչ մի օրենսդրական նախաձեռնություն չի ընդունվել: Քննարկվել է խմբակցության կողմից կառավարությանն ուղղված հարցապնդման առնչությամբ ներկայացված «Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության և հակամենաշնորհային քաղաքականության գործողությունների ծրագիր մշակելու մասին» Ազգային ժողովի որոշման նախագիծը, որը չի ընդունվել:

ՀԱԿ խմբակցության հեղինակած նախագծերից 7-ը պաշտոնապես դրված են շրջանառության մեջ, բայց օրակարգում դեռ չեն ընդգրկվել: Գլխադասային հանձնաժողովներում այդ նախագծերի քննարկումը հետաձգվել է մինչև 1 տարի ժամկետով: 7 նախագծերից 5-ի հեղինակը Հրանտ Բագրատյանն է: Դրանք վերաբերում են տնտեսական ոլորտին: Մյուս 2 նախագծի հեղինակը ՀԱԿ խմբակցությունն է՝ ողջ կազմով: Դրանցից մեկով ՀԱԿ-ն առաջարկում է փոփոխություններ և լրացումներ կատարել Ընտրական օրենսգրքում, իսկ մյուսով առաջարկում է մարտի 1-ի դեպքերն ուսումնասիրող խորհրդարանական հանձնաժողով ստեղծել:

Հրանտ Բագրատյանի հեղինակած ևս 2 օրինագծի ընդգրկումը նստաշրջանի օրակարգ քվեարկությամբ մերժվել է:

ՀԱԿ խմբակցության քվեարկությունների պատկերը



Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 2-րդ նստաշրջանի ընթացքում

- ▲ ամենաշատը կողմ և ամենաշատը ձեռնպահ քվեարկած պատգամավորների տասնյակներում ՀԱԿ ներկայացուցիչներ չկան,
- ▲ ամենաշատը դեմ քվեարկած պատգամավորների տասնյակում ՀԱԿ ներկայացուցիչները 5-ն են,
- ▲ ամենաշատը բացակայած պատգամավորների տասնյակում ՀԱԿ խմբակցության 1 պատգամավոր կա,
- ▲ ամենաակտիվ պատգամավորների տասնյակում ՀԱԿ-ը ներկայացնում է ընդամենը 2 պատգամավոր,
- ▲ ամենաշատը այցելված (parliamentmonitoring.am կայքի «Պատգամավորներ» բաժնի) 10 էջերից 2-ը ՀԱԿ պատգամավորներին են:



«ՕՐԻՆԱՅ ԵՐԿԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Տեղեկանք: Խմբակցությունում ընդգրկված է 6 պարգամավոր. 5-ն ընտրվել է համամասնական, մեկը՝ մեծամասնական ընտրակարգով: 2012 թ. խորհրդարանական ընտրություններից հետո ՀՀԿ-ի հետ կոալիցիա կազմեց և մասնակցեց կառավարության ձևավորմանը՝ պահպանելով 3 նախարարական պորտֆելի նախորդ կոալիցիոն պայմանավորվածությունը. ՕԵԿ-ինն են քաղաքաշինության, գյուղատնտեսության և արտակարգ իրավիճակների նախարարների և 2 փոխնախարարի պաշտոններ: Ազգային ժողովում խմբակցությունն ունի 2՝ պետաիրավական և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովների փոխնախագահների պաշտոններ («Դոնթի» բանաձևը, համաձայն որի բաշխվում են խորհրդարանական պաշտոնները, թույլ չի տալիս հանձնաժողովի նախագահի պաշտոն տալ 6 հոգանոց խմբակցությանը):

Խմբակցության ղեկավարը Հեղինե Բիշարյանն է, քարտուղարը՝ Միեր Շահգելոյանը:

▲ **Նախընտրական ծրագրի փորձագիտական բնութագիրը**

ՕԵԿ ծրագիրը քիչ է տարբերվում 2007 թ-ին ներկայացվածից, բայց սուր անկյուններն այստեղ ևս հնարավորինս հարթված են: Կուսակցության ծրագրում գրեթե նույնությամբ ներառված են խնդիրներ, որոնց լուծման ուղղությամբ դեռևս նախորդ գումարման խորհրդարանում ՕԵԿ-ը քայլեր է ձեռնարկել և հաճախ կանգ առել ձանապարհի կեսին: Ծրագիրն ունի նկատելի սոցիալական ուղղվածություն. իրավական, տնտեսական մոտեցումները դիտարկվում են սոցիալական պաշտպանության տեսանկյունից, ինչը հատուկ է ձախ ուղղվածության քաղաքական ուժին: Տնտեսական հարաբերությունների կարգավորման ՕԵԿ տեսլականը անհամեմատ ավելի անորոշ է և զգուշավոր: Ծրագրում ոլորտային տարաբնույթ հայեցակարգերի, ռազմավարությունների մշակման խնդիր է դրվում, որից տարվորություն է ստեղծվում, թե չունենալով տվյալ ոլորտների հիմնահարցերը լուծելու բանաձևեր, կուսակցությունը ձգտել է արտասույլ շարքային քաղաքացու հետաքրքրությունները շոշափող հնարավոր բոլոր խնդիրները: ՕԵԿ-ը հիմնականում զարգացնում է վարվող պետական քաղաքականության շարունակականության գիծը՝ առանց մարտահրավերներ թիրախավորելու:


▲ **ՕԵԿ օրենսդրական գործունեությունը**

Աժ երկրորդ նստաշրջանի ընթացքում ընդունվել են «Օրինաց երկիր» խմբակցության պարգամավորների հեղինակած նախաձեռնություններից երկուսը, որոնք մշակվել են ՀՀԿ խմբակցության պարգամավորների հետ համատեղ:

Մինչդեռ աշնանային նստաշրջանի ընթացքում ՕԵԿ խմբակցության պարգամավորները շրջանառության մեջ են դրել 27 օրենսդրական նախաձեռնություն: Դրանցից 16-ը նստաշրջանի օրակարգում դեռևս չի ընդգրկվել, 3-ը խմբակցության պարգամավորները ներկայացրել են նստաշրջանի ավարտին: 6 օրինագիծ, որոնք ՕԵԿ պարգամավորները հեղինակել են ՀՀԿ պարգամավորների կամ կառավարության հետ, ընդգրկվել է Աժ աշնանային նստաշրջանի օրակարգ:



ՕԵԿ խմբակցության քվեարկությունների պատկերը



Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 2-րդ նստաշրջանի ընթացքում

- ▲ ամենաշատը բացակայած, դեմ, ձեռնպահ քվեարկած պատգամավորների տասնյակում ՕԵԿ խմբակցության ոչ մի պատգամավոր չկա,
- ▲ ամենաակտիվ պատգամավորների տասնյակում ՕԵԿ-ը ներկայացնող պատգամավորները 2-ն են,
- ▲ ամենաշատը այցելված (parliamentmonitoring.am կայքի «Պատգամավորներ» բաժնի) էջերի տասնյակում ոչ մի ՕԵԿ-ական պատգամավոր չկա:



«ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Տեղեկանք: 2012 թ. խորհրդարանական ընտրություններին ՀՅԴ-ն մասնակցեց որպես ընդդիմադիր քաղաքական ուժ:

5-րդ գումարման Ազգային ժողովում «Հայ հեղափոխական դաշնակցությունն» ունի 5 պատգամավոր: Բոլորն էլ ընտրված են համամասնական ընտրակարգով: ՀՅԴ-ն միակ խմբակցությունն է, որի կազմում չկա կին պատգամավոր: Խմբակցության միակ անկուսակցականը Արմեն Բաբայանն է: Խորհրդարանում ՀՅԴ-ն ունի մեկ պաշտոն՝ ֆինանսավարկային և բյուջեբային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալինը (Արծվիկ Մինասյան):

ՀՅԴ խմբակցությանը ղեկավարը Արմեն Ռուսփամյանն է, քարտուղարը՝ Աղվան Վարդանյանը:

▲ **Նախընտրական ծրագրի փորձագիտական բնութագիրը**

ՀՅԴ ծրագրում մեկտեղվել են որոշակիությունն ու ռոմանտիզմը. հստակ են առաջնահերթությունները, ոլորտային առաջարկությունները տրամաբանական ընդհանուր հարթության մեջ են ու սուցիալական պետության տեսլականի համապետքաբար, սակայն նախանշվող արդյունքները առկա իրողությունների ֆոնին ռոմանտիկ, անգամ ֆանտաստիկ են թվում: Ծրագրի հիմնական թիրախներն են մենաշնորհների կազմաքանդումը, զբաղվածության ապահովումը, տնտեսության մրցակցության բարձրացումը, արտահանման խրախուսումը, արժանապատիվ վարձատրության համակարգի ներդրումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումը, աղքատության հաղթահարումը: Դրանց մի մասի համար որոշակիացված լուծումներ են առաջարկվում, մյուսների համար (կոռուպցիայի դեմ պայքար, ժողովրդագրական վիճակ, ներդրումային միջավայրի բարելավում) առաջակներն ընդհանրական են: Ծրագրում կան այնպիսի ամբիցիոզ նպատակադրումներ, ինչպիսիք են առաջիկա 5 տարիներին ՀՆԱ-ի կրկնապատկումն ու առնվազն 200 հազար նոր աշխատատեղի ստեղծումը, յուրաքանչյուր տարի 5-6 հազար սուցիալական բնակարանների շինարարությունը կամ ամեն տարի միջինը 50 հազարով բնակչության թվաքանակի աճի ապահովումը:


▲ **ՀՅԴ օրենսդրական գործունեությունը**

Հինգերորդ գումարման ԱԺ 2-րդ նստաշրջանում ՀՅԴ խմբակցության հեղինակած որևէ օրինագիծ չի ընդունվել: Նոյեմբերի 13-ին քննարկվել է խմբակցության կողմից արտահերթ համարված «Նվազագույն աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություն կատարելու օրինագիծը, որը չի ընդունվել ձայների 37 կողմ, 58 դեմ հարաբերակցությամբ: Նստաշրջանի օրակարգ ընդգրկվել են ՀՅԴ օրինագծերից 4-ը: Դրանցից մեկի ընդունումը կառավարությունը համարել է ոչ նպատակահարմար, 2-ի վերաբերյալ սկզբունքային առարկություններ չի ներկայացրել: Մեկ նախագիծ («Տեղեկատվության ազատության մասին» օրենքում լրացում կատարելու մասին) առաջին ընթերցմամբ ընդունվելուց հետո երկրորդ ընթերցումը հետաձգվել է մինչև մեկ տարով: ՀՅԴ խմբակցության նախաձեռնություններից 4-ը պաշտոնապես դրվել է շրջանառության մեջ, բայց օրակարգում դեռևս չի ընդգրկվել:



ԱԺ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՅԴ Խմբակցության քվեարկությունների պատկերը



Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 2-րդ նստաշրջանի ընթացքում

- ▲ ամենաշատը կողմ քվեարկած և ամենաշատը բացակայած պարզամավորների փաստնյակում ՀՅԴ Խմբակցության ներկայացուցիչներ չկան,
- ▲ ամենաշատը դեմ քվեարկած պարզամավորների փաստնյակում ՀՅԴ-ն ներկայացնող պարզամավորները 3-ն են,
- ▲ ամենաշատը ձեռնպահ քվեարկած պարզամավորների փաստնյակում ՀՅԴ պարզամավորները 4-ն են,
- ▲ ամենաակտիվ պարզամավորների փաստնյակում ՀՅԴ-ն ներկայացնող պարզամավորները 2-ն են (փաստնյակը գլխավորում է Արծվիկ Մինասյանը),
- ▲ ամենաշատը այցելված (parliamentmonitoring.am կայքի «Պարզամավորներ» բաժնի) 10 էջերից 1-ն է ՀՅԴ-ական պարզամավորինը:

«ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Տեղեկանք: 2012թ. խորհրդարանական ընտրություններին «Ժառանգությունը» մասնակցեց «Ազատ դեմոկրատներ» կուսակցության հետ միասին՝ մեկ ընդհանուր ցուցակով: Հաղթահարելով սահմանված նվազագույն շեմը՝ ԱԺ-ում ձևավորեց 5 պարզամավոր ընդգրկող խմբակցություն՝ «Ժառանգություն» անվանմամբ: Խմբակցության կազմում 3-ը «Ժառանգություն» կուսակցությունից են, 2-ը՝ «Ազատ դեմոկրատներ»-ից: Խմբակցության միակ կին պարզամավորը Զարուհի Փոստանջյանն է, ով խմբակցության կազմում էր նաև նախորդ գումարման Ազգային ժողովում: «Ժառանգության» բոլոր պարզամավորներն ընտրվել են համամասնական ընտրակարգով: Խմբակցությանը փոխանակված միակ մշտական հանձնաժողովի՝ արտաքին հարցերի հանձնաժողովի փոխնախագահի պաշտոնը զբաղեցնում է «Ազատ դեմոկրատներ»-ը ներկայացնող Ալեքսան Արզումանյանը: Րաֆֆի Հովհաննիսյանը 2012թ. սեպտեմբերին հայտարարեց պարզամավորական մանդատը վայր դնելու մտադրության մասին: 2012թ. հոկտեմբերի 2-ին նրա պարզամավորական լիազորությունները համարվեցին դադարեցված: Նրա փոխարեն խորհրդարան մրավ անկուսակցական Թևան Պողոսյանը:

Խմբակցության ղեկավարը Ռուբեն Հակոբյանն է, քարտուղարը՝ Զարուհի Փոստանջյանը:

▲ Նախընտրական ծրագրի փորձագիտական բնութագիրը

«Ժառանգության» ծրագիրն առավել կոնկրետ է ու համապարփակ: Բոլոր ոլորտների վերաբերյալ փորձված են գնահատականները, սահմանված են թիրախները, առաջնահերթությունները, նշված են խնդիրների լուծմանն ուղղված քայլերը թե օրենսդիր, թե գործադիր մարմինների համար: Կուսակցությունն իր ծրագրում նախանշել է իրադրության ցուցանիշներ, թեև ընդգրկել է նաև այնպիսիք, որոնք ասես կազմված են այն հեռանկարով, որ կենսագործվելու հնարավորություններ (ըստ այդմ էլ՝ պարասխանավիճակում) չեն ունենալու (2015թ-ին միգրացիոն դրական սալդոն 50 հազարի հասցնելու, հակակոռուպցիոն միջոցառումների արդյունքում պեքրյուզեն մոտ 1 մլրդ դոլարի չափով ավելացնելու խոստումներ):

Ծրագիրը կառուցված է ժողովրդավարական ազատական արժեքների գաղափարախոսության վրա, բոլոր հարաբերությունների հիմքում քաղաքացու և նրա իրավունքների անառարկելի առաջնայնությունն է: Դատական համակարգի և արդարադատության խորհրդի բովանդակային վերափոխման, ընտրական համակարգի վերականգնման խնդիր է դրվում, ընդդիմության դերը պետական կառավարման համակարգում մեծացնելու մեխանիզմներ են առաջարկվում: Տնտեսական ոլորտում օրինականության, արդարության և հավասար մեկնարկային պայմանների ապահովման համար կուսակցությունն առաջարկում է անցնել եկամուտների պրոգրեսիվ հարկմանը, շքեղության հարկատեսակ սահմանել, նոր ստեղծվող ՓՄՁ-ներին 15 փարվա կտրվածքով հարկային արտոնություններ փրամադրել:




▲ «Ժառանգություն» օրենսդրական գործունեությունը

Աժ 5-րդ գումարման 2-րդ նստաշրջանի ընթացքում «Ժառանգություն» խմբակցության կողմից պաշտոնապես շրջանառության մեջ է դրվել, բայց նստաշրջանի օրակարգ առայժմ չի ընդգրկվել 5 օրինագիծ:

Եվս 3 օրենսդրական նախաձեռնություն, գլխադասային հանձնաժողովի ոչ դրական եզրակացությամբ, Աժ նիստերի դահլիճում քվեարկությամբ մերժվել և նստաշրջանի օրակարգում չի ընդգրկվել: Դրանցից մեկով «Ժառանգության» պարզամավորներն առաջարկում են փոփոխություններ ու լրացումներ կատարել ՀՀ ընտրական օրենսգրքում, մյուս երկուսով առաջարկում են կոռուպցիոն փաստերն ուսումնասիրող և 2012 թ. հունիսի 17-ին Երևանի «Հարսնաքար» ռեսուրսային համալիրում տեղի ունեցած միջադեպին բարձրաստիճան պաշտոնյաների գործողություններն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողով ստեղծել:

«Ժառանգություն» խմբակցության քվեարկությունների պատկերը



Ըստ parliamentmonitoring.am կայքի վիճակագրության՝ 2-րդ նստաշրջանի ընթացքում

- ▲ ամենաշատը բացակայած և ամենաշատ կողմ քվեարկած պարզամավորների տասնյակներում «Ժառանգություն» խմբակցության պարզամավորներ չկան,
- ▲ ամենաշատը դեմ քվեարկած պարզամավորների տասնյակում «Ժառանգության» ներկայացուցիչները 2-ն են,
- ▲ ամենաշատը ձեռնպահ քվեարկած պարզամավորների տասնյակում կա «Ժառանգության» միայն 1 պարզամավոր,
- ▲ ամենաակտիվ պարզամավորների տասնյակում ևս «Ժառանգությունը» ներկայացնող միայն 1 պարզամավոր է,
- ▲ ամենաշատը այցելված (parliamentmonitoring.am կայքի «Պարզամավորներ» բաժնի) էջերի տասնյակում «Ժառանգություն» խմբակցության ոչ մի պարզամավոր չկա:



ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Դիտարկելով խորհրդարանում ներկայացված քաղաքական ուժերի գործունեությունը փարբեր ասպեկտներով՝ «ԱԺ մոնիտորինգ» ծրագիրը մշտապես իր ուշադրության տակ պահել կուսակցությունների նախընտրական ծրագրերի հետ նրանց գործունեության ներդաշնակության խնդիրը: Դա հնարավորություն է տալիս հասկանալու և փաստարկված խոսելու այն մասին, թե որքանով են քաղաքական ուժերը հետևողական իրենց դիրքորոշումներում, որքանով են ամբողջական ու հիմնավորված նրանց պատկերացումները առկա խնդիրների մասին և որքանով են ծրագրերում առաջարկված լուծումները կենսագործելի:

5-րդ գումարման ԱԺ-ն ընդունել է 94 օրենք, որոնց գերակշիռ մասը վերաբերում է սույիալ-տնտեսական ոլորտին: Ստորև ներկայացնում ենք առավել մեծ հանրային հնչեղություն ստացած օրինագծերի և օրենսդրական փաթեթների դիտարկման արդյունքները՝ կատարված լրագրողական և փորձագիտական աշխատանքների համադրմամբ: Յուրաքանչյուր օրենքի վերաբերյալ ներկայացվում է խորհրդարանական քննարկման ընթացքը, խմբակցությունների արտահայտած դիրքորոշումները համեմարվում են ծրագրային մոտեցումների հետ, արվում են փորձագիտական գնահատականներ:

ՆՎԱՉԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

«Յուրաքանչյուր փարվա բյուջեից առաջ ՀՀ կառավարությունն Ազգային ժողով է ներկայացնում նվազագույն աշխատավարձը փոփոխելու մասին օրենքի նախագիծ: Փոփոխությունը վերաբերում է այդ աշխատավարձի բարձրացմանը՝ վերջին 2 փարիներին անփոփոխ 2,5 հազար դրամի չափով: ՀՀ-ում աշխատավարձերի ձևավորման հայեցակարգի բացակայության պայմաններում այս ձեռնարկը ձևական բնույթ է կրում, որովհետև թե նվազագույն աշխատավարձի չափը, թե դրա ամենամյա խորհրդանշական բարձրացումները որևէ աղերս չունեն կենսապահովման նվազագույն պայմանները բավարարելու հետ»:

Փորձագիտական վերլուծությունից
(վերլուծությունն ամբողջությամբ՝ հավելվածում)

2012 թ. նոյեմբերի 13-ին ընդունվեց «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքը՝ 73 կողմ, 9 դեմ, 14 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ: Այն նախատեսում էր նվազագույն աշխատավարձը գործող 32 500-ի փոխարեն սահմանել 35 000 դրամ:



ԱԺ ՕՐԵՆՆԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Կառավարությունն իր նախաձեռնությունը հիմնավորելիս նշում էր, որ աշխատավարձերի ասֆիճանական բարձրացման կողմնակից է և նվազագույն աշխատավարձը հաշվարկելիս հաշվի է առել ոչ միայն սուցիալական, այլ նաև բյուջեփայլին ու բիզնես միջավայրի վրա ազդեցության բաղադրիչները:

Կառավարության հիմնավորումները համոզիչ չէին ընդդիմադիր խմբակցությունների համար: Ավելին, ՀԱԿ-ն ու ՀՅԴ-ն նվազագույն աշխատավարձի ձևավորման վերաբերյալ մոտեցումները ձևակերպել էին սեփական նախաձեռնություններով: Դրանցից Դաշնակցության հեղինակածը խորհրդարանը քննարկեց արտահերթ կարգով ու մերժեց 37 կողմ, 58 դեմ ձայներով:

Նվազագույն աշխատավարձը 2,5 հազար դրամով բարձրացնելու կառավարության առաջարկին կողմ քվեարկեցին ՀՀԿ-ն ու ՕԵԿ-ը, ԲՀԿ-ից 4 պարզամավոր նույնպես կողմ է քվեարկել:

Խոսք և գործ. նվազագույն աշխատավարձ

ՀՀԿ նախընտրական ծրագրում աշխատավարձերի վերաբերյալ որևէ դրույթ չկա: Կուսակցությունն ընդամենը առաջնահերթ է համարել սուցիալական անհավասարությունն ծնող պարճառների վերացումը՝ առանց մատնանշելու պարճառները: Աշխատավարձերի ծրագրային հայեցակարգ չունենալը ՀՀԿ-ին սփիպում է առաջնորդվել գործադիրի հայեցողությամբ և լինել հնարավորինս առաձգական:

Կառավարությունն իր գործունեության հնգամյա ծրագրով (2012-2017 թթ.) այս ուղղությամբ երկու չափելի ցուցանիշ է ամրագրել. մինչև 2017 թ. նվազագույն աշխատավարձի առնվազն կրկնապատկում և նվազագույն աշխատավարձ/աղքատության ցուցանիշի առնվազն 140 փոկոս մակարդակի ապահովում: Այսինքն, 2013-2017 թթ. նվազագույն աշխատավարձը պետք է կազմի 65 հազար դրամ: Կառավարության ծրագիրը չի բացահայտում աշխատավարձի աճի ժամանակագրական նկարագրությունն ու համամասնությունը: Ընդունված օրենսդրական փոփոխությունն ապահովում է ընդամենը 11 փոկոսի աճ՝ առանց հաշվի առնելու գնաճային հետագա ճնշումները: Նման տեմպերով նվազագույն աշխատավարձի բարձրացումը չի կարող ապահովել դրված ցուցանիշի կատարումը նույնիսկ 2017 թ-ին, առավել ևս, երբ ընդամենը 2500 դրամով ավելացումը գործադիրը բացատրում է ոչ թե այդ ցուցանիշն ապահովելու համար արված հաշվարկներով, այլ բացառապես ֆինանսական ռեսուրսների սահմանափակությամբ:

ՕԵԿ ծրագրում ամրագրված է, թե «չպետք է լինեն աշխատավարձեր, որոնցով հնարավոր չէ ապրել»: Կուսակցությունը պաշտպանում է կենսապահովման նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից ոչ ցածր նվազագույն աշխատավարձի ապահովման գաղափարը, սակայն չի նշում, թե այդ ցուցանիշի ապահովման համար որքան ժամանակ է անհրաժեշտ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սպառողական նվազագույն զամբյուղի արժեքը 2012թ-ին գրեթե կրկնակի բարձր է նվազագույն աշխատավարձի մեծությունից, ներկայացված օրինագիծը, ըստ նախընտրական ծրագրի տրամաբանության, պետք է որ չբավարարեր ՕԵԿ-ին: Կուսակցությունը, սակայն, պաշտպանել է կառավարության նախաձեռնությունը:

Ծրագրում ՕԵԿ-ը խոսում է նաև աշխատավարձերի ներքին սանդղակ սահմանելու անհրաժեշտության մասին՝ ըստ սպառման սոցիալական չափորոշիչների՝ «տարածքային, ճյուղային և որակավորման գործակիցների»: Հղումը «սոցիալական չափորոշիչներին» ենթադրում է, որ ծրագրային այս դրույթը իրագործելու համար ՕԵԿ-ը կամ պետք է հանդես գար համապատասխան օրենսդրական նախաձեռնությամբ, ինչը չի արել, կամ պետք է պաշտպաներ ՀՅԴ ներկայացրած այլընտրանքային նախագիծը, որով առաջարկվում էր աշխատավարձի նվազագույն չափը սահմանել ըստ գնաձի մակարդակի, կենսապահովման նվազագույն բյուջեի և միջին աշխատավարձի: Կուսակցությունը դեմ է քվեարկել փոփոխությունների առաջարկին՝ հակասելով ծրագրային իր ուղեգծին:

ՀՅԴ նախընտրական ծրագիրը առաջ է քաշում աշխատավարձերի սահմանման միասնական ռազմավարության ներդրման գաղափարը՝ հիմնված աշխատանքի արտադրողականության աճի, տնտեսության առաջնահերթությունների և մասնագիտական առանձնահատկությունների ու աշխատանքային փորձառության վրա: Նվազագույն աշխատավարձի սահմանման մոդելը հիմնվում է երկու հիմնական գաղափարական առանցքի վրա. նվազագույն աշխատավարձը պետք է սահմանվի յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով և հիմնված լինի տվյալ տարվա գնաձի մակարդակի, կենսապահովման նվազագույն բյուջեի և միջին աշխատավարձի վրա: Ըստ այս հաշվարկի՝ արդեն 2012 թ-ին նվազագույն աշխատավարձը պետք է կազմեր 63 հազար դրամ: Թեև ծրագիրը չի մատնանշում նման կտրուկ աճի ֆինանսական աղբյուրները, սակայն ՀՅԴ-ի խորհրդարանում հնչեցրած հիմնավորումներից պարզ է դառնում, որ կուսակցությունը դրանք պայմանավորում է սրվերային տնտեսության կրճատման արդյունքում ձևավորվելիք լրացուցիչ ռեսուրսներով: ՀՅԴ-ն հեղինակել և աշնանային նստաշրջանի ընթացքում արտահերթ քննարկման է ներկայացրել նվազագույն աշխատավարձի հաշվարկման նոր մոդել ենթադրող այլընտրանքային օրենսդրական նախագիծ, որը փաստում է կուսակցության սկզբունքային անհամաձայնությունը նվազագույն աշխատավարձի «սիմվոլիկ» բարձրացման կառավարության քաղաքականությանը:

Հետևաբար, կառավարության հեղինակած նախագծին հիմնականում ձեռնպահ քվեարկելն ու միաժամանակ այն քննադատության ենթարկելը համահունչ է հիմնախնդրի լուծման կուսակցության ծրագրային պարկերացումներին:

ՀԱԿ-ը աշխատանքի վարձատրության համակարգի վերաբերյալ առանձին հայեցակարգով կամ ծրագրով հանդես չի եկել: Սակայն 2010թ-ին մշակած «Սոցիալ-տնտեսական քաղաքականության համակարգային վերափոխման «100 քայլ» ծրագրով» նախատեսում է առաջիկա 10-15 տարիներին նվազագույն աշխատավարձի մեծությունը մոտեցնել միջին աշխատավարձին՝ այն դիտարկելով որպես ստանդարտ տնտեսության տեսակարար կշռի նվազեցման գործիք: Այս առումով կառավարության ներկայացրած նախագծին ձեռնպահ քվեարկելը բխում է ծրագրային վերոնշյալ առաջնայնությունից:

ՀԱԿ-ի հեղինակած «Նվազագույն ամսական աշխատավարձի» մասին օրենքում փոփոխությունների օրինագծով առաջարկվում էր նվազագույն աշխատավարձը 32.500 դրամի փոխարեն սահմանել 72.500 դրամ: Սակայն ՀԱԿ-ը դա պայմանավորում էր ոչ թե բյուջեարային մուտքերի ավելացման իր ծրագրային մեխանիզմներով, ինչը կլիներ փրամաբանական, այլ հիմնվելով միջին աշխատավարձի մեծության մասին կառավարության հավաստիացումների վրա՝ փորձելով ապացուցել, որ կամ այդ հավաստիացումներն են սխալ, կամ նվազագույն աշխատավարձ ստացողների վերաբերյալ պաշտոնական վիճակագրությունը: Այսինքն, ոչ այնքան փորձ է արվել առաջնորդվել իրատեսական քաղաքականությամբ, որքան հակադրվել պետական իշխանության քաղաքականությանը:

«Ժառանգություն». Նախընտրական ծրագրով համալիր լուծումներ է առաջարկում նվազագույն ամսական աշխատավարձի չափը նվազագույն սպառողական զամբյուղին և կենսապահովման նվազագույն բյուջեին հավասարեցնելու ուղղությամբ՝ այդ նպատակով նոր աշխատանքային օրենսգիրք ընդունելու խնդիր դնելով: Սակայն, ի տարբերություն ՀՅԴ-ի, որը ևս այս զուգակցման կողմնակիցն է, «Ժառանգությունը» ոչ միայն նախատեսում է արդեն 2013թ-ին նվազագույն աշխատավարձը հասցնել 80 հազար դրամի, այլև առաջարկում է այն ամեն փարի ավելացնել 10 հազար դրամով և գնաձին համարժեք հավելումներով: Այդ միջոցները, ըստ կուսակցության նախընտրական ծրագրի հարկային քաղաքականությունը նկարագրող մասի, հնարավոր է ձեռք բերել ՀՆԱ-ում հարկերի տեսակարար կշռի ավելացման և հակակոռուպցիոն միջոցառումների արդյունքում պետական բյուջեն համալրելու միջոցով: Հետաքրքրականն այն է, որ 2011թ-ին «Ժառանգությունը» նվազագույն աշխատավարձը մինչև 45 հազար դրամ բարձրացնելու օրենսդրական նախաձեռնությամբ էր հանդես եկել, որտեղ հավելագրումների մասին խոսք չկար:

Թե ինչով է պայմանավորված առանց սոցիալ-տնտեսական որևէ էական տեղաշարժի, սրվերի էական կրճատման նախորդ փուլում համեմատ գրեթե կրկնակի նվազագույն աշխատավարձի չափ սահմանելը, չի հիմնավորվել ոչ նախընտրական ծրագրում, ոչ էլ խմբակցության հրապարակային հայտարարություններում ու դիրքորոշումներում: Այս իրողությունը վկայում է, որ «Ժառանգության» նման ուղեգիծը կառուցվել է ոչ այնքան տնտեսական ռեսուրսների իրական գնահատման և վերլուծությունների վրա, որքան հնարավորինս փափակորիչ ծրագիր ներկայացնելու և ընտրազանգվածի համակրանքը շահելու նպատակով:

ԲԿԿ. Գերակա խնդիր է համարում սրվերային տնտեսության դեմ կոշտ, բայց «հիմնավորված» պայքարը՝ որպես պետական եկամուտների ավելացման էական աղբյուր: Ծրագրում նաև ամրագրվում է «արժանապատիվ վարձատրության» գաղափարը՝ առանց հստակեցնելու դրա չափորոշիչները: Աշխատավարձի բազային չափի՝ նվազագույն աշխատավարձի կառուցվածքային ու բովանդակային վերափոխումների անհրաժեշտության հարց չի դրվում, որևէ անդրադարձ չկա վարձատրության այնպիսի կոմպոնենտների, ինչպիսիք են միջին աշխատավարձի հետ հարաբերակցության օպտիմալությունը, գնողունակության մակարդակը, գնաձևը, նվազագույն սպառողական բյուջե հասկացությունը և այլն: Վարձատրության հարցը դիտարկվում է պարզագույն՝ ավելացման կամ նվազեցման սխեմայով, ըստ այդմ շեշտադրվում է վարձատրության ոլորտում պետական քաղաքականության կատարելագործման, աշխատավարձերի շարունակական բարձրացման խնդիրը՝ առանց որևէ ցուցանիշ սահմանելու: Այս տեսանկյունից նվազագույն ամսական աշխատավարձն ընդամենը 11 փոկոսով բարձրացնելու կառավարության նախաձեռնությունը հիմնականում ձեռնպահ քվեարկելով կուսակցությունը փորձեց ոչ միայն չհակասել իր ծրագրային մոտեցումներին, այլև վերահաստատվել որպես այլընտրանք:

Ամփոփման փոխարեն. Չնայած կառավարության այս նախաձեռնության նկատմամբ խորհրդարանական ընդդիմադիր ուժերի մերժողականությանը՝ նվազագույն աշխատավարձի օպտիմալ չափի որոշման հարցում չձևավորվեց միասնական մոտեցում: Այսինքն, քաղաքական մեծամասնության ծրագրային խոստումները սիմվոլիկ մակարդակով իրագործելու հակվածությանը քաղաքական փոքրամասնությունը պատասխանում է առանց ընդհանուր հիմնավորման և միասնական քաղաքական դիրքորոշման:

ԲՅՈՒՋԵ 2013

«2012թ. ՀՀ հիմնական ֆինանսական փաստաթուղթը կրում էր հետաճգնաժամային ազդեցությունների բեռը: Գրեթե նույն չափանիշներով է կազմել նաև 2013թ. ՀՀ պետական բյուջեն և անկախ հանգամանքից, որ նախատեսում է եկամտային հողավածների աճ, այն հիմնվում է ոչ թե փոփոխական զարգացմամբ ապահովված բյուջեային մուտքերի ավելացման և ծախսերի ընդլայնման քաղաքականության, այլ հարկային վարչարարության և օրենսդրական բարեփոխումների վրա»:

Փորձագիտական վերլուծությունից
(վերլուծությունն ամբողջությամբ հավելվածում)

2012թ. դեկտեմբերի 5-ին ընդունվեց «2013թ. ՀՀ պետական բյուջեի մասին» օրենքը ձայների 71 կողմ, 37 դեմ հարաբերակցությամբ:

Աժ հանձնաժողովները, խմբակցությունները և պարզամավորները ներկայացրել էին 400-ից ավելի առաջարկ: Կառավարությունն ընդունել էր դրանցից մոտ 60-ը, շուրջ 200-ի առնչությամբ լուծումները հնարավոր էր համարել առաջիկա տարիներին: Բյուջեի եկամտային և ծախսային մասերը սկզբնականի համեմատությամբ ավելացան մոտ 1-ական մլրդ դրամով:

Բյուջե 2013. հիմնական ցուցանիշներ

Եկամուտներ` 1 տրիլիոն 32 մլրդ դրամ (2012 -ի ցուցանիշից մոտ 121 մլրդ դրամով կամ 13 տոկոսով ավելի):

Ծախսեր` 1 տրիլիոն 15 մլրդ դրամ (մոտ 10 տոկոսով կամ 131 մլրդ դրամով նախորդ տարվա ցուցանիշից ավելի):

Բյուջեի պակասուրդ` 119.8 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 2.64 տոկոսը:

Հարկեր - ՀՆԱ հարաբերակցություն` 21.8 տոկոս (2012-ի ցուցանիշից մոտ 1 տոկոսով ավելի):

Բյուջեի ծախսերի 42 տոկոսը կառավարությունը նախատեսում է հատկացնել սոցիալական ոլորտին, 21 տոկոսը` պաշտպանությանը, 14 տոկոսը` փոփոխության ճյուղերին, 4.6 տոկոսը` պետական պարտքի սպասարկմանը (52,5 մլրդ դրամ): 2013թ-ին կառավարությունը 6.2 տոկոս փոփոխական աճ է ակնկալում 2012 թ. 7 տոկոսանոց ցուցանիշի փոխարեն, իսկ գնաճի համար ծրագրում է վերջին տարիներին կրկնվող 4 ±(1,5%) ցուցանիշը: (Տես էջ 52)



ԱԺ ՕՐԵՆՆԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ըստ կառավարության՝ 2013թ. պետական բյուջեն հիմնվել է այն երեք սկզբունքների վրա, որոնցով կազմվել է կառավարության հնգամյա գործունեության ծրագիրը և թիրախավորվել են 4 հիմնական նպատակներ՝ փոփոխական աճի պահպանում, սոցիալական քաղաքականության ընդլայնում, գործարար ու ներդրումային միջավայրի բարելավում և մակրոփոփոխական կայունության ապահովում:

Բյուջե 2013-ին խորագիր-բնորոշում չփոփոխելով, սակայն այն ուներ իր առանձնահատկությունը. կառավարությունը խոստովանեց, որ 2013-ը մեզ համար սահմանափակ հնարավորությունների տարի է լինելու: Առաջին հերթին դա պայմանավորված է նախկինում վերջնական վարկերի մարման ժամանակացույցով. 2013-ը լինելու է պետա-կան պարտքերի մարման պիկը: Դա իր դրոշմն է դրել բյուջեի ծախսային մասի վրա, որը կազմվել է «խնայելու գիտակցումով»:

ԱԺ 6 խմբակցություններից 4-ը դեմ արտահայտվեց բյուջեին: Հաջորդ տարվա գլխավոր ֆինանսական փաստաթուղթը պաշտպանեցին միայն կոալիցիոն կուսակցությունները:

ՀՀԿ-ն կողմ էր նախագծին՝ այն իրափոխական ու հավասարակշռված համարելով և ընդգծելով, որ փաստաթուղթը զերծ է նախընտրական հնարավոր պոպուլիզմի դրսևորումներից:

ՕԵԿ-ը կողմ էր՝ հիմնականում քաղաքական-կոալիցիոն համերաշխությունից ելնելով, թեև նշում էր նաև, որ փաստաթղթում արտացոլված են իր ծրագրի որոշ դրույթներ:

ԲՀԿ-ն դեմ քվեարկեց փաստաթղթին՝ այն որակելով «սողալու բյուջե», որը չի ապահովելու կենսամակարդակի բարելավում:

ՀՅԴ-ն դեմ քվեարկեց բյուջեի նախագծին՝ արժանահավատ չհամարելով միջոցների սղության մասին կառավարության հիմնավորումները:

ՀԱԿ-ը դեմ քվեարկեց՝ տարբեր ասպեկտներով քննադատության ենթարկելով կառավարության բյուջեփայլին քաղաքականությունը և փաստաթուղթը որակելով «արտագաղթի բյուջե»:

«Ժառանգությունը» ևս դեմ էր՝ համոզված, որ բյուջեն առաջընթաց չի ապահովելու:

Բյուջե 2013. փորձագիտական եզրակացություններ

- ▲ 2013թ. ՀՀ բյուջեն իր ակնկալիքներով զուսպ է այնքանով, որքանով կրելու է համաշխարհային տնտեսության դանդաղող աճի և արտաքին այլ գործոնների ազդեցությունը, իսկ նման իրավիճակներում հավակնոտ կամ խիստ ընդլայնողական քաղաքականությունը չի խրախուսվում: Մյուս կողմից, խնդիրը պարտքերի ներգրավման հաշվին բյուջեի ծախսային մասի ընդլայնման սահմանափակ հնարավորություններն են, որը հաշվի է առնվել բյուջեի նախագծի կազմման ժամանակ:
- ▲ ՀՀ-ում 2009թ-ից սկսած ՀՆԱ-ի կազմում ներդրումները կրճատվում են և 2012թ-ին կանխատեսվում է, որ կկազմեն 26.3%` 2009 թ. 34.7%-ի փոխարեն: Սա նշանակում է, որ ՀՀ տնտեսության նկատմամբ կա վստահության պակաս, ինչպես նաև միջոցներ ներգրավելու խնդիր: Այս ցուցանիշը նախատեսվում է բարելավել 2013թ-ին` հասցնելով ՀՆԱ-ի 26.9%-ի, սակայն իրողություն է, որ ներդրումները ՀՆԱ-ի կազմում հեղձգնաժամային ժամանակահատվածում մոտ 8%-ով կրճատվել են:
- ▲ 2013թ. բյուջեով հիմնական հարկատեսակների գծով հարկային բեռն ավելանալու է, ինչը բյուջեի մուտքերի և եկամտային մասը համալրելու առումով դրական է, սակայն խնդիրը կրկին ուղղակի և անուղղակի հարկերի միջև համամասնությունն է, քանի որ տնտեսության կայունության տեսանկյունից նպատակահարմար է, որ աճեն ուղղակի հարկերը: Մինչդեռ` ամենամեծ աճ սպասվում է ԱԱՀ-ի գծով (85,4 մլրդ դրամ), որը դրական համարել չի կարելի:
- ▲ Ծախսային հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ պաշտպանության և տնտեսական հարաբերությունների ծախսերն առաջանցիկ աճ կունենան, իսկ կրթության և սոցիալական պաշտպանության համար նախատեսված ծախսերը գրեթե չեն աճի:
- ▲ 2013թ. բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները կլինեն առավելապես արտաքին և ցածր տոկոսադրույքներով ներգրավված միջոցները, ինչը կարելի է համարել դրական միտում` նախորդ բյուջեի տարվա համեմատությամբ, որտեղ գերակշռում էին հիմնականում ներքին աղբյուրները:

Դրական զարգացումներ

- ▲ Դրական զարգացումների համադրվածությունն պետք է նշել 2012թ-ին սպասվող ՀՆԱ-ի հավելաձևը, որը կազմելով 7.1%՝ հնարավորություն է ընձեռում կուտակել որոշակի փոփոխական ներուժ և այն օգտագործել 2013թ. ընթացքում:
- ▲ Դրական պետք է համարել նաև ՀՀ պետական բյուջեի պակասուրդը ցածր մակարդակի վրա պահելու հանգամանքը, քանի որ բարձր պակասուրդի պարագայում ՀՀ կառավարությունը ստիպված է ավելի մեծ միջոցներ ներգրավել ներքին և արտաքին աղբյուրներից, իսկ առկա պարտավորությունների պայմաններում դա խիստ ռիսկային կարող է լինել:
- ▲ Բյուջեի ծախսերի փոփոխական դասակարգման համադրական վերլուծության արդյունքում կարելի է նշել, որ այսօրվա հստակ համամասնություններ չկան, սակայն ամբողջական պահանջարկի խթանման և պետական շինարարության ծավալները մոտ 97 մլրդ դրամով ավելացնելով փորձ է արվում խթանել շինարարության ոլորտը: Հետզհետե մասնաշաղկապների համադրվածությունը վերջինը կարող է խթանել նոր աշխատատեղերի ստեղծումը և նպաստել փոփոխության մեջ շինարարության անկում ապրող տեմպերի ակտիվացմանը:

Բացասական զարգացումներ

- ▲ Բացասական զարգացումներից կարելի է դիտարկել համաշխարհային փոփոխության մեջ առկա ռիսկային երևույթները՝ եվրոպական պարտքային և կենսաթոշակային ձգնաժամերի հնարավոր ազդեցությունը, ԱՊՀ երկրների և Չինաստանի փոփոխական աճի դանդաղող տեմպերը, որոնք որպես արտաքին գործոն կարող են ազդել ՀՀ փոփոխության, ինչպես նաև բյուջեի կատարման վրա:
- ▲ Հարկային օրենսդրության փոփոխությունները (պայմանավորված 2013թ. հուլիսի 1-ից եկամտային հարկի կիրառմամբ) կառաջացնեն որոշակի դժվարություններ մասնավոր հատվածի համար՝ ավելացնելով նրանց վրա դրված հարկային բեռը:
- ▲ 2013թ. պետական բյուջեի գործառնական ծախսերի հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ կան ծախսային խմբեր (հանրային ծառայություններ, պաշտպանություն, փոփոխական հարաբերություններ և այլն), որոնք աճել են շատ ավելի մեծ չափով, քան մյուսները, և որևէ համամասնություն 2012թ. ծախսերի համեմատությամբ աճի առումով չի պահպանվել:
- ▲ ՀՀ կառավարության ստանձնած վարկային պարտավորությունների փոփոխությունների և վարկային միջոցների մասհանումների 2013 թ-ին սպասվող միտումների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք կհասնեն 415.4 մլն ԱՄՆ դոլարի:



ԱԺ ՕՐԵՆՆԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Այսինքն, ՀՀ կառավարությունն ունի ծանր պարտավորություններ, քանի որ ՀՆԱ-ի 3.7%-ը ստիպված է լինելու ուղղել պարտքերի մարմանը:

Անփոփոխ իրավիճակներ

- ▲ Համադրելով 2012 և 2013թթ. ՀՀ պետական բյուջեների փիլիսոփայությունը և գաղափարախոսական հենքը՝ կարող ենք փաստել, որ դրանք նման են այնքանով, որքանով հեղափոխական գարգայումների համապետքստում էական տեղաշարժեր չեն նախատեսում: Մյուս կողմից՝ համաշխարհային տնտեսության մեջ նկատվող տնտեսական աճի տեմպերի դանդաղումը ստիպում է ոչ թե ունենալ ամբիփոփոխ նպատակներ, այլ պահպանել կայունությունը և չկիրառել խիստ ընդլայնողական քաղաքականություն:
- ▲ Բյուջեի ծախսային մի շարք հոդվածներ, ծախսային մասն ընդհանուր առմամբ 121 մլրդ դրամով ավելացնելու պարագայում, չնչին փոփոխությունների են ենթարկվել, և սա փաստում է նրա մասին, որ ծախսերը համաչափ կերպով չեն հասել յուրաքանչյուր ոլորտ: Իհարկե, կան տնտեսության համար առավել կարևոր նշանակության ոլորտներ, սակայն զարգացման տեսանկյունից նպատակահարմար է ծախսերի համաչափ բաշխվածությունը:

ՀԱՐԿԱՅԻՆ ՓԱԹԵԹՆԵՐ

«Հակառակ կառավարության այն հայտարարություններին, թե «Եկամտային հարկի մասին» օրենքի կիրառմամբ հարկային բեռը չի ավելանա, իրականությունն այլ բան է հուշում:

Նոր օրենքով այլևս հարկվելու է աշխատանքից ազատման դեպքում վճարվող արձակման նպաստը, էապես նվազելու են նաև ժամանակավոր անաշխատունակության (այդ թվում հղիության) նպաստների չափերը: Օրենքի կիրառման արդյունքում մինչև 116 հազար դրամ աշխատավարձ ստացողի նպաստը 2013թ. հունվարի 1-ից կպակասի առնվազն 20 փոկոսով»:

«Շրջանառության հարկի ազդեցությունը ՓՄՁ-ների գործունեության վրա ուղղակիորեն կախված է նրանց շահութաբերության մակարդակից. առնվազն 17.5% շահութաբերություն ունեցողների համար է արդարացված այս հարկատեսակը, իսկ այն ՓՄՁ-ները, որոնց շահութաբերությունը ցածր է 17.5%-ից, հայտնվելու են ոչ նպաստավոր պայմաններում: ՀՀ ԱՎԾ փվյալներից դիտարկելով կազմակերպությունների ֆինանսների հատվածի ցուցանիշները՝ նկատում ենք, որ նման բարձր շահութաբերություն մի շարք ոլորտներում, ինչպես նաև մարզերի կազմակերպություններում, չկա:

Հավանական է, որ շրջանառության հարկի ներդրման դեպքում ՓՄՁ-ները կունենան դժվարություններ, քանի որ ստիպված կլինեն թաքցնել իրենց շրջանառությունը կամ բարձրացնել իրենց կողմից մատուցվող ծառայությունների և վաճառվող ապրանքների գները՝ ապահովելու համար բարձր շահութաբերություն, որը կհանգեցնի նրանց մրցակցային հնարավորությունների թուլացմանը»:

Փորձագիտական վերլուծությունից
(վերլուծությունն ամբողջությամբ հավելվածում)



ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2012թ. նոյեմբերի 13-ին ընդունվեց «Եկամտային հարկի մասին» օրենքում և հարակից մի շարք օրենքներում փոփոխություններ ու լրացումներ սահմանող օրենսդրական փաթեթը՝ ձայների 72 կողմ, 5 դեմ, 22 ձեռնպահ հարաբերակցությամբ: 2012թ. դեկտեմբերի 19-ին ընդունվեց «Շրջանառության հարկի մասին» օրենքը՝ հարակից 6 օրենքներում փոփոխություններ ու լրացումներ սահմանող օրինագծերով՝ ձայների 68 կողմ, 7 դեմ, 12 ձեռնպահ հարաբերակցությամբ:

Օրենսդրական այս փաթեթը ներկայացվեց և բոլոր ընթերցումներն անցավ հաջող կարգով կառավարության նախաձեռնությամբ հրավիրված դեկտեմբերի 17-19-ի արտահերթ նստաշրջանի ընթացքում:

Եկամտային հարկ

«Եկամտային հարկի մասին» օրենքը ընդունվել է 2010թ. դեկտեմբերի 12-ին, ուժի մեջ է մտնելու 2013թ. հունվարի 1-ից: Նույն պահից ուժը կորցրած են ձանաչվել «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքները: «Եկամտային հարկի մասին» օրենքով նախատեսվում է մեկ միասնական հարկարեսակի՝ եկամտային հարկի կիրառում, եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների փոխարեն:

«Եկամտային հարկի մասին» օրենքի 25-րդ հոդվածի համաձայն, եթե նոր հարկարեսակի կիրառումը հանգեցնում է մինչ այդ վճարվող աշխատավարձի նվազման, ապա գործատուն իր միջոցների հաշվին կրում է լրացուցիչ պարտավորություն՝ աշխատողին այդ տարբերությունը վճարելու համար. պարտավորվում է այնքան բարձրացնել աշխատողի անվանական աշխատավարձը, որ միասնական հարկային վճար կատարելուց հետո տնօրինվող եկամուտը մնա նույնը:

Օրենքի 25-րդ հոդվածի կատարումն ապահովելու նկատառումով համապատասխան փոփոխություններ կատարվեցին մի շարք օրենքներում (2 փաթեթով): Դրանցից մեկով («ՀՀ դատական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և հարակից օրենքներում փոփոխությունների նախագծեր) բարձրացվեցին ՀՀ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններում աշխատողների պաշտոնային դրույքաչափերը և վերանայվեցին որոշ ոլորտներում հանրային ծառայողների աշխատավարձերի հաշվարկման գործակիցները, մյուսով («Եկամտային հարկի մասին» և հարակից օրենքներում փոփոխությունների նախագծեր) զինծառայողների և նրանց հավասարեցված անձանց, ինչպես նաև փրկարարական ծառայության ծառայողների եկամուտները ներառվեցին եկամտահարկի համակարգում (ըստ կառավարության ապահովելու հավասար հարկման դաշտ բոլորի համար): Միաժամանակ վերանայվեցին նշված ծառայողների աշխատավարձերը՝ եկամտահարկի մասին նոր օրենքի կիրարկման պայմաններում նախկին դրույքաչափերը պահպանելու նպատակով:



Շրջանառության հարկ

Օրենքով նախատեսվում է նոր հարկադրեցիվ շրջանառության հարկի ներդրում: Տարեկան մինչև 58.35 մլն դրամ (առանց ԱԱՀ-ի) իրացման շրջանառություն ունեցող փոփոխվողների համար ներդրվում է շրջանառության հարկի համակարգ, որը ենթադրում է հարկային պարտավորությունների պարզ հաշվարկում՝ շրջանառության նկատմամբ որոշակի փոկոսներով:

Նոր հարկադրեցիվ ներդրմամբ կառավարությունը հարկային բեռի ավելացում կամ նվազում չի ակնկալում դրա բյուջեային ազդեցությունը գնահատելով չեզոք: Փոխարենը ակնկալվում է, որ կբարելավվեն այն ցուցանիշները, որոնք կարևոր են doing business-ում ավելի բարձր դիրք գրավելու համար: Որպես հիմնական առավելություն կառավարությունը նշում է հաշվեփոխությունների օպտիմալացումը. շրջանառության հարկ վճարողներն այսուհետ կներկայացնեն 4 հաշվարկ-հաշվեփոխություն և 4 անգամ էլ կվճարեն իրենց հարկերը:

Փաթեթում ընդգրկված մյուս օրինագծերում առաջարկվող փոփոխություններով հիմնականում հարկային վարչարարության խստացումներ են նախատեսվում. եականորեն բարձրացվում են փուլերն ու փուլանքներն այն կազմակերպությունների համար, որոնք հարկային իրավախախտումներ են թույլ տվել:

Հարկային երկու փաթեթները խորհրդարանում ակտիվորեն քննարկվեցին, բայց ԱԺ խմբակցությունների կողմից դիրքորոշումներ չներկայացվեցին:

Պարզամավորներին հատկապես անհանգստացնում էր կառավարության շտապողականությունը. նրանց կարծիքով՝ փոփոխությունները հարկային վարչարարության լուրջ խստացումներ են նախատեսում, որոնց պարտապարտելու համար փոփոխվողներին ժամանակ էր պետք:

ՀՀԿ-ն և ՕԵԿ-ը հարկային փաթեթներին կողմ են քվեարկել, ԲՀԿ-ն՝ հիմնականում ձեռնպահ, ՀԱԿ-ի, ՀՅԴ-ի և «Ժառանգության»՝ նիստին ներկա պարզամավորները դեմ են քվեարկել:



ԱԺ ՕՐԵՆԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՀՀԿ. Հարկաբյուջեբային և կենսաթոշակային ոլորտներում ՀՀԿ-ն հանդես է գալիս գործադիրի քաղաքականության շարունակականության դիրքերից: Կուսակցությունն ընդամենը հռչակագրային ոճով նախանշում է քաղաքացիների կենսաթոշակային-կուրակային հաշիվների կրկնապատկման և աշխատավարձերի վճարման սրվեբայնության կրճատման նպատակներ: Ծրագրում հստակ չեն եկամտային հարկի ներմուծման սույիալ-տնտեսական ակնկալիքները:

Շրջանառության հարկի կտրվածքով իրավիճակը շատ ավելի որոշակի է, որովհետև հիմնվելով ընթացիկ քաղաքականության վրա, ՀՀԿ-ն ծրագրում ամրագրում է խիստ շոշափելի ուղենիշներ՝ կապված հատկապես հարկային վարչարարության և փաստաթղթաշրջանառության սահմանափակումների հետ: Բիզնես միջավայրի բարելավման խնդիրը լուծելու համար առաջնային է համարվում հարկային վարչարարության պարզեցումը, շահութահարկի նվազագույն շեմի աստիճանական վերացումը, հարկային հաշվեպնդությունները, տեղեկություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու հնարավորության ապահովումը և խնդրո առարկայի համատեքստում ամենակարևորը՝ ՓՄՁ-ների համար պարզեցված հարկային դաշտի ձևավորումը: Հենց այս նպատակներն է հետապնդում շրջանառության հարկի ներդրումը: Այս համատեքստում ՀՀԿ-ն փաստացի գործել է իր ծրագրային մոտեցումներին համահունչ:

ՕԵԿ-ը միանշանակ կողմ է արտահայտվել հարկային այս երկու փաթեթներին: Սակայն ի տարբերություն այլ նախաձեռնությունների, երբ խմբակցության քվեարկությունն ուղղակիորեն պայմանավորվում է կոալիցիոն պարտավորություններով ու ՀՀԿ-ից կախվածությամբ, այս դեպքում առկա է նաև ծրագրային մոտեցումներով առաջնորդվելու գործոնը: Այս իրողությունն ընդգծվում է «Շրջանառության հարկի մասին» օրենքի և հարակից այլ օրենքներում փոփոխությունների նախագծերի նկատմամբ խմբակցության դիրքորոշումներում: Հարկային դաշտի և հարկային վարչարարության շարունակական պարզեցմանը, հարկատու-հարկային աշխատակիցներ շփումները սահմանափակելուն, հաշվեպնդությունների քանակական նվազեցմանը, էլեկտրոնային հաշվեպնդությունների համակարգի ընդլայնմանը՝ ՓՄՁ-ների զարգացման համար, ծրագրում հիմնաքարային նշանակություն է տրվում: Այս առումով ՕԵԿ-ի ծրագրային շեշտադրումներն ավելի առարկայական են, քան նույնիսկ ՀՀԿ-ի պարագայում:

ՀՅԴ-ն եկամտային և շրջանառության հարկերի ներդրման օրենսդրական փաթեթներին դեմ է արտահայտվել: Առաջինի պարագայում դա տրամաբանական է, եթե հաշվի առնենք, որ խմբակցությունն ընդհանրապես դեմ էր կենսաթոշակային համակարգում կատարվող փոփոխություններին, որին ծառայեցվում է այս հարկատեսակի ներդրումը: ՀՅԴ-ն ծրագրում անդրադառնում է եկամտահարկին՝ առանց հաշվի առնելու, որ այդ, ինչպես նաև պարտադիր սույիալական ապահովության վճարների ինստիտուտը պետք է վերանայի դեռ 2010-ին ընդունված օրենքի հիման վրա (այս բացն առկա է նաև ԱԺ բոլոր խմբակցությունների ծրագրերում):

Այսպիսով, ՀՅԴ-ն ծրագրային մոտեցում չունի կատարված փոփոխության վերաբերյալ, իսկ հարկային դաշտին վերաբերող իր դիրքորոշումները ներկայացնելիս՝ ավելի շատ կարևորում է եկամուտներն արդարության սկզբունքով հարկելու ինստիտուտի կայացումը և սպառողական նվազագույն զամբյուղի գումարային արժեքի ոչ ցածր կենսաթոշակի սահմանումը: Բայց ՀՅԴ-ն ունի մի համոզմունք, որը եռությամբ է հակասում օրենսդրական փաթեթի տրամաբանությանը. նա բացառում է նվազագույն աշխատավարձի հարկումը, մինչդեռ ընդունված փաթեթը որևէ տարբերակում չի սահմանում:

ՀՅԴ-ն դեմ էր նաև շրջանառության հարկի ներդրմանը: Չնայած կուսակցությունն իր նախընտրական ծրագրում առանձին հարված է հարկայրել ՓՄՁ-ների զարգացմանը, սակայն դրան հասնելու միջոց համարել է հիմնականում հարկային և վարկային արտոնությունների կիրառումը: Մինչդեռ կառավարության ներկայացրած փաթեթը դրա հնարավորությունը չի տալիս: Ինչ վերաբերում է հարկային վարչարարությանը, բյուրոկրատական մեխանիզմներին և ՓՄՁ-ների գործունեության վրա դրանց ազդեցությանը, իր ծրագրում ՀՅԴ-ն գրեթե չի անդրադարձել:

ՀԱԿ-ը եկամտային հարկի ներդրմանը դեմ է քվեարկել՝ պայմանավորված իրականացվող բարեփոխումների նկատմամբ ունեցած անվստահությամբ: Առարկությունները պայմանավորված են 2՝ նախ՝ գործափուների կողմից վարձու աշխատողների իրական աշխատավարձը թաքցնելու հետ կապված ռիսկի մեծացման, երկրորդ՝ կենսաթոշակային ֆոնդերը փաստացի վերացնելու գործոններով, ինչը հակասում է ՀԱԿ-ի՝ բաշխողական կենսաթոշակային համակարգի պահպանման և ընդամենը կամավոր կուտակային կենսաթոշակային ֆոնդերի ստեղծման ելակետային դիրքորոշմանը: ՀԱԿ-ն այն կարծիքին է, որ եկամտահարկը ոչ թե պետք է նման ճևափոխությունների ենթարկել, այլ պահպանելով առաջիկա 10-15 տարիներին և ներդնելով եկամտահարկի պրոգրեսիվ սանդղակ, շահութահարկի համեմատ տրոստադրույքն ավելի բարձրացնել: Սա ՀԱԿ-ի կողմից առաջարկվում է որպես հարկային բեռը ՓՄՁ-ների խոշոր բիզնես տեղափոխելու և աստիճանաբար նրանց տեսակարար կշիռները բալանսավորելու ճանապարհ: Հետևաբար, եկամտահարկի ներդրմանը Կոնգրեսի բացասական դիրքորոշումը բխում է նրա ծրագրային գաղափարախոսությունից:

ՀԱԿ-ի բացասական վերաբերմունքը շրջանառության հարկի ներդրման հարցում, սակայն, միանշանակ չէ: Շրջանառության, ընդհանրապես պարզեցված հարկման մեխանիզմի ներդրումը Կոնգրեսի տեսլականում հարկաբյուջեի տեսակետից, տնտեսական առողջացման և ՓՄՁ-ների զարգացման համար նախապայմանի նշանակություն ունի: Ըստ այդմ՝ Կոնգրեսի դիրքորոշման պարագայում սկզբունքային է համարվել ոչ թե ինքնին այս հարկատեսակի սահմանումը, այլ սահմանափակումները, որոնք ընդգծում են ընդունված օրենսդրական փաթեթի և ՀԱԿ-ի ծրագրային մոտեցումների միջև առկա որոշ հակասությունները: ՀԱԿ-ն այս հարկատեսակի համար որևէ տարբերակում չի դնում գործունեության տեսակների, ոլորտների միջև, մինչդեռ ընդունված փաթեթում այդպիսի տարբերակումներ կան ոչ միայն ոլորտների, այլև հարկման տրոստադրույքների մակարդակով:

ԲՀԿ-ն դեռ կոալիցիայի անդամ էր, երբ 2010թ-ին ԱԺ-ն ընդունեց «Եկամտային հարկի մասին» օրենքը: Բավարար պատասխանատվություն և հետևողականություն դրսևորելու պարագայում խմբակցությունը պետք է սկզբունքորեն դեմ չլիներ նաև անցած նստաշրջանում կառավարության բերած նախագծերի փաթեթներին, չնայած իրեն արդեն այլընտրանք էր հռչակել: Մինչդեռ՝ 2012թ. նոյեմբերին փաթեթի վերջնական ընդունմանը ԲՀԿ-ն դեմ արտահայտվեց: Ավելի ուշ, դեկտեմբերին հրավիրված արտահերթ նստաշրջանում, ԲՀԿ-ն հիմնականում ձեռնպահ քվեարկեց պետժառանգողների աշխատավարձերի դրույքաչափերը եկամտահարկի ռեժիմին համապատասխանեցնելուն ուղղված օրենսդրական փաթեթին: Սա վկայում է այս հարցում ԲՀԿ վարքագծի փոփոխության մասին:

ԲՀԿ-ն իր նախընտրական ծրագրում հարկային դաշտի կտրուկ, համակարգային վերափոխումների խնդիր չի դնում և եկամտահարկի վերաբերյալ որևէ մոտեցում չի արտահայտում: Սակայն հակասական այս դիրքորոշումները չեն փեղավորվում «պետական քաղաքականության կատարելագործման» նրա ծրագրային հիմնադրույթի ծիրում, թեև մյուս կողմից քննարկումների ժամանակ մտահոգություն հայտնեցին, թե անցումը եկամտահարկին կավելացնի գործադուրների հարկային բեռը:

Շրջանառության հարկի ներդրմանը ևս ԲՀԿ-ն ձեռնպահ է քվեարկել՝ առանց հստակեցնելու նման անվստահության պատճառները: Խնդիրն այն է, որ իբրև ՓՄՁ-ների զարգացման ճանապարհ, ԲՀԿ-ն առաջ է քաշում նաև պետական վերահսկողության և միջամտության առավել մեղմ ռեժիմներ սահմանելու տարբերակը, ինչը, կառավարության հիմնավորմամբ, դրված է այս օրենսդրական փաթեթի տրամաբանության մեջ: Մյուս կողմից՝ ԲՀԿ-ն ՓՄՁ-ների ոլորտի առողջացման ևս երկու մեխանիզմ է առաջադրում՝ պետբյուջեի 0,5-2 տոկոսի չափով պետական ֆինանսական աջակցության ցուցաբերում և վարձու աշխատող չունեցող անհատ ձեռնարկատերերին հարկերից ազատում, որոնց վերաբերյալ ներկայացրել է 2 օրենսդրական նախագծեր: Չի կարելի բացառել, որ այս փաթեթի վերաբերյալ ԲՀԿ-ի դիրքորոշման վրա մի կողմից ազդել է այս օրինագծերի մերժումը, մյուս կողմից՝ կառավարության՝ հարկային բեռը չավելացնելու մասին ոչ համոզիչ հիմնավորումները:

«Ժառանգությունը» ծրագրում առաջարկում է եկամտահարկի պրոգրեսիվ համակարգ, որտեղ հարկման տոկոսային դրույքաչափերը խիստ տարբերակված են՝ ըստ եկամուտների աճի, իսկ նվազագույն աշխատավարձի հարկում չի նախատեսում ըստ էության կողմ լինելով եկամտահարկի գործող համակարգի կատարելագործմանը: Կենսաթոշակային համակարգի վերաձևման առումով «Ժառանգության» ծրագիրը ևս ոչ մի մոտեցում չի պարունակում: Ուշագրավ է, որ «Ժառանգություն»-ը կողմ կամ ձեռնպահ է քվեարկել պետժառանգության ոլորտում աշխատավարձերի դրույքաչափերը եկամտային հարկման ռեժիմին համապատասխանեցնելուն ուղղված օրենսդրական փաթեթին, ինչը չի համընկնում կուրակային կենսաթոշակային համակարգի ներդրման նկատմամբ դրսևորված մոտեցմանը:



ԱԺ ՕՐԵՆԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Շրջանառության հարկի պարագայում «Ժառանգության» վարքագիծն ավելի երկիմաստ է: Իր ծրագրում այն ամրագրում է գրեթե բոլոր նպատակները, որոնք ընկած են առաջարկվող դրույքաչափերով ու եղանակներով շրջանառության հարկը ներդնելու անհրաժեշտության՝ քաղաքական մեծամասնության փաստարկումների առանցքում: Թեև կան նաև որոշ տարբերություններ, սակայն, ըստ էության, կառավարության ներկայացրած նախագիծը կարող էր «Ժառանգության» կողմից ընկալվել որպես իր ծրագրային նպատակադրումներն իրագործելու նախադրյալների ստեղծման հնարավորություն: Օրինագծերի փաթեթի քննարկումների ընթացքում, սակայն, «Ժառանգությունը» ամենապասիվ խմբակցություններից մեկն է եղել՝ չբացատրելով իր համոզմունքների և վարքագծի հակասությունները:

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

2012թ. նոյեմբերի 12-ին ընդունվեց «Կուտակային կենսաթոշակների մասին» օրենքում և հարակից 11 օրենքներում փոփոխություններ ու լրացումներ սահմանող օրենսդրական փաթեթը՝ 69 կողմ, 32 դեմ ձայների հարաբերակցությամբ:

Փաթեթով կառավարությունը փոփոխություններ և լրացումներ է կատարում դեռևս 2010թ-ին ընդունված մայր փաթեթում, որով Հայաստանում ներդրվում է կենսաթոշակային համակարգի բազմաստիճան մոդելը. գործող բաշխողական համակարգը լրացվում է երկու նոր՝ պարտադիր և կամավոր կուտակային աստիճաններով: Կամավոր կենսաթոշակային համակարգը Հայաստանում ներդրվել է 2011թ-ից, 2014թ. հունվարի 1-ից նախատեսվում է պարտադիր կուտակային բաղադրիչի ներդրումը: Վերջինիս հիմքում ոչ թե քաղաքացու աշխատանքային սրածի տարիներն են, այլ՝ կատարված սոցիալական վճարների չափը:

2014թ. հունվարի 1-ից պարտադիր կուտակային համակարգի մասնակից են դառնալու այն վարձու աշխատողներն ու անհատ ձեռնարկատերերը, որոնց 40 տարին չի լրացել:

Պարտադիր կենսաթոշակային կուտակային վճարները կազմելու են աշխատավարձի 10 տոկոսը, որի կեսը՝ 5 տոկոսը, բայց ոչ ավելի, քան 25000 դրամը, վճարելու է պետությունը: Լիազոր մարմինը վարելու է անձնավորված հաշվառում: Յուրաքանչյուր մասնակցի համար բացվելու է անհատական կենսաթոշակային հաշիվ՝ կատարված խնայողությունների համար:

Կենսաթոշակային գումարները ինդեքսավորվելու են՝ ըստ գնաձևի և ինֆլյացիայի տեմպերի: Միջոցները կուտակվելու են հիմնադրամներում և ներդրվելու են տնտես-սուղային տարբեր ոլորտներում՝ շահույթ ապահովելու նպատակով: Անձն ինքն է ընտրելու (ցանկության դեպքում փոխելու) այն ֆինանսական կազմակերպությունը, որն իրականացնելու է կենսաթոշակային խնայողությունների կառավարումը: Պետությունը երաշխավորում է, որ անձի կողմից կատարած կենսաթոշակային վճարները կվերադարձվեն:

Նոյեմբերի 12-ին ընդունված օրենսդրական փոփոխություններով, ըստ էության, լրամշակվում է 2010թ-ին ընդունված օրենքը, տեխնիկական և ընթացակարգային բնույթի հարցեր են լուծվում հստակեցնելով այն մեխանիզմները, որոնցով 2014թ-ից ներդրվելու է պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը:



ԱԺ ՕՐԵՆՍՊՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Խորհրդարանական քննարկումներն ընթացյան ոչ այնքան առաջարկվող փոփոխությունների, որքան ընդհանրապես կենսաթոշակային նոր համակարգի ներդրման նպատակահարմարության, հնարավոր ռիսկերի ու երաշխիքների հուսալիության շուրջ:

Օրենսդրական փաթեթը ԱԺ-ն ընդունեց քաղաքական ծայրահեղ բևեռացման պայմաններում: 4 խմբակցություններ առաջին ընթերցման ժամանակ բոյկոտեցին քվեարկությունը, իսկ երկրորդին հիմնականում դեմ քվեարկեցին: Անցումը պարտադիր կուրակային համակարգին հատկապես սուր քննադատության ենթարկեցին ՀԱԿ-ն ու ՀՅԴ-ն:

Ըստ ՀՅԴ-ի՝ նոր համակարգի ներդրումը ոչ միայն չի լուծելու կենսաթոշակային համակարգի խնդիրները, այլև խորացնելու է դրանք: Կուսակցությունն առաջարկում է ներդնել պայմանական կուրակային համակարգ:

ՀԱԿ-ը պաշտպանում է կամավոր կենսաթոշակային համակարգը, իսկ անցումը պարտադիրին ժամանակավրեպ է համարում:

Խոսք և գործ. կուրակային կենսաթոշակներ

ՀԱԿ. Դեռևս 2010թ-ին հրապարակած կենսաթոշակային բարեփոխումների մասին իր հեղինակած ծրագրով Կոնգրեսն առաջ էր քաշում կենսաթոշակային խառը՝ բաշխողականին զուգահեռ կամավոր կուրակային համակարգի մոդելը: Այն կառավարության ներկայացրած օրենսդրական փաթեթին հակադրվում է 3 հիմնական կետում: Առաջին՝ Կոնգրեսը նախապատվությունը տալիս է կենսաթոշակի կուրակման կամավորության սկզբունքին, կառավարությունը՝ պարտադիր: Երկրորդ՝ ըստ ՀԱԿ-ի՝ կենսաթոշակի մաս կազմող համավճարները պետք է մուծի գործատուն, փաթեթով այդ պարտականությունը դրվում է պետբյուջեի վրա: Երրորդ՝ կենսաթոշակային հիմնադրամների գումարները պետք է մնան Հայաստանում և ներդրվեն երկրի տնտեսության արտադրական և սոցիալական ենթակառուցվածքներում, և պետությունն էլ պետք է վերահսկի ակտիվների կառավարումը, մինչդեռ ընդունված փաթեթով մնան սահմանափակումներ դրված չեն: ՀԱԿ-ն առաջարկում է նաև աշխատավարձում կենսաթոշակային վճարների չափաբաժնի աստիճանական աճ՝ տասը տարի հետո 8 տոկոսի հասցնելու հեռանկարով: Շեշտադրումները կատարում է կենսաթոշակային միջոցների վերադարձելիության, կառավարման ռիսկերի նվազեցման և պետության պատասխանատվության վրա: Ըստ այդմ՝ դեմ քվեարկելով կառավարության ներկայացրած փաթեթին՝ ՀԱԿ-ը հավատարիմ է մնում իր ծրագրային հիմնադրույթներին, քանի որ դրանք փաթեթին հակասում են սկզբունքային կետերում:

Սակայն ՀԱԿ-ն իր դիրքորոշումը ԱԺ-ում պաշտպանեց ոչ այնքան այդ հակադրությունների վրա շեշտադրումներ կատարելով՝ որքան պատճառաբանելով նման ծրագրի ներդրման անհամարելիությունը Հայաստանի սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական իրողություններին:

ՀՅԴ ծրագրում կոնկրետացված է միջին աշխատանքային կենսաթոշակի չափը՝ 63 հազար դրամ, բայց հստակեցված չէ այս կրկնակի բարձրացման մեխանիզմը: Այն համապատասխանում է «յուրաքանչյուր քաղաքացու համար կենսապահովման նվազագույն բյուջեից ոչ ցածր եկամուտ» ապահովելու ելակետային դրույթին, թեև այս ձևակերպումը թույլ չի փախ հասկանալ, թե որքանով են գնաճը և ինֆլյացիան՝ կենսապահովման նվազագույն բյուջեի վրա ազդող երկու հիմնական ռիսկային գործոնները, հաշվի առնված: ՀՅԴ ծրագրային մոտեցումը կառավարության քաղաքականությունից ևս փարբերվում է նրանով, որ ոչ թե միանգամից ու ամբողջական անցում է առաջարկում բաշխողականից պարտադիր կուտակային համակարգի, այլ եվոլյուցիոն՝ սկզբի համար կենսաթոշակային խառը համակարգ ներդնելու միջոցով:

ՀՅԴ-ն, սակայն, չի բացատրում, թե այս երկու ձևերի ինչպիսի համադրում է պարկերացնում, թեև այդ անորոշությունը որոշակի ձկունություն է ապահովում խմբակցության գործողությունների համար՝ ի փարբերություն ՀԱԿ-ի, որն առաջարկում է կոնկրետ մեխանիզմներ: Սակայն, չնայած այս երկու խմբակցություններն առաջարկվող փաթեթի նկատմամբ հանդես եկան նույն՝ մերժողական դիրքորոշմամբ, ՀՅԴ հիմնավորումները շատ ավելի առարկայական էին: ՀՅԴ առարկությունները վերաբերում էին քաղաքացիների եկամուտների հարկման մեխանիզմը սկզբունքորեն փոխելուն, ինչն արվում էր փաթեթում ներառված «եկամտային հարկի մասին» օրենքով: Խմբակցությունը նաև կարծում էր, որ մեծ է կենսաթոշակային հիմնադրամներում կուտակված միջոցների կառավարման ռիսկայնությունը և որ ներկայացվածը ընդամենը բանկային համակարգին լրացուցիչ շրջանառու միջոցներով ապահովելուն ուղղված փաթեթ է: Եթե այս հիմնավորումներն ընդունենք որպես վերոնշյալ ծրագրային անորոշության մեղմացում, ապա ՀՅԴ-ն իր քաղաքական կեցվածքով դուրս չի եկել ծրագրային մոտեցումների շրջանակից:

«Ժառանգության» նախընտրական ծրագրի՝ սոցիալական ոլորտին առնչվող բաժնում կենսաթոշակային համակարգը ոչ ներկայով, ոչ էլ, առավել ևս, տեսլականով արտացոլված չէ, հետևաբար դժվար է ասել՝ այս ոլորտին առնչվող նրա գործունեությունը որքանով է համահունչ կամ հակասող ծրագրին: Կարելի է անգամ կարծել, որ կուսակցությունը կենսաթոշակային համակարգի ընտրության հարցը սոցիալական ապահովման և արդարության մեխանիզմ չի դիտարկում կամ այս ոլորտում եական խնդիրներ չի տեսնում: Սակայն նման ընկալումը չի տեղավորվում ընդհանուր սոցիալական համակարգին վերաբերող նրա ծրագրային մյուս հիմնադրույթների փիլիսոփայության մեջ: Դա է պատճառը, որ մինչև քվեարկությունը «Ժառանգությունը» չհստակեցրեց իր դիրքորոշումը խնդրի վերաբերյալ՝ պաշտոնական կարծիք չհնչեցրեց, ելույթով հանդես չեկավ, և փաթեթին, այնուամենայնիվ, դեմ քվեարկեց:

Որևէ հիմնավորմամբ իր քվեարկությունը չբացատրելը թույլ է տալիս եզրակացնել, որ «Ժառանգությունը» դեմ է արտահայտվել՝ միայն ընդդիմության միասնականությունը չխախտելու նկատառումներով:

ԲՀԿ ծրագրի թերևս ամենաընդհանրական և կոնկրետությունից զուրկ հատվածը կենսաթոշակային ոլորտն է: Դրան վերաբերող ծրագրային հենքը ոչ թե համակարգային փոփոխությունների, այլ «աշխատանքի քանակին, որակին, և գնաձին համարժեք» վարձավարության և նորմալ կենսապահովման համար բավարար թոշակի ապահովման անհրաժեշտության դիտարկումն է: ԲՀԿ-ն դնում է ընդամենը «պետա-կան քաղաքականության կատարելագործման» խնդիր, ինչը նշանակում է ծրագրային մակարդակով խրախուսել պարտադիր կուտակային համակարգին անցնելու ներկայիս քաղաքականությունը: Սա բնական է. կամավոր կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրումը սկսվել է 2010թ-ին՝ նախատեսելով 2014թ-ին անցում կատարել պարտադիր կուտակային համակարգին: Այդ ժամանակ ԲՀԿ-ն ոչ միայն կոալիցիայի մաս էր, այլև ստանձնել էր սոցիալական ոլորտի քաղաքականության իրականացման կոալիցիոն քվոտան, այսինքն՝ լիարժեք պարասխանավորություն էր կրում գործադիրի քաղաքական կուրսի համար: Մինչդեռ՝ փաթեթին ԲՀԿ-ն դեմ քվեարկեց՝ հիմնավորելով, թե պարտադիր կուտակային համակարգին պետք է անցնել «այն ժամանակ, երբ երկրում մի քանի տարի անընդմեջ տնտեսական աճ գրանցվի»: Սեղմելու համար նախկին և ներկա դիրքորոշումների հակասությունը ԲՀԿ-ն կառչեց միջանկյալ՝ առայժմ միայն կամավոր կուտակային համակարգը զարգացնելու գաղափարից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2010-11թթ. համակարգային այս փոփոխությունները նրա մասնակցությամբ են սկսվել ու շարունակություն ստացել, ԲՀԿ-ի նորովի մոտեցումը պետք է գնահատել քաղաքական-իրավիճակային և ծրագրային հիմնադրույթներին հակասող:

ՕԵԿ նախընտրական ծրագրի՝ կենսաթոշակային ոլորտին վերաբերող հատվածն աչքի է ընկնում կոնկրետությամբ: ՕԵԿ-ն առաջարկում է ոլորտի արմատական բարեփոխում՝ կուտակային ապահովագրական համակարգի ներդրում և գործող կենսաթոշակների բարձրացում միջին աշխատավարձի 35 փոկոսից ոչ պակաս: Կարևորված է կենսաթոշակների ինդեքսավորումը գնաձին համապատասխան:

Խմբակցությունը կառավարության ներկայացրած փաթեթին կողմ է քվեարկել, ինչը համապատասխանում է ծրագրային հիմնադրույթների առաջին բաղադրիչին: Սակայն քննարկումներին ՕԵԿ-ը գրեթե չի մասնակցել, ինչը թույլ չի տալիս հստակ ասել, թե որքանով է կենսաթոշակային հիմնադրամների և միջոցների կառավարման՝ օրինագծով նախատեսված մեխանիզմները լիարժեք համարում: Նույնը վերաբերում է նաև ծրագրային երկրորդ՝ թոշակների բարձրացման բաղադրիչին: Այսինքն՝ քննարկումներից խուսափելը կարելի է ընկալել իբրև խուսափում այս համակարգի արդյունավետության համար քաղաքական պարասխանավորությունից, իսկ կողմ քվեարկելը՝ կոալիցիոն պարտավորվածություն:



ԱԺ ՕՐԵՆՆԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՀՀԿ Իրական իշխանություն ունեցող կուսակցության նախընտրական ծրագրում կենսաթոշակային համակարգի վերաբերյալ ընդամենը երկու նախադասություն կա: Դրանցով միայն ամրագրվում է համակարգի բարեփոխումների շարունակականության սկզբունքը, ինչպես նաև դրվում է պետական բյուջեի միջոցներով կենսաթոշակային միջոցները կրկնապատկելու խնդիր: Ծրագիրը զերծ է բարեփոխումների կոնկրետ ժամկետների և մեխանիզմների հստակեցումից: Ուշագրավ է, սակայն, որ ՀՀԿ-ն ծրագրում խոսում է ոչ թե կուսակցային համակարգի ներդրման պրոպեցիա հանգուցալուծելու, այլ սկսելու մասին, թեև այս փոփոխությունների ուղղությամբ քաղաքական քննարկումներն սկսվել էին դեռևս 2001-2002թթ-ին և օրենքի տեսք ստացել 2010թ-ին, որի հիման վրա 2011թ-ին սկսեց գործել կամավոր կուսակցային համակարգը: Բացի դրանից՝ ծրագրի հաշվեպվության մասում, որը զուգահեռաբար ներկայացվում է ըստ յուրաքանչյուր ենթաուղղորդի, կամավոր կուսակցային համակարգի ներդրման մասին առհասարակ որևէ հիշատակում չկա: Սա թույլ է տալիս եզրակացնելու, որ կամավոր կուսակցային համակարգի ներդրումը իշխանական կուսակցությունը չի ընկալել իբրև լիարժեք բարեփոխման շրջափուլ:

Այսպիսով՝ ՀՀԿ-ՕԵԿ տանդեմը, ապահովելով կառավարության ներկայացրած օրենսդրական փաթեթի ընդունումը, ամբողջական պատասխանատվություն ստանձնեց մի համակարգի ներդրման համար, որի պտուղներն սկսելու են ի հայտ գալ 25-26 տարի հետո:

ԱԺ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2012թ. դեկտեմբերի 19-ին ընդունվեց «ԱԺ կանոնակարգ» օրենքում լրացումներ և փոփոխություններ սահմանող օրենքը՝ ձայների 70 կողմ, 6 դեմ հարաբերակցությամբ: Նախագծի հեղինակները ՀՀԿ խմբակցությունը ներկայացնող պարզամավորներ Դավիթ Հարությունյանն ու Արփինե Հովհաննիսյանն էին:

Օրինագիծը ներառվեց կառավարության նախաձեռնությամբ հրավիրված արտահերթ նստաշրջանի օրակարգ՝ առանց գլխադասային հանձնաժողովի եզրա-կացության, և քննարկվեց հատուկ կարգով: Նախագծի նպատակը էթիկայի հանձնաժողովում հավասարակշռություն ապահովելն էր: Առաջարկվում էր օրենքում եղած ընդդիմադիր և ոչ ընդդիմադիր եզրույթները փոխարինել իշխանական և ոչ իշխանական բառերով, տրվում էր իշխանական խմբակցության սահմանումը: Այդ խմբակցությունները, ըստ առաջարկվող փոփոխության, էթիկայի հանձնաժողովում ունենալու էին հավասար թվով ներկայացուցիչներ:

Առաջարկվում էր նաև էթիկայի հանձնաժողովի որոշումներն ու եզրակացությունները ընդունված համարել ձայների մեծամասնությամբ, եթե դրանց կողմ է քվեարկել առնվազն մեկական ներկայացուցիչ իշխանական և ոչ իշխանական խմբակցություններից: Ընդդիմադիր խմբակցությունների գնահատմամբ՝ այս առաջարկությունը ոչ այլ ինչ էր, քան մեծամասնությանը տրվող վերոյի իրավունք: Նրանք բուն քննադատության ենթարկեցին օրինագիծը:

ԲՀԿ-ն դեմ էր առաջարկվող փոփոխություններին՝ հիմնավորմամբ, թե հանձնաժողովում հարցերը քննարկման են դրվելու միայն մեծամասնության ցանկությամբ: ՀՅԴ-ն համոզված էր, որ ՀՀԿ-ն փորձում է քաղաքականացնել հանձնաժողովի գործունեությունը, ՀԱԿ-ը պնդում էր, թե մեծամասնությունը ուզում է, որ իր ձայնը որոշիչ դառնա նաև էթիկայի հանձնաժողովում, «Ժառանգությունը» առաջարկում էր բոյկոտել նման հանձնաժողովի աշխատանքները:

Արդյունքում նախագծի հեղինակները նկատելի մեղմացումներ կատարեցին իրենց առաջարկած փոփոխություններում. հրաժարվեցին «իշխանական» և «ոչ իշխանական» եզրույթներից և ընդդիմախոսների կողմից «վեպոյի իրավունք» որակված դրույթից:

ԲՀԿ-ն, ՀԱԿ-ը, «Ժառանգությունը» քվեարկությանը չմասնակցեցին, ՀՅԴ-ն դեմ քվեարկեց, չնայած քվեարկությունից առաջ նրանք բոլորն էլ հայտարարել էին, որ նախագիծը առաջին ընթերցումից հետո բարեփոխվել է:

Էթիկայի հանձնաժողովի քաղաքականացման վնասները (փորձագիտական վերլուծություն)

ԱԺ էթիկայի հանձնաժողովի ձևավորման կարգում և որոշումների ընդունման ընթացակարգում առաջարկվող փոփոխություններով քաղաքական մեծամասնությունը փորձում էր մի քանի խնդիր լուծել. ԱԺ քաղաքական ուժերի փարբերակումը «ընդդիմադիրների» և «ոչ ընդդիմադիրների» առաջարկվում էր փոխարինել «իշխանական» և «ոչ իշխանական» բաժանումով՝ այս դասակարգումից դուրս մնացած ԲՀԿ-ի քաղաքական կարգավիճակը որոշակիացնելու համար: Ամրագրվում էր վեպոյի իրավունքը, որով հանձնաժողովի ցանկացած անդամ կարող էր փախալել ցանկացած որոշման կամ եզրակացության ընդունում: Դա նշանակելու էր անգործության մատնել էթիկայի հանձնաժողովը. քաղաքական դիմակայության պարագայում մեծամասնության և փոքրամասնության ներկայացուցիչները փոխադարձաբար արգելափակելու էին միմյանց նախաձեռնությունները:

Այս փոփոխությունները հեղինակները հիմնավորվում էին հանձնաժողովում քաղաքական հավասարակշռություն հաստատելու, մեծամասնության և փոքրամասնության իրավունքները հավասարապես պաշտպանելու անհրաժեշտությամբ:

Էթիկայի հանձնաժողովը իրավական հեղևանքներ ծնող որոշումներ կամ եզրակացություններ չի ընդունում: Այն ընդամենը կոչված է բարոյական դաշտում և էթիկայի նորմերի սահմաններում զնահատելու, մեկնաբանելու ԱԺ պատգամավորների վարքագիծը, գործունեությունը: Հետևաբար, որքան էլ ընդդիմությունն այս հանձնաժողովում մեծամասնություն կազմեր, այն ոչ պետական կառավարման, ոչ էլ իրավաստեղծ ու իրավակիրառ պրակտիկայի վրա ազդելու հնարավորություն չէր ունենալու:



ԱԺ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Մյուս կողմից՝ հանձնաժողովը ձևավորվել էր «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հիման վրա, որը պետական կառավարման ինստիտուտներում էթիկական նորմերի ներդրումը և դրանց կիրառման նկատմամբ վերահսկողություն իրականացնող էթիկայի հանձնաժողովների ստեղծումը դիտարկում է հակակոռուպցիոն պայքարի համապատասխանում: Պատահական չէ, որ ԱԺ կանոնակարգով սահմանված ԱԺ պարզամավորի էթիկայի կանոններում ներառված են հակակոռուպցիոն ուղղվածության դրույթներ: Էթիկայի հանձնաժողովի ամենահիմնական գործառույթներից մեկը, ըստ ԱԺ կանոնակարգի 24.2 հոդվածի, շահերի բախման բացահայտման պարագայում համապատասխան որոշումներով ու եզրակացություններով հանդես գալն է: Այսինքն՝ հանձնաժողովն օժտված է հակակոռուպցիոն և վերահսկողական որոշակի գործառույթներով: Ընդդիմության՝ հանձնաժողովում մեծամասնություն կազմելու իրողությունն ստեղծում է այդ գործառույթների կատարման նախադրյալներ՝ հաշվի առնելով իրենց ֆունկցիաները կատարելու հարցում ընդդիմադիրների առավել մեծ շահագրգռությունը: Քաղաքական հավասարակշռման անվան տակ ԱԺ փոքրամասնությանն այդ մոտիվացիայից զրկելով՝ ԱԺ մեծամասնությունը կասկածի տակ է դնում կոռուպցիայի դեմ պայքարում իր արտահայտած վճռականության ազնվությունը: Մինչդեռ՝ էթիկայի հանձնաժողովները պետական կառավարման համակարգում ներդրվել և օրենքի ուժով նման գործառույթներով օժտվել են՝ ի կատարումն ԵՄ և GRECO-ի առջև ստանձնած հանձնառությունների:

Օրենսդրական այս նախաձեռնությունը նաև հակասում է ավելի վաղ ԵԽ-ի առջև Հայաստանի ստանձնած պարտավորությունների տրամաբանությանը: Դեռ 2008թ. Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովն ընդունել էր Հայաստանի վերաբերյալ թիվ 1601 և 1620 բանաձևերը, որոնցով, ի թիվս այլոց, դրված էին նաև քաղաքական համակարգի նկատմամբ հասարակության և ընդդիմության վստահության վերականգնման, ընդդիմության դերակատարությունը բարձրացնելու պահանջներ: Հենց դրանց կատարման նպատակով 2011թ. «ԱԺ կանոնակարգ» օրենքում ընդունվեցին քաղաքական ենթադրույթով ամենակարևոր փոփոխությունները, որոնք իրավական կարգավիճակ սահմանեցին քաղաքական ընդդիմության համար՝ զգալի արտոնություններ նախատեսելով արտահերթ նիստերի հրավիրման, ԱԺ հանձնաժողովների ղեկավարման առումով: Էթիկայի հանձնաժողովի ձևավորման հիմքում ի սկզբանե դրված սկզբունքներն այս նպատակադրումների կենսագործման առումով նոր նվաճումներ էին, որոնց ֆոնին նման օրենսդրական նախաձեռնությունը միանշանակ պետք է նահանջողական որակել: Չմոռանանք նաև, որ նախագիծը մշակվեց և քննարկման ներկայացվեց ԱԺ խմբակցությունների «թիկունքում»՝ առանց դրանց շուրջ հանրային քննարկումներ ծավալելու: Սա ոչ միայն մարնում է նախագիծը հապճեպորեն, ժամ առաջ անցկացնելու և արագ գործողության մեջ դնելու թաքնված մարտավարությունը, այլև թույլ է տալիս ենթադրել, որ հետագայում, առիթի դեպքում, մեծամասնությունը կարող է նորից նման նախաձեռնությամբ հանդես գալ: Իսկ փաստը, որ պարզամավորների հեղինակած նախագիծը ԱԺ է ներկայացվում կառավարության նախաձեռնությամբ, առավել քան խոսում է. օրինագիծը «թաքնվելով» կառավարության ներկայացրած փաթեթների մեջ, ԱԺ մեծամասնությունը գործադիր իշխանությանը հնարավորություն տվեց միջամտել պառլամենտի ներքին կանոնակարգային հարաբերություններին:



ԱԺ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Վերահսկողությունը ՀՀ սահմանադրությամբ օրենսդիր մարմնին վերապահված կարևորագույն գործառույթներից է: Երկրի Մայր օրենքով սահմանված է՝

Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կազմակերպման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ:

Ազգային ժողովը վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ քննարկում և հաստատում է պետական բյուջեի կազմակերպման մասին փարեկան հաշվետվությունը:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 77

Վերահսկիչ պալատը փարեկան ոչ պակաս, քան մեկ անգամ Ազգային ժողով է ներկայացնում վերահսկիչ պալատի վերահսկողական աշխատանքների արդյունքների հաշվետվությունը:

ՀՀ Սահմանադրություն, հոդված 83.4

Ի լրումն՝ ԱԺ կանոնակարգ օրենքով սահմանվում են նաև այլ պետական մարմինների կողմից խորհրդարանին փարեկան գործունեության ծրագրեր, հաշվետվություններ և հաղորդումներ ներկայացնելու անհրաժեշտությունն ու ընթացակարգերը:

Տեղեկանք: Աշնանային նստաշրջանի ընթացքում խորհրդարանն ի գիտություն է ընդունել 3 հաղորդում (Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի երկու՝ 2010 և 2011թթ., Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2011թ. գործունեության մասին հաղորդումները), հաստատել է 2 ծրագիր (Վերահսկիչ պալատի և Ազգային վիճակագրական ծառայության 2013թ. գործունեության վերաբերյալ) և 2 հաշվետվություն (2011թ. բյուջեի, 2006-2007թթ. պետական գույքի մասնավորեցման 2011թ. ծրագրի կազմակերպման մասին), 2-ն էլ (Վերահսկիչ պալատի և Կենտրոնական բանկի 2011թ. ծրագրերի կազմակերպման մասին) լսել, քննարկել ու ի գիտություն է ընդունել:

ԱԺ կանոնակարգը փարեք ընթացակարգեր է նախատեսում նույնաբնույթ գործընթացների համար. մասնավորապես՝ որոշ դեպքերում հաշվետվությունները հաստատվում են ԱԺ որոշման ընդունմամբ, որոշ դեպքերի համար սահմանված է, որ խորհրդարանը պարզապես լսում ու փորձեցնում է (ի գիտություն է ընդունում) առանց որևէ փաստաթուղթ ընդունելու:

Նոր ձևավորված խորհրդարանը հատկապես ուշադրություն հրավիրեց այդ հանգամանքի վրա, երբ քննարկում էր ՀՀ վերահսկիչ պալատի իրականացրած վերահսկողական գործունեության արդյունքների մասին տարեկան հաշվետվությունը: Կարծիքներ հնչեցին, որ այդ քննարկումները որևէ իրավական հետևանք չեն կարող ունենալ, քանի որ օրենքը չի նախատեսել խորհրդարանի վերաբերմունքի ձևակերպում ընդունված փաստաթղթի տեսքով:

Իրավական հետևանքների տեսանկյունից անորոշություններն այդքանով չէին սահմանափակվում:

Թե Կենտրոնական բանկի 2011թ. դրամավարկային ծրագրի կատարման հաշվետվությունը, թե Բյուջե 2011-ի կատարողականը և թե Վերահսկիչ պալատի տարեկան հաշվետվությունը, համաձայն ԱԺ կանոնակարգ օրենքի, պետք է քննարկեր նախորդ գումարման խորհրդարանը գարնանային նստաշրջանի ընթացքում, ինչը չի արել խորհրդարանական ընտրություններով ԱԺ աշխատանքում տրված դադարի պատճառով: Եվ, փաստորեն, նախորդ խորհրդարանի հաստատած փաստաթղթերի կատարման մասին հաշվետվությունների քննարկման բեռն ստիպված էր ստանձնել նոր գումարման խորհրդարանը:

Ժամկետանց այդ հաշվետվությունների մեջ կարևորությամբ առանձնանում էր պետական բյուջեի կատարողականը, որի վերաբերյալ օրենքով նախատեսվում է Ազգային ժողովի կողմից համապատասխան փաստաթղթի ընդունում: Այսինքն՝ խորհրդարանն իրավասու է ընդունելու կամ չընդունելու բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը: ԱԺ կանոնակարգ օրենքով սահմանված է, որ բյուջեի հաշվետվության քննարկման համար նախատեսված ընթացակարգի ավարտին վարչապետը կամ ֆինանսական բնագավառի լիազորված մարմնի ղեկավարը կարող է առաջարկել՝

ա) քվեարկության դնել բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը,

բ) բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը հաստատելու առնչությամբ դնել Կառավարության վստահության հարցը»:

Նոր ձևավորված խորհրդարանի կողմից նախորդ կառավարության հաշվետվությանը գնահատական տալը բացառապես ձևական բնույթ ուներ, որովհետև, ֆորմալ առումով, այդ ժամկետանց հաշվետվությունը ներկայացրած կառավարությունը ձևավորվել էր մայիսին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններից հետո և կարող էր, տեսականորեն, միանգամայն այլ կազմ ունենալ: Այսինքն՝ կարող էր ոչ մի կապ չունենալ ծրագիրը կատարած-չկատարած կառավարության հետ: Եվ այդ դեպքում ո՞ւմ վստահության հարցը կարող էր դրվել խորհրդարանում:



ԱԺ վերահսկողական գործառույթի ձևականացման միտումները. փորձագիտական վերլուծություն

Որքան խորհրդարանը հետևողական է իր վերահսկողական գործառույթն իրացնելիս, այնքան կայացած է պառլամենտարիզմը և արդյունավետ իշխանության թևերի ներդաշնակ փոխազդեցությունը:

Սահմանադրությամբ և օրենսդրությամբ ՀՀ Ազգային ժողովը օժտված է նման իրավասությամբ. այն դրսևորվում է խորհրդարանի առջև գործադիր և դատական մարմինների հաշվետվությունների ներկայացմամբ, որոշ պատասխանատու պաշտոններում նշանակումներ կատարելու գործընթացին մասնակցությամբ: Վերահսկողությունը, սակայն, հայաստանյան պառլամենտարիզմի պարագայում առավելապես հիպոթետիկ և ձևական բնույթ ունի՝ առնվազն երկու պատճառով:

Առաջինը խորհրդարանի վերահսկողական գործառույթն ապահովող իրավական բազայի անլիարժեքությունն է՝ հատկապես պատասխանատվության առաջադրման իմաստով: Բացառությամբ կառավարության ծրագրի հաստատման և նախորդ արված բյուջեի կատարման հաշվետվության պետական համակարգի մյուս ինստիտուտների հաշվետվությունները խորհրդարանը քննարկում է «ի գիտություն ընդունելու» ռեժիմով: Չնայած հաշվետվությունների հրապարակայնության ապահովմանը, այդուհանդերձ, որոշում կայացնելու իրավասություն չունենալը խորհրդարանին զրկում է իշխանության մյուս թևերի արդյունավետության վրա ազդելու հնարավորությունից:

Երկրորդը՝ ունեցած վերահսկողական գործառույթն ինքնակամորեն, իշխանական համակարգի և հատկապես գործադիրի շահերին զոհելու հաստատված քաղաքական ավանդույթն է, որը ձևական է դարձնում սահմանադրորեն օրենսդիրն վերապահված իրավասության կիրառումը: Չնայած այսերևույթը հատուկ էր նաև նախորդ գումարման խորհրդարանին, սակայն նոր ձևավորված ԱԺ-ում քաղաքական մեծամասնության փոփոխության ավելացումն ավելի է սահմանափակել կատարողականների շուրջ ակտիվ դերապանների հնարավորությունն ու ազդեցությունը:

Սկզբունքորեն նոր ու պառլամենտի դերը նսեմացնող միտում էր հաշվետվությունների ներկայացման՝ օրենսդրորեն սահմանված ժամկետների խախտման նկատմամբ խորհրդարանական մեծամասնության լոյալությունն ու հանդուրժողականությունը:

ԱԺ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՐ

Աժ Էթիկայի առաջին հանձնաժողովը ձևավորվել է հինգերորդ գումարման Ազգային ժողովում՝ 2012թ. մարտին «Աժ կանոնակարգ» օրենքում կարարված փոփոխությունների և լրացումների հիման վրա

Հանձնաժողովի իրավասությունները. Համաձայն էթիկայի հանձնաժողովի գործունեությունը կարգավորող Աժ կանոնակարգ օրենքի՝ էթիկայի հանձնաժողովը եզրակացություն է ներկայացնում պարզամավորի կողմից Սահմանադրության 65-րդ հոդվածի 1-ին մասի խախտման («Պարզամավորը չի կարող զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, զբաղեցնել պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ առևտրային կազմակերպություններում, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից»), շահերի բախման առկայության, պարզամավորի էթիկայի կանոնների խախտման մասին, եթե ստանում է դրանց վերաբերող դիմումներ: Հանձնաժողովին կարող է դիմել յուրաքանչյուր ոք: Դիմումը քննելու համար օրենքը սահմանում է 30-օրյա ժամկետ, անհրաժեշտության դեպքում ավելացվում է ևս 15 օր: Դավիթ Հարությունյան (նախագահ, ՀՀԿ), Նիկոլ Փաշինյան (փոխնախագահ, ՀԱԿ), Մերուժան Սիմոնյան/Վահան Բաբայան (ԲՀԿ), Հովհաննես Մարգարյան (ՕԵԿ), Արծվիկ Մինասյան (ՀՅԴ), Զարուհի Փոստանջյան («Ժառանգություն»): հինգերորդ գումարման առաջին և երկրորդ նստաշրջաններում էթիկայի հանձնաժողովը գործեց այս կազմով: Հանձնաժողովում նախագահել են «Հանրապետական» խմբակցության ներկայացուցիչ Դավիթ Հարությունյանը (առաջին նստաշրջան) և «Հայ ազգային կոնգրես» խմբակցության ներկայացուցիչ Նիկոլ Փաշինյանը (երկրորդ նստաշրջան): Համաձայն Աժ կանոնակարգ օրենքի՝ հանձնաժողովը հաջորդաբար ղեկավարում են դրանում ներկայացված ամենամեծ և ամենափոքր խմբակցությունների ներկայացուցիչները: Էթիկայի հանձնաժողովի 6 անդամներից յուրաքանչյուրը ներկայացնում է խորհրդարանական 1 խմբակցություն: Նստաշրջաններից առաջ խմբակցությունը կարող է փոխել հանձնաժողովում իր ներկայացուցչին: Այդ հնարավորությունից առաջին և երկրորդ նստաշրջանների ընթացքում օգտվեց միայն ԲՀԿ խմբակցությունը:

Տեղեկանք. Հինգերորդ գումարման Ազգային ժողովի 1-ին և 2-րդ նստաշրջանների ընթացքում էթիկայի հանձնաժողովը իրավիճակ է 12 նիստ, սրացել է 13 դիմում: Դիմումներից 5-ը հանձնաժողովին են ուղարկել հասարակական կազմակերպությունները (դրանցից միայն 3-ը՝ «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնը), 7-ը՝ շարքային քաղաքացիներ, մեկը՝ Աժ պարզամավոր: 13 դիմումներից 9-ը մերժվել է, 4-ը՝ ընդունվել վարույթ: Վարույթ ընդունված 4 դիմումներից միայն մեկի վերաբերյալ է էթիկայի հանձնաժողովը 2012թ-ին եզրակացություն ներկայացրել: Դիմումը վերաբերում էր պարզամավոր Սամվել Ալեքսանյանին, իսկ դիմումատու ընթացքի վարողն էր Գասպարին Էր, ում ձեռքից, Ազգային ժողովի մոտ բողոքի ակցիա իրականացնելիս, Ալեքսանյանը խլել էր պաստառը: Էթիկայի հանձնաժողովը որոշեց, որ Սամվել Ալեքսանյանը խախտել է պարզամավորի էթիկայի վարքականոնը, ինչի մասին հայտարարվեց Աժ ամբիոնից:

Վարույթ ընդունված մյուս 3 դիմումների քննությունը 2012թ-ին դեռևս ընթացքի մեջ էր: Դրանցից մեկի հեղինակը ԱԺ ՀՅԴ խմբակցության ղեկավար Արմեն Ռուստամյանն է (դիմումը վերաբերում է 2012թ. նոյեմբերի 21-ի արտահերթ նիստից բացակայած 83 պատգամավորներին): Մյուս երկու դիմումները ստացվել են հասարակական կազմակերպություններից. «Ռազմավարական մշակումների կենտրոն» ՀԿ-ի դիմումը վերաբերում է ԱԺ ԲՀԿ խմբակցության պատգամավոր Միքայել Մելքումյանին: Դիմումատու, հիմնվելով Մելքումյանի մասին համապատասխան փորձված տեսագրության վրա, գտնում է, որ պատգամավորը զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ խախտելով սահմանադրական պահանջը: 2012թ. վարույթ ընդունված վերջին դիմումը «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի կողմից էր և վերաբերում էր պատգամավոր Միեր Սեդրակյանի պահվածքին «Ա1պլուս» հեռուստաընկերության լրագրող Միեր Արշակյանի նկատմամբ (պատգամավորը սպառնացել էր պոկել խորհրդարանում իրեն հարց ուղղած լրագրողի ծնոփը):

Արծվիկ Մինասյան, Էդուարդ Շարմազանով, Վարդան Այվազյան, Կարո Կարապետյան. այս պատգամավորների վերաբերյալ ստացված դիմումները էթիկայի հանձնաժողովը վարույթ չի ընդունել հիմնականում «դիմումում ներկայացված խնդրի քննությունը դուրս է հանձնաժողովի իրավասությունների շրջանակից» հիմնավորմամբ: Այս հիմնավորմամբ էթիկայի հանձնաժողովը հաճախ է ստիպված եղել մերժել դիմումները: ՀԱԿ ներկայացուցիչ և հանձնաժողովի նախագահ Նիկոլ Փաշինյանի մեկնաբանությամբ՝ պարճառն այն է, որ հասարակությունը դեռևս ճիշտ չի պարկերացնում, թե ինչի համար է սրբեղծվել ու գործում էթիկայի հանձնաժողովը, և դիմում է հարցերով, որոնք դուրս են հանձնաժողովի իրավասությունների ու գործառույթների շրջանակից:

5-րդ գումարման ԱԺ առաջին իսկ նստաշրջանի ընթացքում ընդդիմության ներկայացուցիչներ Արծվիկ Մինասյանն ու Նիկոլ Փաշինյանն արդեն խոսում էին Կանոնակարգ օրենքը փոփոխելու և էթիկայի հանձնաժողովի գործառույթներն առավել հստակեցնելու անհրաժեշտության մասին: Օրենքում փոփոխություններ կատարվեցին երկրորդ նստաշրջանի ավարտին՝ ՀՀԿ ներկայացուցիչներ Դավիթ Հարությունյանի և Արփինե Հովհաննիսյանի նախաձեռնությամբ. դրանք վերաբերում էին հանձնաժողովի ձևավորմանը:



Էթիկայի հանձնաժողովի արդյունավետությունը. փորձագիտական կարծիք

«Էթիկայի հանձնաժողովին ակնհայտորեն ավելի լուրջ նշանակություն է վերագրվում քաղաքացիական հասարակության, քան քաղաքական համակարգի կողմից»:

Գործունեության առաջին ամիսների ընթացքում էթիկայի հանձնաժողովի սրացած դիմումների քանակը թերևս ոգևորիչ է՝ նկատի ունենալով հանգամանքը, որ այս հանձնաժողովի ստեղծումը հայկական պառլամենտարիզմի մեջ էթիկայի մշակույթի ձևավորմանն ուղղված առաջին քայլն է: Սակայն փաստը, որ դիմումների մոտ 75 տոկոսը մերժվել է՝ ներկայացվող հարցերը հանձնաժողովի իրավասություններից դուրս լինելու հիմնավորմամբ, և այն, որ դիմումներից 11-ի հեղինակները հասարակական կազմակերպություններն ու քաղաքացիներն են, 2 եզրահանգման առիթ է տալիս:

- ▲ հանրային լայն շրջանակները հստակ պատկերացում դեռևս չունեն հանձնաժողովի իրավասությունների շրջանակի, նպատակների վերաբերյալ,
- ▲ էթիկայի հանձնաժողովը և էթիկական նորմերի պահպանումը խորհրդարանում դեռևս չեն ընկալվում որպես գործունեության արտաիրավական ինքնակարգավորման մեխանիզմ:

Էթիկայի հանձնաժողովին ակնհայտորեն ավելի լուրջ նշանակություն է վերագրվում քաղաքացիական հասարակության, քան քաղաքական համակարգի կողմից:

Պատգամավորների կարգապահական վարքագծին, բարոյական պատասխանատվությանը, շահերի բախման և հայտարարագրման վերահսկողությանը երկրորդական նշանակություն է տրվել: Պատճառները փարբեր են. նախ՝ ԱԺ կանոնակարգ օրենքով սահմանված էթիկայի նորմերը չափազանց հռչակագրային են: Դրանցով դժվար է կողմնորոշվել՝ պատգամավորների այս կամ այն հայտարարությունը, գործողությունը էթիկական նորմերի խախտում է, թե՞ ոչ: Մյուս կողմից՝ հանձնաժողովի որոշումները, եզրակացությունները խորհրդապահական բնույթի են և անգամ քննարկման ենթակա չեն ԱԺ լիազումար նիստերում: Սա խորհրդարանում էթիկայի մշակույթի կայացման հնարավորությունը չեզոքացնելու վտանգ է պարունակում, ինչի միտումներն արդեն առկա են: Չնայած Վ. Գասպարիի նկատմամբ ԱԺ պատգամավոր Ս. Ալեքսանյանի գործողությունները հանձնաժողովի կողմից հակաէթիկական որակելուն, արձանագրվեց նաև էթիկայի հանձնաժողովի վարույթում գործվող՝ ԱԺ պատգամավոր Մ. Սեդրակյանի կողմից լրագրող Մ. Արշակյանին կոպտելու և սպառնալու փաստը:

Շահերի բախման և հայտարարագրման վերահսկողության ձևականացումը դրսևորվում է նաև նրանով, որ չնայած փնտրման բնույթի մի շարք կարևոր օրենքների ընդունմանը և պարզամավորների շարքի՝ այս կամ այն ոլորտում ունեցած անթաքույց բիզնես հետաքրքրություններին, որևէ պարզամավոր հաղորդում չի փոխապակցված անձանց ունեցած շահերի մասին: Հիմանական պարճառն այն է, որ սահմանված չեն պարզամավորների կողմից առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները, բիզնես ոլորտները նախապես հայտարարագրելու մեխանիզմներ: Եթե պարզամավորը չի խոստովանում առկա շահերը, դրանց բացահայտումը դառնում է գրեթե անհնար:

Հանձնաժողովի միակ գործառույթը, որը կարող է հանգեցնել կոնկրետ հետևանքի՝ ընդհուպ պարզամավորի լիազորությունների դադարեցման, պարզամավորների կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու՝ սահմանադրական արգելքի պահպանման նկատմամբ վերահսկողությունն է: Էթիկայի հանձնաժողովի վարույթում գործող ԲՀԿ խմբակցության պարզամավոր Միքայել Մելքումյանի՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու փաստը թաքցնելու վերաբերյալ դիմումի քննությունը և հանձնաժողովի կողմից կայացվելիք որոշումը ջրբաժանային նշանակություն ունի՝ նման երևույթների դեմ ԱԺ Էթիկայի հանձնաժողովի պայքարելու ունակությունը «բացահայտելու» առումով:

Սակայն հանձնաժողովի արդյունավետությանը սպառնացող ռիսկերից հիմնականը քաղաքականացման նկատմամբ միտումն է: Այն արտահայտվեց, մի կողմից, հանձնաժողովի ձևավորման կարգը փոխելուն ուղղված օրենսդրական նախաձեռնությամբ, մյուս կողմից՝ մեծամասնության քաղաքական բոյկոտի հարցը Էթիկայի հանձնաժողովի քննարկման առարկա դարձնելու նախաձեռնությամբ: Հանձնաժողովը քաղաքական ամբիցիաներին ծառայեցնելու և գործիք դարձնելու փորձերն անխուսափելիորեն հանգեցնելու են այս ինստիտուտի վերջնական իմաստագրկմանը:

ՀԱՎԵԼՎԱԾ.

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2012 և 2013թթ. բյուջեների համեմատական վերլուծությունը

Բյուջեների¹ հիմնական փիլիսոփայությունը և գաղափարախոսական հենքը

Վիլեն Խաչատրյան Կրթության և գիտության նախարարի տեղակալ, դոցենտ

2012թ. Հայաստանի հիմնական ֆինանսական փաստաթուղթը կրում էր հերձճնաժամային ազդեցությունների բեռը: Գրեթե նույն չափանիշներով է կազմվել նաև 2013թ ՀՀ պետական բյուջեն, և անկախ այն հանգամանքից, որ նախատեսվում է եկամտային հողվածների աճ, վերջինս մեծամասամբ հիմնվում է օրենսդրական բարեփոխումների և հարկային վարչարարության վրա, որը կրթության և գիտության արդյունքում ապահոված բյուջեային մուտքերի վրա ծախսերի ընդլայնման քաղաքականության արդյունք է: 2013թ բյուջեն ևս իր ակնկալիքներով զուսպ է այնքանով, որքանով որ համաշխարհային կրթության աճի և կրթության դանդաղող արտաքին գործոնների ազդեցությունն է կրելու, իսկ նման իրավիճակներում հավակնոտ կամ խիստ ընդլայնողական քաղաքականությունը չի խրախուսվում: Մյուս կողմից խնդիրը պարտքերի ներգրավման հաշվին բյուջեի ծախսային մասի ընդլայնման սահմանափակ հնարավորություններն են, որը հաշվի է առնվել 2013թ.-ի ՀՀ պետական բյուջեի նախագծի կազմման ժամանակ: Փաստ է, որ կրթության աճի հաշվին զարգացման բյուջե ունենալ 2013թ.-ին կրկին չի հաջողվի:

Բյուջեի ծախսային բաշխումն ըստ եռամսյակների ունի համամասնական բնույթ, և ճգնաժամային 2009 թ-ին բնորոշ իրավիճակ, կարելի է ասել, չի նախատեսվում (երբ ծախսերի գերակշիռ մասը տեղափոխվում է սովորաբար 4-րդ եռամսյակ՝ հնարավոր մուտքեր ապահովելու ժամանակահատվածը երկարաձգելու համար): Պարտավորությունների և ծախսերի տեսանկյունից բեռն ընկած է 2-րդ և 4-րդ եռամսյակների վրա, որը փաստում է կայունության մասին:

Հայաստանի Հանրապետության կառավարության ուղերձում ներկայացված 2013 թ. սույիալ-կրթության և գիտության և հարկաբյուջեային քաղաքականության հիմնական ուղղությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ էական և առարկայական փոփոխություններ 2013թ-ին չեն նախատեսում, պարզապես ապահովվելու է 2012թ-ին իրականացված աշխատանքների շարունակականությունը:

Բյուջեների¹ ընդունման կրթության և գիտության նախարարի տեղակալի համեմատական վերլուծություն

¹Այսուհետ «բյուջեներ» ասելով հիմք է ընդունվում «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» և «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքները, որոնք համեմատական վերլուծության առարկան են:

**ՀԱՎԵԼՎԱԾ.
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

2011թ. որոշ մակրոտնտեսական ցուցանիշներով ավելի բարեհաջող էր, քան սպասվում է, որ կլինի 2012 թ., սակայն 2011 թ-ին դեռևս նկատելի էին 2009թ. տնտեսական անկման խորը հետևանքները: 2011 թ-ին ՀՆԱ-ի աճը կազմել է 4.7%, 2012 թ-ին սպասվում է, որ կկազմի 7.1%, իսկ ՄԺԾԾ 2013-2015թթ. շրջանակներում կանխատեսվում էր, որ 2012թ-ին ՀՆԱ-ի աճը կկազմի 4.2%:

Այսինքն՝ 2012թ. ՀՀ պետական բյուջեի ընդունման ժամանակ դեռևս ակնհայտ չէր, որ 2012թ. կլինի ավելի բարեհաջող: Ինչ վերաբերում է միջին գնաձին, այն 2011թ-ին կազմել է 7.7%, իսկ 2012 թ-ին սպասվում է 2.4%: Սա խոսում է այն մասին, որ 2012թ-ի բյուջեն ընդունելիս կային որոշակի գնաձային ռիսկեր, որոնց ինտրյուսիոն ընթացքը հարկավոր էր կանգնեցնել, ուստի ՀՀ ԿԲ կողմից վարվող դրամավարկային քաղաքականությունը պետք է լիներ ավելի կոշտ: Բյուջեի կազմման հիմքում դրվել է 4 (+/-1.5) տոկոս տարանման թուլաբերելի միջակայքում գտնվող 12-ամսյա գնաճը²: Հաշվի առնելով 2012թ-ի զարգացումները՝ սպասվող 4%-ին մոտ գտնվող գնաճը բարդ խնդիրների առաջ չի կանգնեցնի ՀՀ ԿԲ-ին և հնարավորություն կտա 2013թ-ին առանց կոշտ միջամտությունների պահպանել գնաճը թուլաբերելի մակարդակում:

Գնաձի միտումները 2009-2013 թթ.³

	2009	2010	2011	2012	2013
	Փաստ.	Փաստ.	Փաստ.	Սպաս.	Կանխ.
Գնաձ միջին	3.4	8.2	7.7	2.4	4.2
Գնաձ 12-ամսյա	6.5	9.4	4.7	4.0	4.0

ՀՀ-ում 2009թ-ից սկսած ՀՆԱ-ի կազմում ներդրումները կրճատվում են, և 2012թ-ին կանխատեսվում է, որ կկազմեն 26.3%՝ 2009թ-ի 34.7%-ի փոխարեն: Սա նշանակում է, որ ՀՀ տնտեսության նկատմամբ կա վստահության պակաս, ինչպես նաև միջոցներ ներգրավելու խնդիր: Այս ցուցանիշը նախատեսվում է բարելավել 2013թ-ին հասցնելով ՀՆԱ-ի 26.9%-ի, սակայն իրողությունն այն է, որ ներդրումները ՀՆԱ-ի կազմում մոտ 8%-ով կրճատվել են հետձգնաժամային ժամանակահատվածում:

²Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թ. սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջեարարին քաղաքականության հիմնական ուղղությունների մասին զեկույց (Ուղերձ), էջ 66:

Նշում. ՀՀ պետական բյուջեի կազմման ընթացքում ընդունված պրակտիկայի համաձայն և վերջին ամիսների տնտեսական զարգացումները ճիշտ արտահայտելու համար վերցվում է գնաձի 12-ամսյա ցուցանիշը, քանի որ միջին գնաճն այնքան էլ ճիշտ չի արտահայտում վերջին զարգացումները և միջինացնում է միտումներն ամբողջ տարվա կտրվածքով:

³Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թ. սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջեարարին քաղաքականության հիմնական ուղղությունների մասին զեկույց (Ուղերձ), էջեր 51-52:



**ՀԱՎԵԼՎԱԾ.
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ՀՀ պետական բյուջեի պակասուրդը 2011թ-ին եղել է 5%, որը 2012թ-ին կկազմի 3.1%: 2013 թ-ին այն կիջնի ևս 0.4-0.5 փոկոսային կեպով՝ կազմելով 2.64%: Պետք է նշել, որ 3%-ը չգերազանցող բյուջեի պակասուրդի ցուցանիշը խոսում է փոփոխական կայունության մասին, քանի որ նմանափայ խնդիրներ ունեն ԵՄ որոշ երկրներ ու վերջինիս արդյունքում բախվում են մի շարք դժվարությունների հետ՝ հատկապես պարտափոմների փոկոսադրույքների անկառավարելի աճի առումով:

Համեմատելով 2012թ. 2011թ. հետ՝ փոփոխության ճյուղերի իրական աճի միտումներից ելնելով՝ պետք է նշել, որ 2011թ-ին կար 16.0% արդյունաբերության և 13.6% գյուղատնտեսության աճ, իսկ շինարարության մեջ՝ -12.5% անկում: Այսինքն՝ որոշակի առումով, ի տարբերություն 2013թ. բյուջեի նախագիծն ընդունելու ժամանակահատվածի, 2012թ. բյուջեի կատարման համար կային ավելի շարժառիթներ փոփոխական պայմաններ: 2012թ. ՀՆԱ-ի 7.1% աճը թույլ էր տալիս ընդունել ավելի համարձակ բյուջե, սակայն պահպանողականությունն այս պարագայում երաշխավորում է նրա իրափոխականությունը և կատարողականի մեծ հավանականությունը:

Դիտարկելով 2013թ. արդեն իսկ ընդունված ՀՀ պետական բյուջեի և ՄԺԾԾ 2013-2015թթ. ցուցանիշների միջև կապը՝ նկատվում ենք, որ ՀՆԱ-ն շարժվելու շեղումով նախատեսվում է, որ կկազմի 4.537.3 մլն դրամ, ՀՆԱ-ի իրական աճը 3.8%-ի փոխարեն կկազմի 6.2%, բյուջեի պակասուրդը ևս առանց շեղում տալու կկազմի 2.64%: Շեղում նախատեսվում է փոխարժեքի գծով, այսինքն՝ նախատեսված էր, որ 1 ԱՄՆ դոլարը կկազմի 390.95 դրամ, սակայն, ըստ բյուջեի, այն կարժեգրվի մոտ 15 դրամով և կկազմի 405.52 դրամ: Փոխարժեքի 15 դրամով փոփոխումը կամ դրամի արժեգրվումը մինչև 405.52 կառաջացնի որոշակի դժվարություններ, քանի որ 2013 թ-ին ակնկալվող արտաքին օժանդակությունը պետք է կազմի 189.7 մլրդ դրամ, իսկ արտաքին վարկերի 2013 թ. սպասարկման ծախսերը՝ հիմնական գումարի մարումները և փոկոսավճարները՝ 225.4 մլն ԱՄՆ դոլար, մյուս կողմից՝ արտաքին աղբյուրների հաշվին պետական պարտքի սպասարկումը պետք է կազմի 64.5 մլրդ դրամ: Իհարկե, այսպեղ կան ելքերով և այլ արժույթներով ներգրավվող և վճարվող միջոցներ, ինչպես նաև հնարավոր է, որ լինեն կրկնահաշվարկներ, որի պարագայում դժվար է գնահատել, թե ինչ կարծենա դրամի արժեգրվումը 2013թ. բյուջեի վրա:

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները ՄԺԾԾ 2013-2015 թթ. ծրագրից կշեղվեն 31.6 մլրդ դրամով: Նույն չափով կավելանան նաև պետական բյուջեի ընդհանուր ծախսերը:

Բյուջեների եկամուտների համեմատական վերլուծություն

2013թ-ին պետական բյուջեի եկամուտները կկազմեն 1,032.8 մլրդ դրամ նախորդ տարվա 911.6 մլրդ դրամի փոխարեն: Այսինքն՝ նախատեսվում է 121.2 մլրդ դրամի աճ: Վերջինիս մեջ ամենամեծ մասնաբաժին ունեցող հարկային եկամուտները և պետական փոկոսները 2013թ-ին կկազմեն 993.08 մլրդ դրամ, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է 31.14 մլրդ դրամով: ՀՆԱ-ի մեջ դրանք ևս կավելանան և կկազմեն 22.76%, նախորդ տարվա 21.61%-ի փոխարեն: Իհարկե, կարևոր նշանակություն ունի, թե ինչ աղբյուրների հաշվին են այդ եկամուտներն ավելանալու:

Այս խնդրի լուծումը ՀՀ կառավարությունը տեսնում է հիմնականում օրենսդրական 3 բարեփոխումների և հարկային վարչարարության խստապայման մեջ: Այդ օրենքներից մեկը՝ «Եկամտային հարկի» մասին, տարբեր փորձագետների հաշվարկներով ապահովելու է մոտ 40 մլրդ դրամի հասնող մուտքեր, որոնց առյուծի բաժինը բնականաբար դրվելու է մասնավոր հատվածի վրա⁴: Այսինքն՝ մասնավոր հատվածը կապահովի ավելացված եկամտային մասի մոտ 1/3-ը: Մյուս կողմից՝ 2013 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնող օրենսդրական փոփոխություններով ակնկալվում են շուրջ 31,1 մլրդ դրամ լրացուցիչ մուտքեր՝ զինծառայողներին, նրանց հավասարեցված անձանց և փրկարարական ծառայության ծառայողներին եկամտային հարկի դաշտում ներառելու, ինչպես նաև ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման պարտավորության առաջապան դեպքում պետական բյուջեից տրամադրվող սուբսիդիաները և սուբվենյիաներն ավելացված արժեքի հարկով հարկելու արդյունքում:

Աղյուսակ 1.1

2013թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված որոշ մուտքերի և 2011թ. փաստացի ցուցանիշների համեմատություն

(մլրդ դրամ)

	2011 փաստ.	2013 կանխ.	2013 կանխ.աճ
Ավելացված արժեքի հարկ	328.4	413.8	85.4
Շահութահարկ	97.8	127.1	29.3
Եկամտահարկ	81.2	225.9	21.3
Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ	123.4		
Եկամտային հարկ	X		
Ակցիզային հարկ	39.4	56.2	16.8
Մաքսափուրք	36.3	43.6	7.3
Հաստատագրված վճարներ	20.7	12.5	-8.2

⁴Եթե «Եկամտային հարկին» անցնելու պարագայում մեկ զբաղվածի հաշվով հարկերի ավելացումը պայմանականորեն ընդունենք 2800-3000 դրամ մեկ ամսվա կտրվածքով, ապա տարեկան կտրվածքով այն կկազմի 33600-36000 դրամ, իսկ հաշվի առնելով, որ Հայաստանում կա 1 մլն 175 հազար զբաղված, ապա պարզ հաշվարկով հարկային մուտքերը կավելանան 39.4-42.3 մլրդ դրամով:

Այս համադրեքստում նկատվելի է, որ հիմնական հարկատեսակների գծով հարկային բեռն ավելանալու է: Վերջինս բյուջեի մուտքերի և եկամտային մասը համալրելու առումով դրական է, սակայն խնդիրն այստեղ ուղղակի և անուղղակի հարկերի միջև համամասնության մեջ է, քանի որ փոփոխության կայունության տեսանկյունից նպատակահարմար է, որ աճեն ուղղակի հարկերը: Սակայն, ինչպես նկատում ենք, ամենամեծ աճ սպասվում է ԱԱՀ-ի գծով, որը դրական համարել չենք կարող:

Բյուջեների ծախսերի համեմատական վերլուծություն

Նախատեսվում էր, որ 2013թ-ին ՀՀ պետական բյուջեի ծախսերը կլինեն 1,152.6 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նկատմամբ ավելի է 131.6 մլրդ դրամով: Դրանք կկազմեն ՀՆԱ-ի 25.4%-ը նախորդ տարվա 24.7%-ի փոխարեն, այսինքն՝ ՀՆԱ-ի մեջ բյուջեի ծախսային բաղադրիչի աճ է նախատեսվում, և համամասնությունը որոշակիորեն խախտված է, քանի որ ՀՆԱ-ն կաճի ավելի դանդաղ, քան պետական բյուջեի ծախսերը և շարժման կլինի 2011թ. համանուն ցուցանիշին:

Ընդհանուր առմամբ, եթե դիտարկում ենք ՀՀ 2013թ. բյուջեի հիմնական ուղղությունները, ապա գերակշռող է սոցիալ-մշակութային ուղղությունը՝ ընդհանուրի 43.7%, որին հաջորդում են պաշտպանություն, ազգային անվտանգություն, հասարակական կարգի պահպանության, քրեակարարողական և արտակարգ իրավիճակների համակարգերի գծով հարկապումները՝ 21.0%, իսկ վերջինիս հաջորդում են փոփոխության ճյուղերը՝ 14.1%: Այս երեք կետերից ելնելով՝ կարելի է պնդել, որ 2013թ. պետական բյուջեն սոցիալական է, քանի որ բնորոշվում է ամենախոշոր ծախսային խմբով:

Ծախսային հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ պաշտպանության և փոփոխական հարաբերությունների ծախսերն առաջանցիկ աճ կունենան, իսկ կրթության և սոցիալական պաշտպանության համար նախատեսված ծախսերը գրեթե չեն աճի: Եվ մյուս կողմից պետք է նշել, որ որևէ համամասնություն 2012թ. ծախսերի համեմատությամբ աճի առումով 2013թ-ին չի պահպանվել:

Վերլուծելով 2012 և 2013թթ. պետական բյուջեները՝ ըստ բյուջեային ծախսերի փոփոխության դասակարգման, նկատում ենք մի շարք տեղաշարժեր: Այսպես՝ աշխատանքի վարձարությունը 2013 թ-ին նախատեսվում է, որ կլինի 89.1 մլրդ դրամ, իսկ 2012թ-ին այն կազմել է 76.1 մլրդ դրամ: Նշված աճը պայմանավորված է «Եկամտային հարկի մասին» օրենքով: Այսինքն՝ չնայած թվային աճին, իրականում աշխատավարձերի աճը պետական հարվածում կապվում է միայն օրենսդրական պահանջների կատարման, այլ ոչ թե աշխատավարձերի գծով կատարված բարձրացումների հետ:

Ծախսերի փոփոխության դասակարգման համադրական վերլուծության արդյունքում կարելի է նշել, որ այստեղ ևս հստակ համամասնություններ չկան, սակայն ամբողջական պահանջարկի խթանման և պետական շինարարության ծավալները մոտ 97 մլրդ դրամով ավելացնելով՝ փորձ է արվում խթանել շինարարության ոլորտը և քիչ թե շարժվել 2009թ. -41.6 և 2011թ. -12.5 տոկոսանոց անկումները:

Բյուջեների պակասուրդների համեմատական վերլուծություն

2013թ. պետական բյուջեի պակասուրդը կրճատվի և կկազմի 119.8 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 2.64%-ը (2012 թ-ին՝ ՀՆԱ 3.1%): Պակասուրդի ֆինանսավորումը կիրականացվի ներքին՝ 55,2 մլրդ դրամ, և արտաքին՝ 64,5 մլրդ դրամ, աղբյուրների հաշվին (2012թ-ին՝ ներքին աղբյուրներ՝ 72.8 և արտաքին աղբյուրներ 59.7 մլրդ դրամ):

2013թ. պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կազմը կլինի առավելապես արտաքին և ցածր փոկոսադրույքներով ներգրաված աղբյուրների հաշվին, ինչը կարելի է համարել դրական միտում՝ նախորդ բյուջեարային տարվա համեմատությամբ, որպեսզի գերակշռում էին հիմնականում ներքին աղբյուրները:

Արտաքին և ներքին պարտքային բաղաբաղականությունը

ՀՀ 2013թ. պետական բյուջեով նախատեսվում է նաև 4.6% միջոցներն ուղղել պետական պարտքի սպասարկմանը, որը բավականին բարձր ցուցանիշ է և մեծ ծանրություն ՀՀ կառավարության համար:

2012թ-ին սպասվում է, որ ՀՀ պետական պարտքը կկազմի 4.519.0 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 4.128.7 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն: 2013թ-ին նախատեսվում է պետական պարտքն ավելացնել ևս 271 մլն ԱՄՆ դոլարով՝ այն հասցնելով 4,790.7 մլն ԱՄՆ դոլարի: Պետք է նշել, որ պետական պարտքի մեջ 2013 թ-ին արտաքին պարտքը կգերազանցի 4.080.4 մլն դոլարի սահմանագիծը, որից 539.5 մլն ԱՄՆ դոլարը կկազմի ԿԲ-ի պարտքը, իսկ ներքին պարտքը կկազմի 710.3 մլն ԱՄՆ դոլար: Դոլարային արտահայտությամբ ՀՆԱ-ի հետ համեմատելով՝ այն կկազմի ՀՆԱ-ի 42%-ը:

ՀՀ կառավարության ստանձնած վարկային պարտավորությունների փոկոսադրույքների և վարկային միջոցներից մասհանումների 2011-2013թթ. ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2011թ-ին դրանք կազմել են 238.4 մլն ԱՄՆ դոլար, որից հետո, 2012թ-ին դրանք կտրուկ աճել են՝ կազմելով 410.5 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2013թ-ին կանխատեսվում է, որ կհասնեն 415.4 մլն ԱՄՆ դոլարի: Այսինքն՝ սա փաստում է, որ կառավարությունն ունի բավականին ծանր պարտավորություններ:

2013թ-ին օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանին տրամադրված վարկային միջոցների օգտագործման ընդհանուր գումարը կկազմի 326.7 մլն ԱՄՆ դոլար կամ 132.47 մլրդ դրամ: ՀՀ կառավարության համաֆինանսավորման գումարը վերոհիշյալ վարկային ծրագրերին կկազմի շուրջ 70.8 մլն ԱՄՆ դոլար:

2013թ. խոշոր վարկային ծրագրերից են ԵՆԲ (Եվրոպական ներդրումային բանկի) կողմից ֆինանսավորվող Սահմանային անցակետերի և ենթակառուցվածքների արդիականացման ծրագիրը՝ 23.1. մլն ԱՄՆ դոլար, ԱԶԲ-ի (Ասիական զարգացման բանկ) կողմից ֆինանսավորվող Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի (I մասնաբաժին) 53.2 և 67.2 մլն ԱՄՆ դոլար մասնաբաժիններով վարկը, ինչպես նաև ԶՄԳ-ի (Զարգացման միջազգային գործակալության) կողմից վարկավորվող Զարգացման քաղաքականության գործողությունների վարկը՝ 72.0 մլն ԱՄՆ դոլար: 2013թ. բավականին ծանր է պարտավորությունների առումով՝ ի տարբերություն 2014 և 2015թթ.: Իսկ ինչ վերաբերում է 2013թ-ին վարկերի հիմնական գումարների և տոկոսավճարների սպասարկման եռամսյակային բաշխմանը, ապա հիմնական ծանրությունը դրված է 2-րդ և 4-րդ եռամսյակների վրա, որից ելնելով էլ կարելի է ենթադրել, որ բյուջեային տարվա համար այս եռամսյակները հարկային մուտքերի ապահովման և վարչարարության տեսանկյունից լինելու են ավելի խիստ մակարդակի:

Եզրակացություններ

Կատարելով «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի և «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համադրական վերլուծություն, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013թ. սոցիալ-տնտեսական զարգացման և հարկաբյուջեային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին զեկույցը (Ուղերձ)՝ փորձենք ներկայացնել երեք հիմնական ուղղվածության եզրակացություններ:

Դրական զարգացումներ. Այս համատեքստում պետք է նշել 2012թ-ին սպասվող ՀՆԱ-ի հավելաձևը, որը կազմելով 7.1%՝ հնարավորություն է ընձեռում կուրակել որոշակի տնտեսական ներուժ և դա օգտագործել ամբողջ 2013թ. ընթացքում:

Դրական պետք է համարել նաև ՀՀ պետական բյուջեի պակասուրդը ցածր մակարդակի վրա պահելու հանգամանքը, քանի որ բարձր պակասուրդի պարագայում ՀՀ կառավարությունը ստիպված է ավելի մեծ միջոցներ ներգրավել ներքին և արտաքին աղբյուրներից, իսկ առկա պարտավորությունների պարագայում դա խիստ ռիսկային կարող է դիտարկվել:

Բյուջեի ծախսերի տնտեսագիտական դասակարգման համադրական վերլուծության արդյունքում կարելի է նշել, որ այսօրվա հստակ համամասնություններ չկան, սակայն ամբողջական պահանջարկի խթանման և պետական շինարարության ծավալները մոտ 97 մլրդ դրամով ավելացնելով՝ փորձ է արվում խթանել շինարարության ոլորտը: Հեղձնաժամային զարգացումների համատեքստում վերջինս կարող է խթանել նոր աշխատատեղերի ստեղծումը և նպաստել տնտեսության մեջ շինարարության անկում ապրող տեմպերի ակտիվացմանը:

Աշխատանքի վարձավարությունը 2013թ-ին նախատեսվում է, որ կլինի 89.1 մլրդ դրամ, իսկ 2012թ-ին այն կազմել է 76.1 մլրդ դրամ, այսինքն՝ մոտ 13 մլրդ դրամով պետական ոլորտի աշխատողների աշխատավարձը բարձրացնելով կկրճարվի մասնավոր և պետական հատվածների աշխատավարձերի միջև առկա տարբերությունը, սակայն ցանկալի է, որ նման բարձրացումը ոչ թե ինքնանպատակ բնույթ կրի, այլ հիմնվի արտադրողականության բարձրացման վրա:

Բացասական զարգացումներից կարելի է դիտարկել համաշխարհային տնտեսության մեջ առկա ռիսկային երևույթները՝ եվրոպական պարտքային և կենսաթոշակային ճգնաժամերի հնարավոր ազդեցությունները, ԱՊՀ երկրների և Չինաստանի տնտեսական աճի դանդաղող տեմպերը, որոնք որպես արտաքին գործոն կարող են ազդել ՀՀ տնտեսության, ինչպես նաև բյուջեի իրագործելիության մակարդակի վրա:

Տնտեսության զարգացման հաշվին ապահոված բյուջեի կապարումը, իհարկե, դրական է, սակայն օրենսդրական որոշակի բարեփոխումները, հատկապես «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի հետ կապված, կառաջացնեն որոշակի դժվարություններ մասնավոր հատվածի համար՝ ավելացնելով նրանց վրա դրված հարկային բեռը:

2013թ-ին պետական բյուջեների գործառնական ծախսերի հողվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ կան ծախսային խմբեր (հանրային ծառայություններ, պաշտպանություն, տնտեսական հարաբերություններ և այլն), որոնք աճել են շատ ավելի մեծ չափով, քան մյուսները և որևէ համամասնություն 2012թ. ծախսերի համեմատությամբ աճի առումով չի պահպանվել:

ՀՀ կառավարության ստանձնած վարկային պարտավորությունների տոկոսադրույքների և վարկային միջոցների մասհանումների 2013թ. սպասվող միտումների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք կհասնեն 415.4 մլն ԱՄՆ դոլարի, այսինքն՝ ՀՀ կառավարությունն ունի բավականին ծանր պարտավորություններ, քանի որ ՀՆԱ-ի 3.7%-ը ստիպված կլինի ուղղել այս պարտավորությունների մարմանը:

Անփոփոխ իրավիճակներ. Համադրելով 2012 և 2013թթ. ՀՀ պետական բյուջեների փոփոխությունը և գաղափարախոսական հենքը՝ կարող ենք փաստել, որ դրանք իրար նման են այնքանով, որքանով հետճգնաժամային զարգացումների համարեքստում շատ մեծ էական տեղաշարժեր չեն նախատեսում: Մյուս կողմից՝ համաշխարհային տնտեսության մեջ նկատվող տնտեսական աճի տեմպերի դանդաղումը ստիպում է ոչ թե ունենալ հավակնոտ նպատակներ, այլ պահպանել կայունությունը և չկիրառել խիստ ընդլայնողական քաղաքականություն:

Բյուջեի ծախսային մի շարք հոդվածներ 121 մլրդ ավելացած ծախսերի պարագայում շատ չնչին փոփոխությունների են ենթարկվել, և սա փաստում է նրա մասին, որ ծախսերը համաչափ կերպով չեն հասել յուրաքանչյուր ոլորտ: Իհարկե, կան փոփոխության համար առարկայական և կարևոր նշանակություն ունեցող ոլորտներ, սակայն զարգացման տեսանկյունից նպատակահարմար է ծախսերի համաչափ բացվածությունը: Մյուս կողմից՝ պետք է նաև ուշադրություն դարձնել նախորդ տարիներին հատկացված միջոցներին ևս, քանի որ իրականում որևէ ոլորտի կայացվածությունից ելնելով է որոշվում հատկացվող ծախսերի մեծությունը, այսինքն՝ դրանք կապիտալ ծախսեր են, թե ընթացիկ:

Շրջանառության հարկ

Վիճեցման հաշտարյան տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

«Շրջանառության հարկի մասին»⁵ ՀՀ օրենքի վերլուծության փորձաքննությունը ճիշտ վերլուծության փորձաքննությունը ճիշտ կառուցելու համար նպատակահարմար ենք համարում քննարկել այն՝ հետևյալ հարցերից ելնելով.

- ▲ այս նոր հարկատեսակը արդյո՞ք վերադարձ չէ արդեն իսկ չգործող «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքին⁶,
- ▲ նոր հարկատեսակը ինչքանո՞վ է ազդելու ՓՄՁ-ների գործունեության վրա,
- ▲ շրջանառության հարկի ներդրումն ինչպե՞ս է ազդելու բյուջեի եկամուտների վրա,
- ▲ նոր հարկատեսակի ներդրումն ի՞նչ ազդեցություն կունենա ՀԲ կողմից հաշվարկվող Doing Business-ի վարկանիշային աղյուսակում ՀՀ-ի հարկերի վճարման ցուցանիշի բարելավման, ինչպես նաև բիզնեսի վարման ընդհանուր վարկանիշի բարձրացման տեսանկյունից:

Համադրելով «Շրջանառության հարկի մասին» և «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենքները՝ նկատում ենք, որ դրանց կարգավորման առարկան նույնն է: Որպես հասկացություն՝ օրենքներն իրարից փոքրերվում են կոնկրետ սուբյեկտներով, որոնց ուղղված են այս հարկատեսակները: Իհարկե, պարզեցված հարկի ժամանակ դեռևս գոյություն չունեին եկամտային հարկը, և այն փոխարինում էր նաև եկամտահարկին: Շրջանառության հարկից վերջինս փոխարինում է միայն ԱԱՀ-ին և շահութահարկին:

Շրջանառության հարկը, ի տարբերություն պարզեցված հարկի, ունի հարկման ավելի բարձր շեմ, սակայն եթե հաշվի առնենք ինֆլյացիայի միտումները սկսած 2000թ-ից, ինչպես նաև դրամի գնողունակության միտումները, համեմատելով 2000 թ-ի 30 մլն դրամը և 2013թ-ի 58.35 մլն դրամը, ապա էական փոփոխություն չեմային առումով չի նկատվում:

⁵«Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-236-Ն, 2012.12.28/66(940) Հոդ.1399, ընդունման ամսաթիվը 19.12.2012, ուժի մեջ մտնելու ամսաթիվը 01.01.2013, www.arlis.am

⁶«Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-61, ՀՀՊՏ 2000.06.23/14(112), ընդունման ամսաթիվը 05.06.2000, ուժը կորցնելու ամսաթիվը 01.01.2009, www.arlis.am

Մյուս կարևոր համեմատության տարրը դրույքաչափերն են: Պարզեցված հարկի դեպքում խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեության մասով հարկը հաշվարկվում է իրացման շրջանառության նկատմամբ 4% դրույքաչափով, իսկ այս հարկատեսակով հարկվող մյուս գործունեությունների նկատմամբ.

ա) մինչև 30 մլն դրամ գումարի նկատմամբ՝ 7%.

բ) 30 մլն դրամը գերազանցող գումարի նկատմամբ՝ 12%:

Աղյուսակ 1.1

Շրջանառության հարկի հարկվող օբյեկտի նկատմամբ կիրառվող դրույքաչափերը⁷

Եկամուտների տեսակը	Դրույքաչափը
Առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից եկամուտներ	3.5%
Արտադրական գործունեությունից եկամուտներ	3.5%
Վարձակալությունից եկամուտներ, տոկոսներ, ռոյալթիներ, ակտիվների (այդ թվում՝ անշարժ գույքի) օտարումից եկամուտներ	10%
Նոտարական գործունեությունից եկամուտներ	20%
Այլ գործունեության (եկամուտների) տեսակներից եկամուտներ	5%

Այսպես ալվելի բարձր են միայն նոտարական գործունեությունից եկամուտների դրույքաչափերը՝ 20%, որը պարզեցված հարկի պարագայում բացակայում էր: Մյուս դեպքերում, հարկապես առևտրային և արտադրական գործունեությունից եկամուտների առումով, դրանք ալվելի ցածր են: Հիմնական տրամաբանությունն այս երկու հարկատեսակների մեջ մնացել է նույնը՝ բացառությամբ ալվելայված խստացումների:

Ներդրված նոր հարկատեսակը պետք է դիտարկել նաև ՓՄՁ-ների գործունեության վրա դրա հնարավոր դրական և բացասական ազդեցությունների, ինչպես նաև պետական բյուջեի մուտքերի ալվելացման, կրճատման կամ նույն մակարդակի վրա պահպանման տեսանկյուններից:

⁷«Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-236-Ն, 2012.12.28/66(940) Հոդ.1399, ընդունման ամսաթիվը 19.12.2012, ուժը մեջ մտնելու ամսաթիվը 01.01.2013, www.arlis.am

Այս համադրեքստով պայմանավորված՝ շրջանառության հարկի ներդրման հետ պետք է դիտարկել հետևյալ հնարավոր զարգացումները.

1. Եթե նոր հարկատեսակը (բացառությամբ ընթացակարգերի, որոնք հեշտրայնելու են ՓՄՁ-ների գործունեությունը) այլ հարկային բեռ չի ավելացնելու, բնականաբար, բյուջեի մուտքերը կպահպանվեն,

2. Եթե նոր հարկատեսակի ներդրումն առաջացնում է լրացուցիչ բեռ, ապա ՓՄՁ-ները կամ փորձելու են թաքցնել իրենց շրջանառությունը, կամ պարզապես դուրս են մնալու խոշոր տնտեսավարող սուբյեկտների հետ մրցակցային պայքարից: Վերջին դեպքում նրանց մատուցած ծառայությունները և առևտրային գործունեությունն իրենց վրա են վերցնելու խոշորները: Բնականաբար՝ սրանով բյուջեի մուտքերը չեն պակասելու, սակայն ՓՄՁ հատվածը փուլավորվում է և խորանալու է եկամտային անհավասարաչափ բաշխումը,

3. Եթե այս հարկատեսակի ներդրման պարագայում ՓՄՁ-ները շահելու են, և նրանց կողմից ստացվող եկամուտներն ավելանալու են, ապա բնականաբար բյուջեի մուտքերը կավելանան:

Իհարկե, նշված երեք սցենարները պետք է դիտարկել նաև ՓՄՁ-ների շահութաբերության և շրջանառության ցուցանիշներից, ինչպես նաև նրանց գործունեություն իրականացնելու ժամանակահատվածից (սկսնակ ՓՄՁ-ներ, հասուն ՓՄՁ-ներ) և ոլորտներից (առևտուր, ծառայություններ և այլն) ելնելով և այլն:

Եթե հաշվի առնենք, որ շրջանառության հարկի մեջ շահութահարկի հաշվարկային մեծությունն ընդունվում է 40%, ապա պարզ է դառնում, որ բավականին ծանրվիճակում կհայտնվեն 40%-ից ցածր շահութաբերություն ունեցողները: Այսինքն՝ պայմանական 1.0 մլն դրամ շրջանառություն ունեցող սուբյեկտը, եթե ուներ 10% շահույթ՝ 100.0 հազար դրամ, պետք է վճարեր 20.0 հազար դրամ հարկ, ապա շրջանառության հարկի պարագայում՝ 35.0 հազար դրամ: Բնականաբար՝ սա հարկային բեռի ավելացում է: Այսինքն՝ առնվազն 17.5% շահութաբերություն ունեցողների համար է արդարացված այս հարկատեսակը, իսկ այն ՓՄՁ-ներում, որտեղ շահութաբերությունը ցածր է 17.5%-ից, հայտնվելու են ոչ նպաստավոր պայմաններում: ՀՀ ԱՎԾ փվյալներից դիտարկելով կազմակերպությունների ֆինանսներ հատվածի ցուցանիշները⁸ նկատում ենք, որ նման բարձր շահութաբերություն մի շարք ոլորտներում, ինչպես նաև մարզերի կազմակերպություններում չկա, վերջինս լուրջ խնդիր կարող է հանդիսանալ նաև մարզերի ՓՄՁ-ների համար:

Հավանական է, որ շրջանառության հարկի ներդրման դեպքում ՓՄՁ-ները կունենան դժվարություններ, քանի որ ստիպված կլինեն թաքցնել իրենց շրջանառությունը կամ բարձրացնել իրենց կողմից մատուցվող ծառայությունների և վաճառվող ապրանքների գները՝ ապահովելու համար բարձր շահութաբերություն, որը կհանգեցնի նրանց մրցակցային հնարավորությունների թուլացմանը:

⁸Նշում. 2008 և 2009 թթ. համար է առկա միայն նման վիճակագրություն:



ՀԱՎԵԼՎԱԾ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շրջանառության հարկի ներդրման ազդեցությունը Համաշխարհային բանկի կողմից հաշվարկվող Doing Business-ի վարկանիշային աղյուսակում ՀՀ-ի հարկերի վճարման ցուցանիշի վրա պետք է դիտարկել 3 ենթացուցանիշներից (հարկերի վճարման ժամանակահատված, վճարման ընթացակարգեր և ընդհանուր հարկային բեռ) ելնելով:

Հաշվի առնելով, որ շրջանառության հարկը վճարվում է եռամսյակային կտրվածքով, ապա այստեղ կա վճարումների վրա ծախսվող ժամանակահատվածի, ինչպես նաև ներկայացվող հաշվեկրթությունների քանակական կրճատում, այն առավելություն է, սակայն առանձին հաշվարկներ կարող են նաև ցույց տալ, որ ընդհանուր հարկային բեռի ավելացում կարող է սպասվել շրջանառության հարկի ներդրման պարագայում: Այնպես որ, եթե հարկային բեռը ևս մնար նույն մակարդակի վրա կամ կրճատվեր, ապա դրական տեղաշարժը Doing Business-ի վարկանիշային աղյուսակում ՀՀ-ի հարկերի վճարման ցուցանիշի առումով կլիներ ավելի մեծ, իսկ բեռի ավելացման պարագայում բարելավման մեծ տեղաշարժ գուցե և չլինի:

2013թ. Paying Taxes⁹ կամ Հարկերի վճարման 2013 թ. զեկույցում Հայաստանը հայտնվել է 108-րդ տեղում, որը մեծ դրական տեղաշարժ է 2012թ. համեմատությամբ՝ 45 կետով: Պետք է նշել, որ վճարումների քանակը, ըստ 2013թ. զեկույցի, կազմում է 13, ժամանակահատվածը՝ 380 ժամ, իսկ ընդհանուր հարկային բեռը՝ 38.8%: Այս համադրությամբ, եթե կիրառվեն նաև վերոնշյալ բարեփոխումները, ապա Հայաստանի վարկանիշը հարկերի վճարման առումով հնարավոր է, որ կազմի ոչ թե եռանիշ, այլ երկնիշ թիվ՝ բարելավելով նաև ընդհանուր Doing Business-ում ունեցած վարկանիշը:

⁹Paying Taxes 2013, The global picture, "PricewaterhouseCoopers", World Bank Group, 165 p.

Նվազագույն աշխատավարձ

Աննա Մակարյան

Յուրաքանչյուր փարվա բյուջեից առաջ ՀՀ կառավարությունն Ազգային ժողով է ներկայացնում նվազագույն աշխատավարձը փոփոխելու մասին օրենքի նախագիծ: Փոփոխությունը վերաբերում է այդ աշխատավարձի բարձրացմանը՝ վերջին 2 փարիներին անփոփոխ, 2.5 հազար դրամի չափով: ՀՀ-ում աշխատավարձերի ձևավորման հայեցակարգի բացակայության պայմաններում այս ձեռնարկը ձևական բնույթ է կրում, որովհետև թե նվազագույն աշխատավարձի չափը, թե դրա ամենամյա խորհրդանշական բարձրացումները ոչնչով հիմնավորված չեն, որևէ աղերս չունեն կենսապահովման նվազագույն պայմանները բավարարելու հետ:

Սոցիալական ազդեցությունը

Նման իրավիճակում սոցիալական ազդեցության գնահատումը, մեծ հաշվով, նույնպես ձևական նշանակություն է ստանում: Այսուհանդերձ, ներկայացնենք որոշ հաշվարկներ:

2013թ. համար ամրագրված 35,000 դրամը կգիջի 2012թ. 3-րդ եռամսյակի միջին ընթացիկ գներով հաշվարկված նվազագույն սպառողական զամբյուղի արժեքին՝ 50,443 դրամին (առողջապահության նախարարության կողմից 1 շնչի հաշվով մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի զամբյուղը) 15,443 դրամով կամ մոտ 1.45 անգամ: Հետևաբար՝ 2,500 դրամի փոփոխությունն ընդամենը կչեզոքացնի գնաձի ազդեցությունը, քանի որ Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից կանխատեսվող գնաճը (սպառողական ապրանքների) 2013թ. համար կազմելու է 4.2%:


2012թ. 32,500 դրամ աշխատավարձ ունեցողը մաքուր ստանում էր (զուտ աշխատավարձ) 31,521 դրամ (3% սոցիալական հարկացումները վճարելուց հետո), իսկ 2013թ. հունվարի 1-ից նվազագույն աշխատավարձը պայմանագրում կամրագրվի 46,300 դրամ, որի պարագայում զուտ աշխատավարձը կկազմի 35,003 դրամ 24.4% եկամտային հարկը վճարելուց հետո (համաձայն համապատասխան օրենսդրական փոփոխությունների): Այսպիսով՝ զուտ աշխատավարձի փոփոխությունը կկազմի 3,482 դրամ, իսկ կանխատեսվող 4.2% գնաձի պարագայում զուտ աշխատավարձի գնողունակությունը կբարձրանա: Միաժամանակ՝ 36,000 դրամից բարձր ստացողների մոտ կպահպանվի զուտ աշխատավարձի չափը 2013թ. նախորդ փարվա համեմատ, ինչը կնշանակի զուտ աշխատավարձի գնողունակության անկում. այսինքն՝ նվազագույնից բարձր աշխատավարձ ստացողները 2013թ-ին նախորդ փարվա համեմատ ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու ավելի պակաս հնարավորություն կունենան:

Պետք է նկատել նաև, որ միասնական եկամտային հարկի ներմուծմամբ լրացուցիչ բեռ է դրվում գործադուրսների ուսերին. սույնալակյան ապահովագրության վճարներն իրենց աշխատողների աշխատավարձերին հավելելուց բացի, զուտ աշխատավարձերի չափը պահպանելու համար նրանք պետք է անվանական աշխատավարձերը, կախված դրանց մեծությունից, բարձրացնեն 750-2,800 դրամով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զբաղվածների մեծամասնությունն աշխատում է ոչ պետական հարվածում, հիմնական բեռը կրնկնի մասնավոր ընկերությունների վրա: Այս պարագայում բեռի փոխանցման հնարավոր փարբերակը կլինի գների բարձրացումը: Այնպես որ, կանխատեսված 4.2 տոկոսն իրականում գերազանցվելու մեծ պոտենցիալ ունի:

Դիտարկումներ

Տնտեսագիտությունը փաստում է, որ արտադրողականության աճն է հնարավորություն փախ ապահովելու աշխատավարձերի աճ. այսինքն՝ դրանք պետք է ուղիղ համեմատական լինեն: Հայաստանում, սակայն, ակնհայտ շեղում է արձանագրվել դասական այս կանոնից. 2009-11թթ. արտադրողականությունն ու աշխատավարձերն ընթացել են միանգամայն փարբեր ուղղություններով:

Գծապատկեր 1. Իրական աշխատավարձերի և արտադրողականության աճը 2009-2011թթ.




Աղբյուր՝ ՀՀ ԱՎԾ, 2012թ.: Հեղինակի սեփական հաշվարկ:
Նշում 2005թ.=100

**ՀԱՎԵԼՎԱԾ.
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Մյուս կողմից, վերջին տարիներին անշեղորեն աճում են հատկապես պարենային ապրանքների գները: 2005թ. համեմատ 2011թ. պարենային ապրանքների գների ինդեքսի փոփոխությունը 49.1 փոկոսային կետ էր կազմել, ինչը նշանակում է, որ եթե տնային տնտեսությունը 2005թ. ծախսում էր միջինում ամսական 80,000 դրամ պարենային ապրանքների ձեռք բերման վրա, ապա այդ գումարի գնողունակությունը 2011թ-ին, ընդհանուր առմամբ, կազմել է 53,655 դրամ: Սպառողական գների ինդեքսի փոփոխությունն այդ նույն ժամանակահատվածում կազմել էր 41 փոկոսային կետ: 2012թ. համար ԱՄՀ-ն կանխատեսում է 2.8% գնաճ (սպառողական գների), իսկ 2012թ. հունվար-սեպտեմբեր ամիսների միջին աշխատավարձի աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել էր 5.2%-ով (118,110 դրամ 112,273 դրամի համեմատ): Հետևաբար, եթե զուտ աշխատավարձերի աճը 2013թ. չգերազանցի գնաճի մակարդակը, ապա տեղի կունենա զուտ աշխատավարձերի գնողունակության անկում:

Գծապատկեր 2. Սպառողական և պարենային ապրանքների գների ինդեքս (% , 2005թ.=100)



Աղբյուր՝ ԱՎԾ, 2012թ.:

Անցում բազմաստիճան (բազմաբաղադրիչ) կենսաթոշակային համակարգի

Աննա Մակարյան

Բարեփոխումների իրականացման պատրաստվածությունը

Հայաստանում բազմաստիճան (բազմաբաղադրիչ) կենսաթոշակային համակարգի պարտադիր բաղադրիչը պետք է գործեր 2011թ-ից: 2008թ. նոյեմբերին կառավարությունն արդեն հաստատել էր կենսաթոշակային բարեփոխումների ծրագիրն ու դրա իրականացումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը: Սակայն արդեն 2010թ. փետրվարի 3-ին կառավարությունն ստեղծեց կենսաթոշակային բարեփոխումների իրականացումն ապահովող կառավարման խորհուրդ, որը պետք է բարեփոխումների իրականացման համար իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկություններ փար: Այս խորհրդի ստեղծման անհրաժեշտությունը ծագել էր, քանի որ կառավարության հաստատած ժամկետներում միջոցառումների իրականացումը չէր ավարտվել:

Կենսաթոշակային բարեփոխումների միջոցով բաշխողական կենսաթոշակային համակարգից անցում է կատարվելու Համաշխարհային բանկի (ՀԲ) կողմից 1994 թ-ին¹⁰ առաջարկված բազմաստիճան (բազմաբաղադրիչ) կենսաթոշակային մոդելի (three-pillar pension model): Մոդելի հիմքում 1980 թվականի վերջին Չիլիում նախաձեռնված կենսաթոշակային բարեփոխումներն են:

2010թ. դեկտեմբերի 22-ին ընդունվեց կենսաթոշակային բարեփոխումների օրենսդրական փաթեթը («Պետական կենսաթոշակների մասին», «Կուրակային կենսաթոշակների մասին», «Ներդրումային ֆոնդերի մասին», «Եկամտային հարկի և պարտադիր կուրակային վճարի անձնավորված հաշվառման մասին», «Եկամտային հարկի մասին» օրենքները), որ 2012թ. փոփոխվեց և/կամ լրացվեց: Դրանով օրենսդրորեն ապահովվեց նոր համակարգի անցումը, հստակեցվեցին անհրաժեշտ բիզնես գործընթացները:

Իսկ համակարգի անցման այլ միջոցառումները՝ ենթաօրենսդրական ակտեր, պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների լիցենզավորում, այդ ֆոնդերի ակտիվների ֆինանսական գործիքներում ներդրման քանակական և արժույթային սահմանափակումներ, Երաշխիքային ֆոնդի գումարների կառավարում, «AMPS» համակարգ, և այլն, որի պատասխանատուները ՀՀ կառավարությունը և Կենտրոնական բանկն (ԿԲ) են, պետք է իրականացվեն 2013թ-ին: Եթե այս միջոցառումների իրականացումը չավարտվի 2013թ-ին, ապա պարտադիր բաղադրիչի մասնակցությունը կարող է հետաձգվել: Այն կարող է հետաձգվել նաև մեկ կամ երկու տարով, եթե համաշխարհային ձգնաժամի սպասվող հերթական փուլը փոխանցվի նաև Հայաստան և պետական բյուջեի համար համակարգի պարտադիր բաղադրիչի մասնակիցների օգտին կատարվելիք հարկացումները մեծ բեռ հանդիսանան:

¹⁰World Bank (1994) “Averting the Old Age Crisis”. New York, Oxford University Press

Բազմաբաղադրիչ կենսաթոշակային համակարգ

Կենսաթոշակային համակարգը, ըստ ՀՀ «Պետական կենսաթոշակների մասին օրենքի», ներառում է պետական կենսաթոշակային ապահովությունը (պետական կենսաթոշակային համակարգ կամ բաշխողական բաղադրիչ) և պարտադիր ու կամավոր կուտակային կենսաթոշակային բաղադրիչները:

Պետական կենսաթոշակային համակարգ

Այն ապահովում է պետական կենսաթոշակ բյուջեի միջոցներից, որոնք ձևավորվում են աշխատողների կողմից վճարված եկամտային հարկի գումարներից (2013թ-ից): Այս համակարգի նպատակը սոցիալական համերաշխության և սոցիալական արդարության ապահովումն է: Պետական կենսաթոշակի նվազագույն չափը պետք է համարելի լինի կենսաապահովման նվազագույն բյուջեի հետ: Այս համակարգի «0 աստիճանը» սոցիալական ծերության կենսաթոշակն է, որը վճարվում է 65 տարին լրացած անձանց, ում աշխատանքային ստաժը չի գերազանցում 7 տարին 2013թ-ից (10 տարի՝ 2016 թ-ից): 1-ին աստիճանի դեպքում աշխատանքային կենսաթոշակ (ապահովագրական) կենսաթոշակ (հիմնական կենսաթոշակ+ (ապահովագրական (աշխատանքային) ստաժի մեկ տարվա արժեք x աշխատանքային ստաժ) նշանակվում է նրանց, որոնց 63 տարին լրացել է և ունեն առնվազն 25 տարվա ստաժ, իսկ դրանից պակաս լինելու դեպքում առնվազն 10 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ:

Պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչ

2014թ. հունվարի 1-ից պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի պարտադիր մասնակից են դառնում 1974թ. հունվարի 1-ից հետո ծնված այն անձինք, ովքեր վարձու աշխատողներ են, նոտարներ, անհատ ձեռնարկատերեր, ինչպես նաև պայմանագրային եկամուտներ ունեցողներ: Պարտադիր բաղադրիչի մասնակիցը, եթե աշխատավարձը չի գերազանցում 500,000 ՀՀ դրամը, իր բազային եկամտից 5%-ի չափով ամսական կուտակային վճար (կենսաթոշակային խնայողություններ) է կատարում, իսկ մնացած 5%-ը վճարվում է պետական բյուջեից: Այդ վճարները կառավարում են պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչ-ընկերությունները, իսկ դրանց կառավարումից ստացված եկամուտները և այդ վճարները կուտակվելու են յուրաքանչյուր մասնակցի կենսաթոշակային հաշվին, որը կստանա անուիտետների, ծրագրային վճարների և միանվագ վճարների տեսքով: Պարտադիր բաղադրիչին միացած անձինք, նախքան անցումը, աշխատանքային ստաժի համար ստանում են նաև աշխատանքային կենսաթոշակ:

Առավելություններ

Կենսաթոշակային ապագա վճարները ուղիղ կապի մեջ են կենսաթոշակային խնայողությունների և դրանց ներդրումից ստացված եկամուտների հետ: Անհատները իրենք են խնայում իրենց ծերության համար: Բյուջեի վրա երկարաժամկետ հատվածում սույիալական բեռի թեթևացում կարձանագրվի: Պարտադիր բաղադրիչը կխթանի խնայողությունների սրեղծմանը, սակայն բարձր փնտեսական աճ և կապիտալի (արժեթղթերի) շուկայի արագ զարգացում կարող է չարձանագրվել:

Ռիսկեր և սույիալական խնդիրներ

Ըստ ՀԲ-ի՝ (2005թ., էջ 6)¹¹ կենսաթոշակային համակարգի հիմնական նպատակը «աղեկվար, մարչելի, կայուն և ռոբաստ կենսաթոշակային եկամուտների ապահովումն է»: Ռոբաստ համակարգը ենթադրում է «հիմնական շուկերին դիմակայելու կարողություն», իսկ շուկերը կարող են լինել փնտեսական ձգնաժամերը, ժողովրդագրական խնդիրները և քաղաքական անկայունությունը: Լոնդոնի փնտեսագիտության դպրոցի պրոֆեսոր Ն. Բարը (2002թ., էջ 5)¹² առանձնացնում է երեք՝ ֆոնդերի սխալ կառավարման, ներդրումային և աննուփոփոխների շուկայի (կենսաթոշակի փարիքից հետո ակնկալվող կյանքի փոողություն, ինչպես նաև եկամտաբերությունը, որը կենսաթոշակառուի համար կապահովի ապահովագրական ընկերությունը) ռիսկեր:

Տնտեսական ձգնաժամերի պարագայում կարող են կասեցվել ինչպես մասնակիցների, այնպես էլ պետբյուջեից կարարվող վճարները, կարող է արձանագրվել ֆոնդերի ակտիվների արժեքի նվազում:

Օրինակ՝ Եստոնիայում, պայմանավորված համաշխարհային ֆինանսա-փնտեսական ձգնաժամի բացասական հետևանքներով, 2009թ. երկրորդ կեսին կասեցվեցին ինչպես մասնակիցների, այնպես էլ պետբյուջեից կարարվող վճարները: 2010թ-ին պետբյուջեից վճարները դեռ կասեցված էին, սակայն պարտադիր բաղադրիչի մասնակիցները կարող էին կամավոր իրենց եկամուտներից պարտադիր վճարները կարարել: 2011թ-ին մասնակի էին վերականգնվել բյուջեից վճարները, և միայն 2012թ-ին բոլոր մասնակիցների և բյուջեից վճարները վերադարձան նույն մակարդակին: 2014-2017թթ. կառավարությունը ավելացնելու է իր հատկացումները և փոխհատուցելու է այն մասնակիցներին, որոնք 2010-2011թթ. շարունակել էին իրենց կանոնավոր կուտակային վճարումները կարարել (մասնակիցների մոտ 37%)¹³: Արդյունքում ձգնաժամի հետևանքով Եստոնիայում ապագայում ստացվող թոշակների չափը կկրճատվի:

¹¹World Bank (2005), Income Support in the 21st Century: An International Perspective on Pension System and Reform, edit by Holzmann, Robert & Hinz, Richard

¹²Barr, N. Reforming pensions: myths, truths, and policy choices. International Social Security Review, 2002, Vol. 55, No. 2, pp. 3–36.

¹³ASISP (2011) Annual National Report 2011: Pensions, Health Care and Long-term Care, pp.8-11

Ճգնաժամերի պարագայում նաև կենսաթոշակային ֆոնդերի եկամտաբերությունը բացասական կարող է լինել և կորուստներ գրանցել: Նույն էստիմատում «EPI» ինդեքսը, որն արտացոլում է բոլոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ միջին կշռված եկամտաբերությունը, 2008թ-ին 24% անկում էր գրանցել՝ ֆոնդերի միջոցների սխալ կառավարման հետևանքով, ինչն էլ 2011թ-ին հանգեցրեց օրենսդրական փոփոխությունների¹⁴: Եթե ապագայում ՀՀ-ում ճգնաժամի հետևանքով պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի եկամտաբերությունը նույնիսկ -35%, իսկ զնաճը 10% արձանագրվի, ապա այս դեպքում պարտադիր մասնակիցներին փոխհատուցում չի նախատեսվում:

«Կուրակային կենսաթոշակների մասին» օրենքի համաձայն՝ «մասնակիցների համար կուրակային վճարները կատարվում են բազային եկամտի 10% դրույքաչափով», սակայն մասնակիցը վճարում է 5%-ը, մնացած 5%-ը համալրվում է պեդբյուջեից, հետևաբար՝ մասնակիցների պարտադիր կուրակային վճար կոֆտարկվի իր կողմից կատարած 5% վճարումը, որի գնաճով ճշգրտած վերադարձելիությունը երաշխավորվում է (20%-ը՝ Երաշխիքային հիմնադրամի, 80%-ը՝ պեդբյուջեի միջոցներից): Թեպետ դեռ չկա որևէ փաստաթուղթ, որը կկարգավորի Երաշխիքային ֆոնդ փոխանցած պարտադիր ներդրումային ֆոնդերի վճարների կառավարումը, այն մեծ կարևորություն կստանա միայն այն դեպքերում, երբ պարտադիր ֆոնդերի եկամտաբերությունը գերազանցի-50%-ը (եթե ֆոնդերը կառավարեն միայն պարտադիր մասնակիցների վճարները): Սա քիչ հավանական է ներդրումային գործիքների դիվերսիֆիկացիայի պատճառով:

Ինչ վերաբերում է ֆոնդերի ակտիվների կառավարման և ներդրումային ռիսկերին, ապա քանի դեռ կառավարությունը որոշում չի ընդունել պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների ֆինանսական գործիքներում ներդրման քանակական և արժույթային սահմանափակումների վերաբերյալ, ապա դժվար է կոնկրետ ունել, թե հիմնական վրանգները որոնք կլինեն: Արտասահմանում ներդրելու պարագայում առաջանում է արժույթային ռիսկը. արտասահմանում ներդրվող գումարների ծավալների աճը կհանգեցնի ՀՀ դրամի արժեզրկման, թանկ ներմուծման և, ի վերջո, սպառողական զների աճին (չնայած արտահանող ընկերությունները կշահեն): Մյուս կողմից՝ Հայաստանում պարտադիր կենսաթոշակային ակտիվների ներդրման ֆինանսական գործիքները հիմնականում կլինեն բանկային ավանդը (2012թ. նոյեմբերին 1 փարույց ավելի ժամկետի համար 12.90% է եղել, 8.18%՝ ԱՄՆ դոլարով), ինչպես նաև պետա-կան պարտավորումները (առաջնային շուկայում ՀՀ երկարաժամկետ պետական պարտավորումների միջին եկամտաբերությունը 2012թ. նոյեմբերին կազմել էր 15.42%): 2012թ. նոյեմբերի վերջին ՀՀ առևտրային բանկերի կողմից մասնավոր ռեզիդենտ ձեռնարկություններին տրված վարկերի ծավալը գերազանցում էր ավանդների ծավալներին այդ նույն ժամանակահատվածում 1.83 անգամ: Առաջիկա 5-7 տարվա ընթացքում բավականին բարձր եկամտաբերություն կարձանագրվի պարտադիր ֆոնդերի մոտ: Բանկային ավանդների հետագա աճը կհանգեցնի տոկոսադրույքների նվազեցմանը, վարկավորման ծավալների աճին:

¹⁴Նույն տեղում

Սակայն ներքին փոքր շուկան և արժեթղթերի շուկայի զարգացվածության ցածր մակարդակը չեն կարող երկարաժամկետ ժամանակահատվածում ապահովել բարձր եկամտաբերություն, եթե վերջինս չզարգանա կամ էլ վարկավորումը հիմնականում արտահանմանն ուղղված ձեռնարկություններին ուղղված լինի: Իսկ արժեթղթերի շուկան կարող է արագ չզարգանալ ՀՀ-ում:

Տարվուհի համալսարանից Լինա Կուլուն և Ջանո Ռեյլյանը (2004թ., էջ 16)¹⁵ պնդում են, որ «թեպետ փոքր երկրներն ինտեգրվելու են խթանումը պարտադիր բաղադրիչի իրագործման միջոցով կարող է հանգեցնել փոքր երկրների աճի և զարգացնել կապիտալի շուկան, սակայն Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի անցումային փոքր երկրները հատկապես դեպքեր են հանդիսանում: Եվրոպական զարգացած երկրների հետ համեմատած, որոնք ունեն գործող արժեթղթերի շուկա, ԿԱԵ երկրների արժեթղթերի շուկան (հատկապես Եստոնիայի արժեթղթերի շուկան) հավանաբար չի կարող երաշխավորել կայուն փոքր երկրների զարգացում ապագա 40-50 տարիների ընթացքում: Եստոնական ներդրումային ֆոնդերում կուտակված միջոցների մեծամասնությունը ներդրված է պետական պարտավորումների մեջ Լիտվայում, Նիդեռլանդներում, Ֆրանսիայում և Ավստրիայում (տես Սորմունեն, 2003թ.): Միջոցների ներդրումը Եվրոպական արժեթղթերի շուկայում կօգնի հաղթահարել այլընտրանքային ներդրումների խնդիրը, բայց բարդ է ենթադրել ԿԱԵ երկրներում փոքր երկրների աճի խթանում»:

2012թ-ին «ՆԱՍՊԱԲ ՕԷՄԷԲՍ Արմենիա» ԲԲԸ-ի հարթակում 410,796,210 ՀՀ դրամ ծավալի բաժնետոմսերի առք ու վաճառք է իրականացվել (7 ընկերության բաժնետոմսեր, որից 2-ը՝ բանկ), իսկ կորպորատիվ պարտավորումների ծավալը եղել է 402,202,653.52 ՀՀ դրամ¹⁶:

2011թ-ին ՀՀ-ում վարձու աշխատողների մոտ 42%-ի աշխատավարձը ցածր էր 65,001 ՀՀ դրամից իսկ հարկերը վճարելուց հետո 2012թ. զուտ աշխատավարձը էապես չէր գերազանցում նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը՝ 50,443 դրամ (առողջապահության նախարարության կողմից 1 շնչի հաշվով մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և ենթագերակայի զամբյուղը հաշվարկված III եռամսյակի միջին ընթացիկ գներով):

Ի դեպ՝ Լարի Վիլմորը¹⁸ (2000թ., էջ 9) նշել է, որ զարգացող երկրների համար կենսաթոշակային համակարգի մոդել կարող է հանդիսանալ Նոր Զելանդիան, որտեղ բացակայում է պարտադիր բաղադրիչը, մինչդեռ ուշադրությունը ուղղվել է Չիլիին:

Կամավոր կուտակային կենսաթոշակային բաղադրիչ

¹⁵Kulu, Liina and Janno Reiljan (2004) “Old-Age Pension Reform in Estonia on the Basis of the World Bank’s Multi-Pillar Approach” University of Tartu, p.16

¹⁶<http://www.nasdaqomx.am/am/market.htm>
http://www.armstat.am/file/article/sv_09_12a_6300.pdf

¹⁸Larry Willmore (2000) Three Pillars of Pensions? A Proposal to End Mandatory Contributions, DESA Discussion Paper No. 13, United Nations

Կամավոր կուրակային կենսաթոշակային սխեմաներ կարող են առաջարկել կենսաթոշակային ֆոնդերը, բանկերը և ապահովագրական ընկերությունները կենսաթոշակների, կուրակային կենսաթոշակային ավանդների կամ վճարների տեսքով: Այս բաղադրիչի մասնակից կարող են դառնալ անհատները և ձեռնարկությունները, որոնք ստանում են հարկային արտոնություններ, ընդ որում ֆիզիկական և իրավաբանական անձինք միաժամանակ մի քանի սխեմաների կարող են մասնակցել: ՀՀ կառավարությունը 2011թ. հուլիսի 28-ի որոշմամբ ամրագրել է կամավոր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների ֆինանսական գործիքներում ներդրման քանակական և արժույթային սահմանափակումները: ՀՀ ԿԲ խորհուրդը սահմանել է կամավոր կուրակային կենսաթոշակային ավանդի պայմանագրին ներկայացվող պարտադիր պահանջները: 2012թ-ին «Կապիտալ Ինվեսթմենթս» ՓԲԸ-ն (նախկինում «Կապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ) ՀՀ ԿԲ-ի կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի լիցենզիա է ստացել: Ֆոնդի կանոնադրության հաստատումից հետո 2013թ-ին առաջարկելու է սխեմաներ: 2012թ-ի «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն առաջարկում է կուրակային կենսաթոշակային ավանդ: Հաշվի առնելով ներկայիս բարձր ժամկետային ավանդների փոկոսադրույթները և պետական պարտավորումների եկամտաբերությունը՝ ավելի արդյունավետ կլինի անհատին տնօրինել իր եկամուտները առաջիկա 5-7 տարիների ընթացքում: Հետևաբար՝ մասնակցությունը այս կենսաթոշակային սխեմաներին կլինի սահմանափակ: Էստոնիայում, որտեղ կամավոր բաղադրիչը գործում է 1998թ-ից, մասնակցությունը տարբեր կենսաթոշակային սխեմաներին սահմանափակ է եղել (2011թ. մայիսի 9-ի դրությամբ ՀՆԱ-ի 0.6%), 2011թ-ին օրենսդրական փոփոխություններ իրականացվեցին, հարկային արտոնություններ տրամադրվեցին 2012թ-ից մասնակցությունն այս բաղադրիչին ընդլայնելու նպատակով¹⁹:

Եզրակացություն

Պարտադիր բաղադրիչը հնարավորություն կտա ավելի բարձր կենսաթոշակ կուրակել ֆորմալ զբաղվածների համար: Կամավոր բաղադրիչը կարող է ավելացնել կենսաթոշակային խնայողությունները ֆորմալ և ոչ ֆորմալ զբաղվածների համար: Սակայն համեմատաբար ցածր եկամուտներ ունեցողները կունենան ցածր կենսաթոշակային խնայողություններ, մինչդեռ նախքան կենսաթոշակի անցնելը պետք է կրճատեն ընթացիկ սպառումը, որը շատ չի տարբերվի նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից: Երկրում խնայողությունների խթանումը կարող է չհանգեցնել արժեթղթերի շուկայի արագ զարգացման, ինչպես նաև միջնաժամկետ հատվածում տնտեսական զարգացման: Կամավոր կուրակային բաղադրիչն ունի այլընտրանք, իսկ պարտադիր կուրակային բաղադրիչը ոչ մի այլընտրանք չունի: Սակայն մի բան պարզ է, որ այն միջոցների եկամտաբերությունը, որոնք փայտի տեսքով կհայտնվեն կենսաթոշակային ֆոնդերի մոտ, առնվազն 3 տարի ավելի քիչ եկամտաբերություն կունենան՝ բանկային ավանդի համեմատ: Մյուս կողմից՝ տարեցտարի պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մոտ ակտիվների ծավալների աճը կարող է հանգեցնել փոկոսադրույթների իջեցմանը, սակայն ներդնելու սահմանափակ հնարավորությունները կարող է չապահովեն այն եկամտաբերությունը, որն անհատը կկարողանար ապահովել ինքնուրույն կառավարելով իր կողմից կուրակվող միջոցները՝ հաշվի առնելով գնաճը:

¹⁹ASISP (2011) Annual National Report 2011: Pensions, Health Care and Long-term Care, p11

